

ՎԱՐԴԱՆ ՂԱՆԴԻԼՅԱՆ
ՊԵՏՐՈՍ ԶՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
ՇԱՐԵ ՎՐԴ. ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

Հանրակրթական դպրոցի
7-րդ դասարանի դասագիրք

ԵՐԵՎԱՆ



2013

ՀՏԳ- 373. 167.1:27 (075.3)

ԳՄԴ- 86.3 ց72

Հ 282

Ռասագրքի խմբագրական և հեղինակային կազմը

Խմբագիրներ՝

Պ.Յ.Յոսիաննիսյան. *պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր*
Աբրահամ Եպիսկոպոս Մկրտչյան. *Վայոց ձորի թեմի առաջնորդ,*
պատմական գիտ. թեկնածու

Վ. Ս. Ղանդիլյան. *պատմաբան*
Վարդան վարդապետ Նավասարդյան
Շահե վարդապետ Անանյան

Չեղինակներ՝

Ա. Վ. Քոսյան. *պատմական գիտությունների դոկտոր*

Վ. Ռ. Պարսամյան. *պատմաբան, պատմության ուսուցիչ*

Ա. Վ. Գյուլբուղադյան. *պատմաբան, պատմության ուսուցիչ*

Վ. Ս. Ղանդիլյան. *պատմաբան*

Ռասագրքի ստեղծմանը մասնակցել և մեթոդական համակարգը (§ 1-7) մշակել է

Ա. Խ. Սարգսյանը. *պատմաբան, պատմության ուսուցիչ*

Հայոց եկեղեցու պատմություն: Հանրակրթ. դպր. 7-րդ դաս. դասագիրք/
Հ 282 Վ.Ղանդիլյան և ուրիշներ.-Եր.: Տիգրան Մեծ, 2013.-112 էջ:


ՀՏԳ- 373. 167.1:27 (075.3)

ԳՄԴ- 86.3 ց72

ISBN 978-99941-0-554-0

© Հեղինակային կազմ, 2013

© «Տիգրան Մեծ», 2013



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ աշակերտներ

V և VI դասարաններում դուք արդեն ծանոթացել եք Սուրբ Գրքին՝ Աստվածաշնչին, քրիստոնեության հիմնական ուղղություններին, Հայոց եկեղեցու կառույցին, խորհուրդներին և տոներին:

Դուք իմացաք, որ Հայ առաքելական եկեղեցին Արևելյան ուղղափառ եկեղեցիների միասնական ընտանիքի անբաժան մասն է, հիմնադրվել է դեռևս Ք.հ. I դարում՝ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների կողմից, ինչով և բացատրվում է նրա անվանումը՝ **Հայ առաքելական եկեղեցի**: Առաքյալներն իրենց քարոզչության ընթացքում Հայաստանի տարբեր մասերում հիմնեցին համայնքներ, ձեռնադրեցին եպիսկոպոսներ: Դուք նաև իմացաք, որ ավելի քան 1700 տարի առաջ՝ 301 թվականին, մեր ժողովուրդն առաջինը պետականորեն ընդունեց քրիստոնեությունը:

Այդ ամենը, սակայն, «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի առաջին աստիճանն է, այն հիմքը, որն իր շարունակությունը պետք է ունենա հաջորդ դասարաններում:



VII դասարանում ձեզ ներկայացվելու է հայոց հին հավատալիքների և շրջակա երկրների մինչքրիստոնեական կրոնների, քրիստոնեության տարածման, Հայաստանում քրիստոնեության՝ պետական կրոն հռչակման, Հայոց եկեղեցու կառույցի ձևավորման ու ամրապնդման, պետության և եկեղեցու միջև եղած հարաբերությունների, տիեզերական ժողովների, քրիստոնեական այլ եկեղեցիների հետ Հայոց եկեղեցու հարաբերությունների պատմությունը:

Հաջորդ տարվա դասընթացից դուք կիմանաք, թե ինչպիսի պատմական ընթացք է ապրել Հայոց եկեղեցին հետագա դարերում՝ Բազրատունյաց թագավորության օրոք, Կիլիկյան Հայաստանում և ուշ միջնադարում, երբ Հայոց թագավորությունն այլևս գոյություն չուներ: Հայոց եկեղեցու վերջին երկու դարերի պատմությանը դուք կծանոթանաք IX դասարանում:

Դասագրքի հեղինակները համոզված են, որ ուսումնասիրելով Հայոց եկեղեցու պատմությունը՝ դուք խոր հարգանքի ու հպարտության զգացումով կլցվեք հարազատ եկեղեցու, ժողովրդի ու հայրենիքի հանդեպ: Դուք ինքներդ ձեզ համար կբացահայտեք, որ Հայոց եկեղեցին համազգային այն կառույցն է, որ մշտապես իր ժողովրդի խորհրդատուն, ուսուցանողն ու բարոյական նեցուկն է եղել, կանգնած է եղել հայրենի պետության կողքին: Իսկ անկախ պետականության բացակայության պայմաններում ինքն է դարձել ամբողջ հայությանը համախմբող և կազմակերպող ուժը, գիր ու գրչության, հայոց մերօրյա մշակույթի հիմնական կերտողը, հայոց անկախ պետականության ջահակիրը: Դա կօգնի ձեզ իր պատմական առաքելության մեջ ճանաչելու մեր ազգային ու հոգևոր այս եզակի կառույցը:

Հեղինակներ



1. ՀԻՆ ՀԱՅՈՑ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԸ

Բնության երևույթների պաշտամունքը



Այծի արծանիկ.
Ք.ա. XIII դար


Ինչպես աշխարհի շատ ժողովուրդներ, այնպես էլ հին հայերը հեթանոս էին: Նրանք երկրպագում էին բնության երևույթները, ջուրը, կրակը, երկնային լուսատուները, կենդանական և բուսական աշխարհը, լեռները և այլն:

Արևը պատկերվում էր որպես կտուցին օղ բռնած թռչուն: Փոթորիկը նույնացվում էր աշխարհակործան վիշապի հետ:

Հին հայերի կարծիքով, գոյություն ունեին **բարի և չար ոգիներ**: Դրանք պատկերվում էին կենդանիների, բույսերի կամ մարդու տեսքով: Բարի ոգիներից կարևոր դեր ուներ տան հովանավոր ոգին՝ **բախտը**, որը պատկերվում էր մարդու կամ օձի տեսքով:

Հիվանդությունների, խավարի, մահվան և այլ չար ազդեցություն ունեցող ոգիները կոչվում էին **չարք, դևք**: Այս բառից է ծագում **դիվահար** բառը, որը

նշանակում է դևից խփված, այսինքն՝ խելագար:



Ժայռապատկեր Ուղտասարից. Ք.ա. IV հազարամյակ



Ուրարտական որմնանկար

Տոտեմիզմ

Հեթանոսական դարաշրջանի հայերի հավատալիքներում կարևոր տեղ ունեին **տոտեմիզմը**, այսինքն՝ կենդանու կամ բույսի պաշտամունքը: Հին հայերը ենթադրում էին, որ բնության առարկաները ինչ-որ ժամանակ եղել են մարդիկ, հետևաբար վերջիններս ազգակից էին կենդանական և բուսական աշխարհին: Մի առասպելի համաձայն՝ լեռները նախապես եղել են հսկա մարդիկ, որոնք ընթուստացել են աստծու դեմ: Աստված պատժել է նրանց քարացնելով: Հին հայերը հավատում էին, որ յուրաքանչյուր մարդ ունի իր հովանավոր աստղը: Եվ եթե այդ աստղը խամրի, ապա մարդուն վտանգ կսպառնա: Կարգազանցության պատճառով նրանք կերպարանափոխվել են: Հայոց առասպելական գրույցներում մարդիկ կարող էին վերափոխվել նաև կենդանիների և այլն:

Աշխարհաստեղծման հայոց առասպելը

Հեթանոս հայերի կարծիքով՝ աշխարհը բաղկացած էր երեք մասից՝ **Երկինք, Երկիր և Ծով**: Այս ամբողջը պատկերվում էր հետևյալ ձևով. ծովի մեջտեղից, որը մարմնավորում էր Անդունդը կամ աշխարհի կենտրոնը, բարձրանում էր մի սար (կամ ծառ): Այս սարը միմյանց էր կապում աշխարհի երեք մասերը: Ըստ հայոց հավատալիքների՝ **Մշո դաշտում** գտնվող **Քարբե լեռը** (երբեմն՝ նաև Մասիսը) հենց այդ սարի դերն էր կատարում: Այս վայրերում են կառուցվել կարևոր սրբատեղիները, օրինակ՝ Աստղիկ աստվածուհուն նվիրված նշանավոր **Աշտիշատի տաճարը**, իսկ հետագայում՝ **Ս. Կարապետի վանքը**: Ենթադրում էին, որ Ս. Կարապետի վանքը գտնվում է Անդունդի և Երկրի միացման տեղում:



Հայոց աստվածություն. բարձրաքանդակ Արծկեից, Ք.ա. IX դար



Հեթանոսական դարաշրջանի առասպելները

Հեթանոսական Հայաստանում ձևավորվեցին մի շարք առասպելական պատմություններ: Դրանց բնորոշ առանձնահատկությունն այն էր, որ աստվածների կերպարները ներկայացվում էին որպես իրական պատմական անձինք: Այդ առասպելները պահպանվել են Պատմահայր **Մովսես Խորենացու «Հայոց պատմությունում»**: Հայոց նախահայր **Հայկը** և նրա սերունդները՝ **Արամը**, **Արա Գեղեցիկը** և մյուսները, հանդես են գալիս որպես հայոց վաղ պետականության կերտողներ: Իսկ նրանց հակառակորդները՝ **Բաբելոնի արքա Բելը**, **Ասորեստանի թագուհի Շամիրամը** և **Մարաստանի արքա Աժդահակը** մարմնավորում են չար ուժերը:

Արա Գեղեցիկի կերպարով հանդես է գալիս հին աշխարհի շատ ժողովուրդների մեջ տարածված մեռնող և հարություն առնող աստծու պաշտամունքը: Այն մարմնավորում էր բնության ստեղծարար ուժը:



Հայկը առյուծի վրա.
որմանակար Էրեբունի-Երևանից

Հայոց հեթանոսական դիցարանը

Հայկական լեռնաշխարհի արևմուտքը հայոց հնագույն պետականության բնօրրաններից մեկն էր: **Բարձր Հայքում** և դրա մոտակայքում էին սփռված հայոց հեթանոսական դիցարանի աստվածների պաշտամունքի կենտրոնները: **Դարանադյաց գավառի Անի քաղաք-ամրոցում** էր գտնվում հայոց հեթանոսական դիցարանի գերագույն աստծու՝ Արամազդի տաճարը: Հայոց արքաների տոհմական դամբարանը նույնպես Անիում էր: Մոտակայքում էին գտնվում **Անահիտի**, **Միհրի**, **Նանեի** և այլոց տաճարները:



Անահիտ աստվածուհի, Բրիտանական թանգարան



Թեյշեբա աստծու
արձանիկը.
Կարմիր բլուր

Վանի թագավորության դիցարանը

Ք.ա. IX դարի կեսերին կազմավորվեց **Վանի կամ Արատյան թագավորությունը** (Ուրարտու), որն աստիճանաբար միավորեց Հայկական լեռնաշխարհի մեծ մասը: Վան քաղաքի միջնաբերդում գտնվող **Մհերի դուռ** կոչվող ժայռի վրա **Իշպուհինի արքան** փորագրել տվեց իր տերության բոլոր աստվածների անունները:

Վանի թագավորության գերագույն աստվածը **Խալդին** էր: Նա արքայի անձի հովանավոր աստվածն էր: Խալդին էր առաջնորդում արքայական զորքին հաղթական արշավանքներում: Մեծ ժողովրդականություն էին վայելում պատերազմի աստված **Թեյշեբան** և նրա կինը՝ **Խուրթա** աստվածուհին: Արևի աստվածն էր **Շիվինին**:

Վանի թագավորության անկումից հետո այս աստվածների անունները մոռացվեցին:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշեցրեք

1. Բնության ի՞նչ երևույթների էին երկրպագում հեթանոս հայերը:
2. Հին հայերի պատկերացմամբ՝ որո՞նք էին բարի ոգիները:
3. Ինչպե՞ս էին կոչվում չար ոգիները:
4. Ի՞նչ է տոտեմիզմը:
5. Հեթանոս հայերի կարծիքով, քանի՞ մասից էր բաղկացած աշխարհը: Հայաստանի ո՞ր լեռներն էին մարմնավորում աշխարհի կենտրոնը:
6. Որո՞նք էին Վանի թագավորության գլխավոր աստվածները:
7. Ո՞րն է հայոց հեթանոսական առասպելների առանձնահատկությունը: Ո՞ւմ աշխատության մեջ են պահպանվել այդ առասպելները:
8. Որտե՞ղ էր գտնվում Արամազդին նվիրված տաճարը:
9. Հայոց հեթանոսական դիցարանի ի՞նչ աստվածներ գիտեք:



բ) Հարստացնենք մեր բառապաշարը

Հեթանոս
Բարի և չար ոգիներ
Բախտ
Դիվահար
Տոտեմիզմ
Անդունդ
Միերի դուռ

Լրացուցիչ նյութ

Հայոց դիցարանի աստվածները

- Արամազդ** – Հայոց գերագույն աստված
Անահիտ – մայր-աստվածուհի, բերրիության
 խորհրդանիշ
Միհր – երկնային լույսի և արևի աստված
 (Արամազդի որդին)
Վահագն – ամպրոպի և կայծակի աստված
Նանե – ռազմի աստվածուհի (Արամազդի
 դուստրը)
Տիր – դպրության, իմաստության և գուշա-
 կության աստված
Աստղիկ – գեղեցկության և սիրո աստվածուհի
Ամանոր և Վանատուր – Նոր տարվա, հյուրընկա-
 լության և հյուրասիրու-
 քյան աստվածներ





2. ՀԻՆ ՀՆԴԱՎԱԿԱՆ ԵՎ ՋՐԱԴԱՇՏԱԿԱՆ ԿՐՈՆՆԵՐԸ

Աշխարհի ստեղծման հին հնդկական առասպելը



Բուդդա

Հին հնդիկներն իրենց պատկերացումներն ունեին աշխարհի, իրերի և երևույթների ստեղծման մասին: Դրանց վերաբերյալ տեղեկությունները պահպանվել են հնդկական ամենավաղ գրական ստեղծագործության մեջ՝ «Վեդաներում» (վեդա նշանակում է գիտելիք):

Ըստ Վեդաների՝ աշխարհն ստեղծվել է ջրից և ոսկե ձվից: Ոսկե ձվից էր ծնվել նաև ամեն բանի արարիչ Բրահման: Ամենասկզբում նա ծուն երկու մասի բաժանեց՝ ստեղծելով երկինքն ու երկիրը:

Հին հնդկական առասպելում նշված է, որ աշխարհն արարելուց հետո Բրահման ստեղծեց նաև աստվածներին ու մարդկանց: Աստվածներն ապրում էին **Հիմալայան լեռներում**:

Հնդիկների գլխավոր աստվածը **Ինդրան** էր: Նա ամպրոպի և բերրիության աստվածն էր:

Ժողովրդական ավանդությունն այսպես է ներկայացնում բուդդայականության ծագումը: Ք.ա. VI դարում Հնդկաստանի հյուսիսում ապրում էր մի արքայազն: Նա իր ամբողջ ժամանակը տրամադրում էր աշխարհը, կյանքը հասկանալուն, փորձում էր գտնել արդարությանը հասնելու ճանապարհը: 29 տարեկան հասակում նա հեռացավ պալատից և սկսեց ճանապարհորդել: Նա բնակություն հաստատեց անապատում, որտեղ երկար տարիներ ապրելուց հետո՝ գտավ իրեն հուզող հարցերի պատասխանը: Այդ օրվանից նա ստացավ **Բուդդա** անունը, որ նշանակում է **պայծառատես, ճշմարտությունը գտած**:

Բուդդան քարոզում էր, որ բոլոր մարդիկ, անկախ իրենց ծագումից և ունեցվածքից, հավասար են: Ամենամեծ առաքինությունը նա համարում էր որևէ ցանկությունից հրաժարվելը:



Վիշնու աստված, Հնդկաստան, Ք.ա. V դար



Բուդդայի ուսմունքը հետագայում տարածվեց ողջ Հնդկաստանում և այսօր էլ Հնդկաստանի հիմնական կրոններից մեկն է:

Աշխարհի ստեղծման զրադաշտական առասպելը

Մինչնուսուլմանական պարսկական կրոնն անվանվում էր զրադաշտականություն: Ըստ հին պարսկական առասպելի՝ աշխարհն ուներ ձվի տեսք, որտեղ երկիրը դեղնուցն էր, իսկ երկինքը՝ կեղևը: Աշխարհը ստեղծել էր զրադաշտական դիցարանի գերագույն աստվածը՝ **Ահուրամազդան**:

Ահուրամազդան պատկերացվել է կրակի տեսքով: Նա «սուրբ կամ բարի ոգու» հայրն էր: Նա է գլխավորել պայքարը չարի դեմ, եղել **Ջրադաշտի** ուսուցիչը: Ահուրամազդան Ջրադաշտին ընտրել է որպես միջնորդ երկնքի և երկրի միջև:

Չար ուժերի ստեղծողը և հովանավորը **Ահրիմանն** էր: Նա է ստեղծել օձերին, կարիճներին, հրեշներին և այլ անմաքուր էակներին:

Աշխարհի ստեղծումից անմիջապես հետո այն բաժանվել է երկու մասի՝ լույսի արքայության՝ երկնքում ապրող Ահուրամազդայի և խավարի թագավորության՝ դժոխքում ապրող Ահրիմանի գլխավորությամբ:

Այնուհետև Ահուրամազդայի և Ահրիմանի, այսինքն՝ բարու և չարի միջև պայքար է սկսվել հանուն իշխանության:



Ջրադաշտ մարգարե, որմնաքանդակ Պերսեպոլիսից , Ք.ա. 500 թ.



Այդ պայքարի ժամանակ Ջրադաշտը ստանում է նյութական կերպարանք: Նա ժամանակ առ ժամանակ վերածնվում է, որպեսզի պայքարի չարի դեմ: Վերջում բարին հաղթում է չարին, Ահուրանազդան ոչնչացնում է Ահրիմանին: Ահուրանազդան մեղավորներին դատապարտելու է հավերժական տանջանքների դժոխքում, իսկ արդարները պիտի հասնեն երանության:

Ջրադաշտի առաքելությունը

Ջրադաշտը մարգարե էր, որը ծնվել էր Իրանի արևելքում:

Ջրադաշտի առաքելության նպատակն էր սատարել երկրում բարու հաղթանակին: Նրա քարոզներում իշխում էր հետևյալ գաղափարը. բարու և չարի պայքարում արդարությունը կարող էր հաղթանակել միայն մարդու աջակցությամբ:

Իր քարոզների համար Ջրադաշտը հալածվել է, ապա ապաստան գտել **պարսից** արքայի մոտ: Հետագայում նա սպանվել է իր հակառակորդների կողմից:





Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ո՞րն է հնդկական ամենահին գրական ստեղծագործությունը:
2. Ըստ հին հնդկական առասպելի՝ ո՞ր աստվածն է ստեղծել աշխարհը:
3. Որտե՞ղ էին բնակվում հին հնդկական աստվածները:
4. Ինչո՞ւ արքայազնը ստացավ Բուդդա անունը:
5. Ի՞նչ էր սովորեցնում Բուդդան:
6. Ինչպե՞ս էր կոչվում հին պարսկական կրոնը: Ըստ այդ կրոնի՝ ինչի՞ էր նման աշխարհը:
- 7 Ո՞վ էր Ահուրամազդան: Ինչպե՞ս էին նրան պատկերացնում հին պարսիկները:
- 8 Ո՞րն էր Ջրադաշտի առաքելությունը:

բ) Առաջադրանք

Համեմատե՛ք հին հնդկական ու հին պարսկական կրոնները և լրացրե՛ք «Դիագրամը»:

գ) Հարստացնենք մեր բառապաշարը

«Վեդա»
 Բրահմա
 Բուդդա
 Ջրադաշտականություն
 Ահուրամազդա
 Ջրադաշտ
 Աիրիման
 Վշտասպ



3. ՀՈՒՆԱ-ՀՈՈՍԵԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆԸ ԵՎ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԿՐՈՆԸ



Կարիատիդ.
արձան-սյունաքար

Հունական դիցարանը

Հին հույները հեթանոսներ էին և պաշտում էին բազմաթիվ աստվածների: Ժամանակի ընթացքում նրանք այդ աստվածների վերաբերյալ գեղեցիկ առասպելական պատմություններ ստեղծեցին: Այդ աստվածներն ապրում էին Հունաստանի Օլիմպոս լեռան վրա: Այստեղից էլ առաջացել է **Օլիմպիական աստվածներ** անվանումը: Աստվածներին գլխավորում էր **Ջևադ**՝ երկնքի և ամպրոպի ամենազոր աստվածը: Մնացած աստվածներն անվերապահորեն ենթարկվում էին նրան: Նրանց մի մասը **Ջևաի** որդիներն ու դուստրերն էին, ինչպես **Աթենասը**, **Արեսը** և **Հելիստոսը**:

Հույները կարծում էին, որ կյանքում ամեն մի երևույթ կախված է աստվածների կամքից: Շատ տաճարներում կային գուլշակներ, որոնց կարելի էր հարցնել անցյալում տեղի ունեցած և ապագայում կատարվելիք իրադարձությունների մասին: Նշանավոր էին **Ջևաի** և **Ապոլլոն** աստծու տաճարների գուլշակները: Այստեղ էին գալիս մարդիկ ոչ միայն Հունաստանից, այլև Հռոմից և Արևելքի երկրներից:

Հռոմեական դիցարանը

Հին հույների նման հռոմեացիներն էլ հեթանոսներ էին և պաշտում էին բազմաթիվ աստվածների: Հռոմեական կրոնը ձևավորվեց տարբեր կրոնների ազդեցության ներքո: Հին Իտալիայում հռոմեացիներից բացի ապրում էին նաև բազմաթիվ այլ ժողովուրդներ: Հատկապես ուժեղ էր Իտալիայի հնագույն ժողովուրդներից **Էտրուսկների** դիցարանի դերը: Էտրուսկներից հռոմեացիները վերցրին մի քանի աստվածների պաշտամունքը, սակայն հռոմեական աստվածների մեծ մասը նույ-



Աթենաս աստվածուհին




նացվում էր հունական համապատասխան աստվածների հետ, այսպես՝ **Յուպիտերը**՝ Ջևահ, **Մարսը**՝ Արեսի, **Վեներան**՝ Ափրոդիտեի և այլն:

Կրոնը հռոմեացիների կյանքում կարևորագույն նշանակություն ուներ: Յուրաքանչյուր հռոմեացի ուներ իր անձնական հովանավոր ոգին, որը կոչվում էր **գենիուս**: Այն հայտնվում էր մարդու ծննդյան պահից և անհետանում նրա մահվան հետ միաժամանակ: Ընտանիքի մահացած անդամները վերածվում էին ոգիների և ապրում էին այնտեղ, որտեղ նրանց թաղել էին: Այդ ոգիների համար մշտապես ուտելիք և ծաղիկներ էին տանում:

Արևելքի ու Արևմուտքի կրոնական միավորումը և հելլենիստական դիցարանը

Ք.ա. 334-330 թթ. Ալեքսանդր Մակեդոնացին նվաճեց Առաջավոր Ասիան: Նրա մահից հետո այստեղ առաջացան մի շարք պետություններ, որոնք կոչվում են **հելլենիստական**: Այստեղ իշխում էին ծագումով հույն արքաները, սակայն բնակչության գերակշիռ մասը կազմում էին արևելյան ժողովուրդները: Ժամանակի ընթացքում հույների և տեղական բնակչության միջև հաստատվեցին բնականոն հարաբերություններ: Աստիճանաբար երկու մշակույթները՝ արևելյանը և հունականը, ձեռք բերեցին բազմաթիվ նմանություններ, միախառնվեցին: Դրա արդյունքում ձևավորվեց նոր՝ հելլենիստական մշակույթ, որն առաջին հերթին իր արտահայտությունը գտավ կրոնի մեջ:



Ալեքսանդր Մակեդոնացի

Հելլենիստական մշակույթը տարածվեց նաև այն երկրներում, որտեղ իշխում էին տեղական ծագում ունեցող արքաները: Այստեղ հունարենին ու հունական մշակույթին տիրապետելը համարվում էր քաղաքակրթության աստիճան:

Մշակութային միախառնումից բացի, տեղական և օտար աստվածները հելլենիստական պետությունների դիցարաններում միավորվեցին մեկ աստվածության անվան ներքո:

Հույների գերագույն աստված Ջևաը վերածվեց հելլենիստական պետությունների արքաների հովանավոր աստծու: Ք.ա. III դարի վերջերին



հելլենիզմը մուտք գործեց նաև Հայաստան, և հայոց թագավորներին հովանավոր գերագույն աստվածը դարձավ Զևս-Արամազդը:

Հելլենիստական դարաշրջանի դիցարաններն ավելի պարզունակ էին: Զևսի, Դիոնիսոսի և որոշ այլ աստվածների պաշտամունքը լայն տարածում ուներ հասարակ ժողովրդի մեջ: Այս աստվածները հավատացյալ մարդկանց համար նախկինի պես երկնքում ապրող անմատչելի աստվածներ չէին: Յուրաքանչյուր մարդ անձնական խնդրանքով կարող էր դիմել նրանց:



Գառնիի հեթանոսական տաճարը

Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ո՞վ էր հունական դիցարանի գերագույն աստվածը:
2. Թվարկե՛ք Զևսի որդիներից և դուստրերից մի քանիսի անունները:
3. Ինչո՞ւ էին հույներն այցելում իրենց աստվածներին:
4. Որո՞նք էին գուլշակության նշանավոր տաճարները Հին Հունաստանում:



6. Հունական ո՞ր աստվածների հետ էին նույնացվում հռոմեական գլխավոր աստվածները:
7. Ի՞նչ է նշանակում գենիուս:
8. Ինչպե՞ս ձևավորվեց հելլենիստական մշակույթը:
9. Որո՞նք էին հելլենիստական Արևելքում առավել տարածված աստվածությունները:
10. Ինչո՞ւ էր հասարակ ժողովրդի մեջ լայն տարածում գտել հելլենիստական դիցարանը:

բ) Քննարկենք

1. Ինչո՞վ էր պայմանավորված հռոմեական դիցարանում օտար ծագում ունեցող աստվածների շատ լինելը:
2. Ինչո՞ւ հելլենիստական մշակույթը տարածվեց նաև այն երկրներում, որոնք չէին նվաճվել Ալեքսանդր Մակեդոնացու կողմից:

գ) Հարստացնենք մեր բառապաշարը

- Օլիմպիական աստվածներ
- Ջևս
- Դիցարան
- Գենիուս
- Երկրպագել
- Հելլենիստական մշակույթ
- Հելլենիզմ





Լրացուցիչ նյութ



Օգոստոս կայսրը

ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՆ I ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

Ք. ա. 30 թ. Հռոմի ապագա կայսր Գայոս Օկտավիանոսը (Օգոստոս) նվաճեց Եգիպտոսը: Այնուհետև Հռոմի տիրապետության տակ ընկան Սիրիան, Պաղեստինը և Փոքր Ասիան:

Երկարատև նվաճողական պատերազմների հետևանքով Հռոմի տնտեսությունն անկում էր ապրում: Այդ էր պատճառը, որ Հռոմի կողմից նվաճված տարածքներից հռոմեական կառավարիչները հավաքում էին անասելի մեծ հարկեր: Դա դժգոհություն էր առաջ բերում:

Հռոմեական մեկ ուրիշ կայսր՝ Տիբերիոսը հասկանում էր, որ հարկերի ավելացումը կարող է քայքայել նվաճված ժողովուրդների տնտեսությունը, առաջ բերել դժգոհություն և ապստամբություններ: Մի առիթով նա ասել է. «Լավ

հովիվը իր ոչխարներին խուզում է, ոչ թե մաշկում»:

Այդ ժամանակաշրջանում Առաջավոր Ասիայի ամենամեծ պետությունը Պարթևստանն էր: Այն բաղկացած էր բազմաթիվ մանր և խոշոր երկրներից, որոնց նկատմամբ պարթև Արշակունյաց արքաների իշխանությունը թույլ էր: Պարթևստանն իր առավելագույն հզորությանը հասավ Վաղարշ I-ի օրոք (51-75): Նա հնազանդեցրեց տոհմային ազնվականությանը: Այնուհետև, համառ ջանքերից հետո, հայերի համաձայնությամբ Հայաստանում հաստատեց Արշակունյաց տոհմի իշխանությունը (66): Վաղարշի կրտսեր եղբայր Տրդատը դարձավ Հայաստանի թագավոր՝ հիմք դնելով հայոց Արշակունիների հարըստությանը: Վաղարշը հրաժարվեց հելլենիստական մշակութային ավանդույթներից: Նա ձգտում էր զարգացնել տեղական՝ իրանական մշակույթը:

Պարթևստանում ամենատարածված կրոնը զրադաշտականությունն էր: Միաժամանակ պարթևները հանդուրժողականություն էին ցուցաբերում նվաճված ժողովուրդների կրոնների նկատմամբ: Վերջիններս շարունակում էին երկրպագել սեփական աստվածներին: Այդ ժողովուրդների հավատալիքների վրա մեծ էր զրադաշտականության ազդեցությունը:



Աղք. Արշակունիների դամբարանի մուտքը



4. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատմական ժամանակաշրջանը



Ներոնի պատկերով հռոմեական մետաղադրամ

Ք.ա. I դարում Հռոմեական կայսրությունը նվաճել էր Արևմտյան Եվրոպայի զգալի մասը, Հյուսիսային Աֆրիկան, Փոքր Ասիան և Մերձավոր Արևելքի մի մասը: Այս հսկայածավալ կայսրությունն ընդգրկում էր տարբեր ժողովուրդների, կրոնների ու հավատալիքների խայտաբղետ մի բազմազանություն: Կայսրությունում տարածված էր հեթանոսությունը: Սակայն մարդկանց գիտակցության մեջ աստիճանաբար թուլանում էր հավատը հեթանոսական աստվածների և կուռքերի նկատմամբ: Կայսրերին դեռևս կենդանության օրոք աստվածացնելը, տարբեր հավատալիքների հակասությունները մարդկանց մեջ թուլացրել էին կրոնական բարոյականության ոգին: Դաժանորեն ճնշվում էին ազատագրական շարժումները: Տիրապետողների ցոփությունն ու շվայտությունը բավարարելու համար անընդհատ ավելացվում էին հարկերն ու տուրքերը: Անհնազանդների և հրամանները չկատարողների նկատմամբ ամենուրեք կիրառվում էին կտտանքների ու պատիժների տարբեր միջոցներ:

Հուսահատված մարդիկ ապաստան էին փնտրում անապատներում, անմարդաբնակ վայրերում: Նման իրավիճակ էր տիրում նաև Հռոմեական կայսրության արևելյան շրջաններում:





Վաղ քրիստոնեական շրջանի հուշատախտակ

Պատմական այսպիսի պայմաններում է սկսվել քրիստոնեական քարոզչությունը: Կարճ ժամանակահատվածում, արդեն Ք.հ. I և II դարերում, քրիստոնեությունը տարածվում է ողջ Հռոմեական կայսրությունում և հարևան երկրներում: Նոր կրոնը քարոզում էր հավատ մեկ և ճշմարիտ Աստծու հանդեպ, մարդկանց և ժողովուրդների հավասարություն, ներողամտություն, սեր և այլն: Հասարակության մեջ ամրացնում էր բարոյական կյանքի հանդեպ զգացումը:

Քրիստոնեական առաջին համայնքները

Հիսուսի և ապա առաքյալների քարոզչության շնորհիվ քրիստոնեական առաջին համայնքներն առաջացան **Պաղեստինում**: Առաջին քրիստոնյաներն՝ իշխանություններից գաղտնի հավաքվում և լսում էին առաքյալների խոսքը, ընթերցում սաղմոսներ և աստվածաշնչյան գրքերից այլ հատվածներ, և բոլորը միասին ճաշակում սիրո սեղանից:

Համայնքների անդամներին միավորում էր նոր հավատը՝ քրիստոնեությունը, և այն համոզումը, որ **Աստծու թագավորության** ստեղծողն ու առաջնորդը՝ Քրիստոս շուտով վերադառնալու է:

Ուստի նրանք պիտի պատրաստ լինեին Քրիստոսի վերադարձին: Փրկչի գալստյան պահին նրանք պիտի քաված լինեին իրենց մեղքերը, միմյանց նկատմամբ լցված լինեին սիրով և եղբայրությամբ: Քրիստոնյաների համար քրիստոնեությունը ոչ միայն հավատ ու նվիրում էր, այլև ապրելաձև:

Բոլոր համայնքները կապված էին միմյանց հետ: Առաքյալներն ու շրջիկ քարոզիչները մշտապես այցելում էին տարբեր համայնքներ, տեղեկանում նրանց կյանքին ու հոգսերին: Քարոզիչները նոր համայնքներ էին կազմակերպում, դրան հավաքում մնացած համայնքների համար: Քրիստոնյաներն ունեին հաղորդակցության և տարբեր վայրերում իրար գտնելու պայմանական նշաններ: Նրանք ոչ միայն հյուրընկալում էին ճամփորդող քրիստոնյաներին, այլ անհրաժեշտության դեպքում նաև օգնում միմյանց:





Քրիստոնեության տարածումը

I դարում **Քրիստոսի**՝ որպես Փրկիչ-Աստծու մասին հավատքը արագորեն տարածվեց Հռոմեական կայսրության արևելյան շրջաններում: Պաղեստինից բացի, քրիստոնեական գաղտնի համայնքներ ստեղծվեցին **Եգիպտոսում, Փոքր Ասիայում**: Իշխանությունները դաժանորեն հետապնդում էին առաջին քրիստոնեական համայնքներին, իսկ քրիստոնյաներին՝ մահապատժի ենթարկում: Չնայած այս ամենին, նոր կրոնն աստիճանաբար թափանցեց կայսրության նաև կենտրոնական և արևմտյան շրջաններ:

Քրիստոնյաների հալածանքները հատկապես սաստկացան III դարում: Հռոմեական որոշ կայսրեր քրիստոնյաներին նույնիսկ հայտարարեցին պետության թշնամիներ: Քրիստոնեական համայնքների մի մասը ոչնչացվեց, իսկ նրանց ունեցվածքը պետականացվեց: Բազմաթիվ քրիստոնյաներ բանտ նետվեցին և մահապատժի ենթարկվեցին:

Սակայն իշխանությունների հալածանքները չթուլացրին քրիստոնեությունը: Ընդհակառակը, շուրջ երեք դար տևած պայքարում քրիստոնեությունն ավելի հզորացավ: Արդեն III դարի վերջերին քրիստոնեության հետևորդների թվում կային շատ ազնվականներ, ունևոր քաղաքացիներ և զինվորականներ:



Դաստառակ.
Հիսուս Քրիստոսի «կենդանագիր պատկերով»





Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ք.ա. I դարի վերջին Հռոմեական կայսրությունում ո՞ր կրոնն էր տարածված:
2. Պատմական ի՞նչ պայմաններում սկսվեց Հիսուս Քրիստոսի քարոզչությունը:
3. Ինչո՞ւ էր քրիստոնեությունն արագորեն տարածվում:
4. Որտե՞ղ ստեղծվեցին առաջին քրիստոնեական համայնքները:
5. Ինչպե՞ս էին հռոմեական կայսրերը պայքարում քրիստոնյաների դեմ:

բ) Քննարկենք

1. Ինչո՞ւ էր հեթանոսությունը Հռոմեական կայսրությունում անկում ապրում: Նշե՛ք դրա պատճառները:
2. Ինչո՞ւ, չնայած իշխանությունների հալածանքներին, քրիստոնեությունը շարունակեց լայնորեն տարածվել և հզորանալ:

գ) Հարստացնենք մեր բառապաշարը

Կուռք
Կտտանք
Քարոզչություն
Առաքյալ
Քրիստոնեություն
Քրիստոնեական համայնք



5. ՔՐԻՍՏՈՆԵՌՈՒԹՅԱՆ ՍՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ: ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐԸ

Հայոց եկեղեցու պատմությունը սկիզբ է առնում Քրիստոսի ժամանակներից կամ, ինչպես ընդունված է ասել, առաքելական քարոզչության տարիներից: Այդ մասին տեղեկություններ են պահպանվել ասորական ու հունական հնագույն սկզբնաղբյուրներում: Դրանք որպես **սրբազան ավանդություն*** տարածվել են նաև հայերի մեջ և բանավոր փոխանցվել սերնդից սերունդ, իսկ V դարում՝ հայոց գրերի գյուտից հետո, գրի առնվել:

Ըստ այդ ավանդության՝ Հայաստանում քրիստոնեությունն առաջին անգամ քարոզել են Հիսուս Քրիստոսի աշակերտներ **Թադեոս*** և **Բարդուղիմեոս*** առաքյալները:



Թադեոս առաքյալի քարոզչությունը Հայաստանում

Հիսուս համբարձվելուց առաջ աշակերտներին պատվիրում է գնալ և տարբեր ազգերի մեջ տարածել իր ուսմունքը: Մյուս առաքյալների նման **Թադեոսը** նույնպես ձեռնամուխ է լինում Ուսուցչի պատգամի իրականացմանը:

Ըստ ավանդության՝ Թադեոսը նախ գնում է Հյուսիսային Միջագետք՝ Եդեսիա* փոքրիկ թագավորություն, որտեղ իշխում էր **Աբգար** թագավորը: Առաքյալը բժշկում է հիվանդ թագավորին, քարոզում Հիսուսի պատվիրանները: Սովսես Խորենացին գրում է, որ Եդեսիայի բնակիչների մեծ մասը, այդ թվում Աբգար թագավորը և պալատականներից շատերը, դառնում են քրիստոնյա:

Եդեսիայում Թադեոսը հիմնում է **եպիսկոպոսական աթոռ**, ձեռնադրում հոգևորականներ:

Այնուհետև նա անցնում է Մեծ Հայքի թագավորություն: Թադեոս առաքյալն առաջինն էր, որ Հայաստան եկավ՝ քարոզելու Քրիստոսի ուսմունքը, և այդ է պատճառով, որ Հայոց հայրապետական աթոռը կոչվում է նաև **Աթոռ Թադեի**:

Առաքյալը շրջում և քարոզում է Հայաստանի տարբեր գավառներում:



Ս. Թադեոս առաքյալ

Նա հատկապես լայն գործունեություն է ծավալում Արտազ գավառում, որտեղ գտնվում էր Հայոց Սանատրուկ թագավորի ամառային նստավայրը: Թադեոսի քարոզների շնորհիվ քրիստոնյա են դառնում Սանդուխտ արքայադուստրը, ազնվականների մի մասը, ինչպես նաև հասարակ մարդիկ:

Սանատրուկ թագավորն ու իշխաններից շատերը թշնամաբար են ընդունում քրիստոնեության տարածումը և հալածանքներ սկսում նորադարձ քրիստոնյաների նկատմամբ: Թագավորի հրամանով բազմաթիվ քրիստոնյաներ բանտարկվում և մահապատժի են ենթարկվում: Սանատրուկը չի խնայում և մահվան է դատապարտում նույնիսկ սեփական դստերը՝ Սանդուխտին:

Որոշ ժամանակ անց զինվորները ձերբակալում և սոսկալի տանջանքների մատնելով մահապատժի են ենթարկում նաև Թադեոս առաքյալին:

Առաքյալի նահատակության վայրում հետագայում կառուցվում է Արտազի Ս. Թադեի վանքը, որն այժմ գտնվում է Իրանի տարածքում:



Ս. Թադեի վանքը



Բարդուղիմեոս առաքյալի քարոզչությունն ու նահատակությունը

Թաղեոս առաքյալի գործունեության տարիներին Հայաստան է գալիս Հիսուսի տասներկու աշակերտներից ևս մեկը՝ **Բարդուղիմեոս** առաքյալը:

Մինչ այդ Բարդուղիմեոսը քարոզել էր Պարսկաստանում, հասել մինչև Հնդկաստան:

Հայաստանում առաքյալի քարոզչության հիմնական վայրերից է դառնում **Սյունյաց** նահանգը: Այստեղ շատերն ընդունում են քրիստոնեություն: Գողթն գավառում նա կառուցում է եկեղեցի, հիմնում **եպիսկոպոսական աթոռ**, եպիսկոպոս ձեռնադրում իր աշակերտներից մեկին:

Ըստ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի՝ մի անգամ Հայաստանի տարբեր գավառներով շրջելիս Արտաշատի մոտ միմյանց են հանդիպում Բարդուղիմեոս և Թաղեոս առաքյալները: **Օբյաց Խաչ** կոչվող վայրում գիշերելուց հետո նրանք կրկին բաժանվում են:

Բարդուղիմեոս առաքյալը քարոզել է նաև **Հեր և Ջարևանդ** գավառներում: Հետևելով առաքյալին՝ քրիստոնյա է դառնում նաև Սանատրուկ թագավորի քույր **Ոգուհին**: Քրիստոնեությունը հալածող թագավորի հրամանով Բարդուղիմեոս առաքյալը, ինչպես նաև Ոգուհին ձերբակալվում և բազմաթիվ չարչարանքներից հետո մահապատժի են ենթարկվում:

Այս երկու առաքյալները դարձան Հայոց եկեղեցու հիմնադիրները: Այդ պատճառով է, որ Հայոց եկեղեցին կոչվում է **առաքելական**:

Ամեն տարի նույնբեր-դեկտեմբեր ամիսներին Հայոց եկեղեցին տոնում է Բարդուղիմեոս և Թաղեոս առաքյալների հիշատակը:



Ս. Բարդուղիմեոս առաքյալը



Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ո՞ր ժամանակներից է սկիզբ առնում Հայոց եկեղեցու պատմությունը:
2. Ովքե՞ր են քրիստոնեությունը քարոզել Հայաստանում:
3. Ի՞նչ հիմնեց Թադեոսը Եդեսիայում:
4. Ո՞ր գավառն է դառնում Թադեոս առաքյալի գործունեության կենտրոնը:
5. Ո՞վ էր Սանդուխտ կույսը:
6. Որտե՞ղ է նահատակվում Թադեոս առաքյալը:
7. Ո՞ր նահանգը դարձավ Բարդուղիմեոսի քարոզչության կենտրոնը:
8. Ո՞ր գավառում Բարդուղիմեոսը հիմնեց եպիսկոպոսական աթոռ:
9. Հայաստանի ո՞ր վայրում հանդիպեցին Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները:
10. Ինչպե՞ս վարվեց Սանատրուկ թագավորն առաքյալների և նրանց հետևավորների հետ:
11. Ի՞նչ արդյունք ունեցավ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությունը Հայաստանում:
12. Հայոց եկեղեցին ե՞րբ է տոնում Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների հիշատակը:

բ) Քննարկենք

1. Ինչպե՞ս եք գնահատում Սանատրուկ թագավորի գործունեությունը:
2. Արդարացվա՞ծ էր արդյոք Սանդուխտ կույսի, Ոգուհու և մյուս քրիստոնյաների անձնագոհությունը:

գ) Հարստացնենք մեր բառապաշարը

Առաքելական եկեղեցի
Աթոռ Թադեի
Եպիսկոպոսական աթոռ

Բառարան

Սրբազան ավանդություն – Քրիստոնեական եկեղեցու սկզբնավորման օրվանից պահպանված ու մեզ փոխանցված բանավոր պատմություն:

Թադեոս – Ավետարանում հիշատակվում է նաև Ղեբեոս անունով:

Բարդուղիմեոս – Ավետարանում հիշատակվում է նաև Նաթանայել անունով:

Եդեսիա – քաղաք Հյուսիսային Միջագետքում:



6. ՔՐԻՍՏՈՆԵՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ I - III դԱՐԵՐՈՒՄ

I-III դարերում Հայաստանը շարունակում էր մնալ պարթևա-հռոմեական պատերազմների թատերաբեմ: Հայ-պարթևական դաշինքի ամրապնդման արդյունքում 66 թ. հայոց թագավոր հռչակվեց Տրդատ I Արշակունին՝ սկիզբ դնելով հայոց Արշակունիների հարստությանը:

Այս ժամանակաշրջանում զարգանում էին երկրի տնտեսությունը, արհեստագործությունն ու առևտուրը: Հիմնադրվում և կառուցվում էին նոր ամրոցներ ու քաղաքներ, որոնցից հատկապես նշանավոր էր Վաղարշ I-ի (117-140) հիմնադրած Վաղարշապատ քաղաքը: II դարի վերջին այն դառնում է Հայաստանի մայրաքաղաքը:

Պատմական զարգացման այս շրջանում Հայաստանի տարբեր գավառներում աստիճանաբար ավելանում էին քրիստոնեական համայնքները: Քրիստոնյա էին դառնում ոչ միայն հասարակ մարդիկ՝ գյուղացիներ, արհեստավորներ, այլև բազմաթիվ իշխաններ ու նախարարներ: Համայնքներն ունեին **հոգևոր առաջնորդներ՝ եպիսկոպոսներ**, որոնք ուսուցանում և մեկնաբանում էին Ավետարանը:



*Սարգիս Պիծակ.
Հովհաննես ավետարանիչ
և Պրոխորոն*

Հայաստանի եպիսկոպոսական աթոռներն ու առաջին եպիսկոպոսները



Դեռևս I դարում Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները Հայաստանի տարբեր գավառներում հիմնել են եպիսկոպոսական աթոռներ և ձեռնադրել եպիսկոպոսներ:

Բարդուղիմեոս առաքյալը Գողթն գավառում տեղի **իշխանի և իշխանուհու խնդրանքով** հիմնադրել է եկեղեցի, իսկ Թադեոս առաքյալը եպիսկոպոսական աթոռ է հիմնել Արտազուն: Նրանք ձեռնադրել են եպիսկոպոսներ՝ իբրև նորաստեղծ քրիստոնյա համայնքների առաջնորդներ:



Արդեն III դարի կեսերին Մեծ Հայքում գոյություն ուներ լավ կազմակերպված և ճանաչում գտած եկեղեցի:

Փոքր Հայքում I-III դարերում նույնպես գործել են բազմաթիվ քրիստոնեական համայնքներ՝ իրենց եպիսկոպոսներով, քահանաներով և սարկավազներով:

Հալածանքներ քրիստոնյաների դեմ

Ինչպես հարևան երկրներում, այնպես էլ Հայաստանում քրիստոնյաները ենթարկվել են խիստ հալածանքների: I-III դարերում Հայաստանում բազմաթիվ քրիստոնյաներ են նահատակվել: Հավատքի պատճառով նահատակվածներին անվանում են **նահատակներ** կամ **վկաներ** (հունարեն՝ **մարտիրոսներ***): Հայոց եկեղեցին իր Տոնացույցում* նահատակվածների՝ մարտիրոսների շատ անուններ ունի:

Քրիստոնյաների հալածանքների վերաբերյալ կան բազմաթիվ պատմական ավանդություններ: Դրանցից է **Ոսկյանք** վկաների ավանդությունը: Թաղետս առաքյալի քարոզչության տարիներին Հռոմի կայսեր կողմից որպես պատգամավորներ Հայաստան են ուղարկվել **հինգ արքայազուն իշխաններ**: Ճանապարհին նրանք հանդիպել են Թաղետս առաքյալին: Լսելով վերջինիս քարոզներն ու տեսնելով գործած հրաշքները՝ նրանք քրիստոնյա են դարձել: Խուճը կոչվել է Ոսկյանք՝ նրանց ղեկավարի անունով: Թաղետս առաքյալի նահատակությունից հետո նրանք առանձնացել են Ծաղկոտն լեռներում և ճգնակյաց* կյանք վարել:



Չեռագիր Ավետարանների պատկերազարդ ցանկ



Ոսկյանց քարոզների շնորհիվ քրիստոնեություն են ընդունել մի խումբ հայ ազնվականներ, որոնք, հեռանալով հայոց թագավորի պալատից, բնակություն են հաստատել լեռներում: Քրիստոնյա դարձած պալատականներն իրենց առաջնորդի անունով կոչվել են **Սուքիասյանք**: Հետագայում Ոսկյանք և Սուքիասյանք նահատակվել են իշխանությունների հալածանքների հետևանքով:



Սալահունյաց գավառի իշխան **Սուրենը**, չկարողանալով համոզել **որդուն**՝ ուրանալ քրիստոնեությունը, հրամայում է սպանել նրան:

Փոքր Հայքում իշխանություններն այնքան քրիստոնյաներ էին բանտարկել, որ բանտերում ոճրագործների համար ազատ տեղ չէր մնացել:

Սակայն այս հալածանքները չկարողացան կասեցնել քրիստոնեության տարածումը Հայաստանում:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ովքե՞ր էին իշխում Հայաստանում I-III դարերում:
2. Հայաստանի ո՞ր գավառներում էին առաքյալները հիմնադրել եպիսկոպոսական աթոռներ:
3. Ինչպե՞ս էին Հայաստանի և հարևան երկրների իշխանությունները վերաբերվում քրիստոնյաներին I-III դարերում:
4. Ովքե՞ր են կոչվում նահատակներ կամ վկաներ:
5. Ովքե՞ր էին Ոսկյանք:
6. Որտե՞ղ էին ապրում Ոսկյանք:
7. Ովքե՞ր էին Սուքիասյանք:
8. Ինչպե՞ս նահատակվեցին Ոսկյանք և Սուքիասյանք:



բ) Քննարկենք

1. Ինչո՞ւ էին առաջին դարերում հալածվում քրիստոնյաները, և ի՞նչն էր պատճառը, որ քրիստոնեական համայնքները գնալով ավելանում էին:
2. Ինչո՞ւ էին ճգնավորները հեռանում անմարդաբնակ վայրեր:

գ) Հարստացնենք մեր բառապաշարը

- Հոգևոր առաջնորդ
- Հիմնել եկեղեցի
- Նահատակ
- Մարտիրոս



Բառարան

- Ճգնավոր** – մենակյաց, անապատական, աշխարհիկ կյանքից ու վայելքներից հրաժարված մարդ:
- Մարտիրոս** – հունարեն նշանակում է վկա: Այսպես են կոչում նրանց, ովքեր նահատակվել են՝ վկայելով իրենց հավատը Քրիստոսի հանդեպ:
- Տոնացույց** – եկեղեցական տոների ժողովածու:

Լրացուցիչ նյութ

Թեոդորոս Սալահուլունի

III դ. վերջերին Սալահուլունյաց գավառում ապրում էր Սուրեն անունով մի իշխան: Նա իր միակ որդուն նվիրել էր Աթենաս աստվածուհուն և նրա անունով տղային կոչել Աթենադորոս (Աթենասին տուրք):

Սալահուլունյաց իշխանուհին՝ Սիրանույշը, անչափ բարի և ազնիվ մի կին էր: Աթենադորոսը պատանի հասակում հիվանդանում է անբուժելի ծանր հիվանդությամբ: Իշխանուհին, հոգ տանելով որդու առողջությանը, Սեղմնուտի ձորակում մի ագարակ է կառուցել տալիս, որն այնտեղ ածող թզենիների պատճառով թզագարակ է կոչվում: Բարեգութ իշխանուհին թզագարակում մի ծերանոց է հիմնում: Ծերանոցում Դասիկ անունով մի քրիստոնյա



քահանա կար: Մյուսների հետ միասին իշխանուհին և Աթենադորոսը և հաճախ էին ունկնդրում ծերունի քահանայի քարոզներն ու խրատները: Շուտով թզագարակում ապաստանած բոլոր մարդիկ քրիստոնյա են դառնում: Դասիկ քահանան Աթենադորոսին մկրտում և վերանվանում է Թեոդորոս, այսինքն՝ Աստվածատուր: Մի քանի տարի Սիրանույշ իշխանուհին և Թեոդորոսը կարողանում են Սուրեն իշխանից ծածուկ պահել իրենց քրիստոնյա լինելը: Սակայն ի վերջո իշխանը տեղեկանում է այդ մասին և ստիպում որդուն հրաժարվել քրիստոնեությունից: Այլ ելք չունենալով՝ Թեոդորոսը փախչում է հայրական տնից և թաքնվում Սեղմնուտի ծորակում:

Ջայրացած հայրը երկար որոնումներից հետո գտնում է Թեոդորոսին: Երբ տեսնում է, որ նա անդրդվելի է, մահվան է դատապարտում մինուճարին:

Թեոդորոսի մարմինն ամփոփում են Սեղմնուտի ծորակում: Հետագայում Գրիգոր Լուսավորչի կարգադրությամբ Թեոդորոսի գերեզմանի վրա մատուռ է կառուցվում: Սիրանույշ իշխանուհին ևս թաղված է որդու շիրիմի մոտ:



Ս. Հակոբ Սճրնեցի եկեղեցին, Սճրին



7. ՔՐԻՍՏՈՆԵՌՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու նախադրյալները

226 թ. Պարսկաստանում տեղի են ունենում քաղաքական մեծ փոփոխություններ: Պարթև Արշակունիները գահընկեց են արվում, և գահ են բարձրանում **Սասանյան հարստության** ներկայացուցիչները: Սասանյանները վաղուց զբաղեցնում էին Պարսկաստանի քրմապետի պաշտոնը և տիրելով գահին՝ նրանք պետական կրոն են հռչակում զրադաշտականությունը:



Տրդատ թագավորը կնոջ՝ Աշխենի, քրոջ՝ Խոսրովիդուխտի հետ աղոթելիս

Այդ իրադարձությունները չէին կարող չանդրադառնալ հայ-պարսկական հարաբերությունների վրա: Պարսկաստանի նախկին դաշնակից Հայաստանը այժմ դառնում է նրա գլխավոր հակառակորդներից մեկը, քանի որ Հայաստանում իշխում էր Արշակունիների հայկական ճյուղը:

Իրադրությունն էլ ավելի է բարդանում որոշ հայ նախարարների երկպառակտչական գործունեության պատճառով:

Երկիրը ծանր վիճակից դուրս բերելու համար անհրաժեշտ էր համախմբել հայ ժողովրդի բոլոր խավերին, նախևառաջ՝ ազնվականությանը: Հեթանոսությունը, դարեր շարունակ իր վրա կրելով հունահռոմեական և պարսկական կրոնների ազդեցությունը, չէր կարող գաղափարական հիմք հանդիսանալ այդ խնդիրը լուծելու համար:

Հայ Արշակունիներն իրենց հայացքն ուղղում են դեպի քրիստոնեությունը, որը III դարի վերջին Հայաստանում արդեն ուներ մեծաքանակ հետևորդներ: Քրիստոնյաները բոլորին զարմացնում էին իրենց **անսասան հավատքով**, նրանք նույնիսկ պատրաստ էին հրաժարվել կյանքից, բայց ոչ հավատքից:

Հռոմեական զորքերի օժանդակությամբ Հայաստանն ազատագրած և 298 թ. վերստին գահ բարձրացած Տրդատ III Մեծը (287-330), ճիշտ գնահատելով ստեղծված իրավիճակը, քիչ անց՝ **301թ.**, **քրիստոնեությունը Հայաստանում հռչակեց պետական կրոն:**



Ս. Գրիգոր Լուսավորիչ: Ս. Հռիփսիմյան կույսերի նահատակությունը

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու վերաբերյալ պատմիչ **Ագաթանգեղոսի** երկում պահպանվել է պատմական հիմք ունեցող մի **ավանդապատում**: Ըստ այդ ավանդության՝ պարսից Արտաշիր արքան հայոց խոսրով II թագավորի դեմ դավադրություն կազմակերպելու նպատակով Հայաստան է ուղարկում պարթև Անակ իշխանին: Որսի ժամանակ Անակին հաջողվում է մահացու վիրավորել խոսրով թագավորին: Սակայն դավադրությունը բացահայտվում է, և հայ իշխանները սրի են քաշում Անակի ողջ ընտանիքը: Փրկվում է միայն նրա մանկահասակ որդին՝ **Սուրենը**, որին դայակը կարողանում է փախցնել Կեսարիա: Այնտեղ նա մանկանը հանձնում է քրիստոնյա դաստիարակների խնամքին, որոնք նրան մկրտում և **վերանվանում են Գրիգոր**:

Խոսրով II Արշակունու մահից հետո պարսից թագավորը հարձակվում է Հայաստանի վրա և գրավում այն: Թագաժառանգ **Տրդատին** փախցնում են Հռոմ: Տրդատը մեծանում ու դաստիարակվում է հռոմեական արքունիքում: Այնտեղ նա փայլուն զինվորական կրթություն է ստանում և ձեռնամուխ լինում Հայաստանի ազատագրմանը:



Զվարթնոցի տաճարը, VII դար: Ըստ Սեբեոսի՝ 301 թ. այստեղ են հանդիպել Ս. Տրդատ III թագավորը և Ս. Գրիգոր Լուսավորիչը



287 թ. Տրդատը հռոմեական բանակների ուղեկցությամբ վերադառնում է հայրենիք: Ճանապարհին՝ Կեսարիայում, նա ծանոթանում է Գրիգորի հետ և հիանալով նրա իմաստությամբ՝ նրան նշանակում է արքունի քարտուղար: Տրդատին միանում են բազմաթիվ հայկական զինված ջոկատներ: Հայ-հռոմեական միացյալ ուժերը մի շարք հաղթանակներ են տանում պարսիկների դեմ: Ի նշան տարած հաղթանակների՝ Տրդատը Եկեղյաց գավառի Երիզա ավանում մեծ հանդիսություններ է կազմակերպում: Ամբողջ գորքն ու արքային ուղեկցող շքախումբը ծաղկեպսակներ և զոհեր են մատուցում Անահիտ դիցուհուն: Միայն քրիստոնյա Գրիգորը հրաժարվում է հեթանոս աստվածուհուն զոհեր մատուցելուց: Արքային վշտացնում է իր սիրելի քարտուղարի արարքը: Նա տարբեր միջոցներով փորձում է «դարձի բերել» Գրիգորին: Բայց վերջինս մնում է անդրդվելի: Արքան հրամայում է ծանր տանջանքների ենթարկել նրան: Շուտով Տրդատին հայտնի է դառնում, որ Գրիգորը դավադիր Անակ Պարթևի որդին է: Ջայրացած արքան հրամայում է նրան նետել մահապարտների համար Արտաշատում կառուցված **Խոր Վիրապ բանտը**: Ըստ Ազաթանգեղոսի պատմության՝ Գրիգորը Խոր Վիրապում մնում է տասներեք տարի:



*Ս. Ալթունյան.
Ս. Գրիգոր Լուսավորիչը
Խոր Վիրապի բանտում*

Նույն ավանդությունը պատմում է, որ այդ տարիներին **մի քանի տասնյակ քրիստոնյա կույսեր**, Հռոմի Դիոկղետիանոս կայսեր հալածանքներից փախչելով, գալիս են Հայաստան:



Խոր Վիրապի Ս. Աստվածածին եկեղեցին

Նրանք բնակություն են հաստատում Վաղարշապատ մայրաքաղաքի մոտ գտնվող հնձաններում*:

Կույսերից մեկը՝ **Հռիփսիմեն**, աննկարագրելի գեղեցկություն ուներ: Տրդատ թագավորը, գերվելով Հռիփսիմեի գեղեցկությամբ, ցանկանում է ամուսնանալ նրա



հետ: Սակայն Չռիփսիմեն մերժում է արքայի առաջարկը: Չանազան խոստումներով և ընծաներով Տրդատը փորձում է հրապուրել նրան, բայց երբ Չռիփսիմեն մնում է անդդովելի, հրամայում է սպանել նրան և մյուս կույսերին:

Ազաթանգեղոսի վկայությամբ՝ Չռիփսիմյան կույսերի նահատակությունից հետո Տրդատը ծանր հիվանդանում է: Բազմաթիվ միջոցներ են գործադրվում, բայց արքան չի ապաքինվում:

Թագավորի քույր **Խոսրովիդուխտը** երազ է տեսնում, որ արքային կարող է բուժել միայն Խոր Վիրապում բանտարկված Գրիգորը: Արքայադստեր երազը թերահավատությամբ է ընդունվում արքունիքում: Ոչ ոք չէր հավատում, թե Գրիգորը կարող էր ողջ լինել: Խոսրովիդուխտի պնդմամբ իշխանները մեկնում են Խոր Վիրապ:

Բոլորը զարմանում են տեսնելով, որ Գրիգորը ողջ էր: Ազատվելով բանտարկությունից՝ նա մեծ հանդիսավորությամբ մուտք է գործում մայրաքաղաք: Արքան զղջում է իր կատարած դաժանությունների համար, և **Գրիգորը բուժում է նրան**: Տրդատը դադարեցնում է քրիստոնյաների հալածանքները:

Չրաժարվելով հեթանոսությունից՝ Տրդատ III Մեծը 301 թվականին քրիստոնեությունը հռչակում է պետական կրոն: Այսպիսով՝ Չայաստանը դառնում է աշխարհում առաջին քրիստոնյա պետությունը:

Ս. Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ Մեծը Վաղարշապատում Չռիփսիմյան կույսերի նահատակության վայրում, կառուցում են վկայարաններ* և այնտեղ ամփոփում նրանց նշխարները: Այդ վկայարանների վրա VII դարում կառուցվեցին եկեղեցիներ: Կառուցված երեք եկեղեցիներից մեկը կոչվեց Ս. Չռիփսիմե, մյուսը՝ Ս. Գայանե, իսկ երրորդը՝ Ս. Շողակաթ* անունով:



Ս. Տրդատ III, Ս. Գրիգոր Լուսավորիչ և Ս. Չռիփսիմե. Մայր Աթոռի թանգարանում պահվող ամենահին ասեղնագործ պատկերը (1436 թ.)



Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ի՞նչ կարևոր իրադարձություններ տեղի ունեցան Պարսկաստանում III դ. սկզբին: Այդ իրադարձություններն ինչպե՞ս անդրադարձան Հայաստանի վրա:
2. Ի՞նչ էր անհրաժեշտ երկրի պառակտված ուժերը համախմբելու համար:
3. Ինչո՞վ էին աչքի ընկնում քրիստոնյաները:
4. Ո՞ւմ դեմ դավադրություն կազմակերպեց պարսից Արտաշիր արքան:
5. Ո՞վ էր Գրիգորը:
6. Ինչպե՞ս պատժեց Տրդատ արքան Գրիգորին:
7. Ովքե՞ր էին Հռիփսիմյան կույսերը:
8. Ինչո՞ւ արքան հրամայեց սպանել Հռիփսիմեին և մյուս կույսերին:
9. Ի՞նչ պատահեց Տրդատ արքային դրանից հետո:
10. Ըստ ավանդության՝ ո՞վ բուժեց հայոց արքային:
11. Փոխվե՞ց արդյոք Տրդատի վերաբերմունքը քրիստոնյաների հանդեպ:
12. Քրիստոնեությունը ե՞րբ հռչակվեց որպես Հայաստանի պետական կրոն:

բ) Քննարկենք

Ո՞րն էր քրիստոնեության առավելությունը հեթանոսության նկատմամբ:

գ) Հարստացնենք մեր բառապաշարը

Քրմապետ
 Սասանյան Պարսկաստան
 Երկպառակտություն
 Արքունի քարտուղար
 Դարձի բերել

Բառարան

Վկայարան – վկաների նահատակման, թաղման տեղում կամ մասունքների վրա կառուցված շինություն:

Ս. Շողակաթ – անունը վերցված է Գրիգոր Լուսավորչի տեսիլքից և նշանակում է լույսի շող կաթեց երկնքից:

Հնձան – գինի պատրաստելու համար նախատեսված տնակ:



Լրացուցիչ նյութ

Տրդատ թագավորի սուրը

Ճգնության մեջ հոգին ավանդած Ս.Գրիգոր Լուսավորչին գտնում են Մանյա քարայրի մոտ՝ գիհի ծառի փչակում: Տրդատ թագավորը նրա գերեզմանի կառուցման համար տալիս է իր համար շատ թանկագին սուրը, որը ստացել էր Կոստանդիանոս կայսրից: Այդ սուրը կոչվում էր «հավլունի»:

Տրդատ արքայի սրից խաչ են պատրաստում, որի վրա գրում են.

«Սպանման գործի արքայական այս զենքը Կյանքի Արքայի՝ Քրիստոսի խաչին նվիրյալ լինի, որով մեզ փրկեց հավիտենական մահից»:

Ղևոնդ Ալիշան, Արշալույս քրիստոնեության հայոց





8. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԸ՝ ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ՀԱՅՐԱԴԵՏ

Ս. Գրիգոր Լուսավորչի ծեռնադրությունն ու գահակալությունը



Ս. Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատ III-ին (մանրանկար)

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո Տրդատ III Մեծը Գրիգորին մեծ շքախմբով ուղարկում է Կապադովկիայի Կեսարիա քաղաքը, որտեղ նա ծեռնադրվում է եպիսկոպոս: Հայաստան վերադառնալուց հետո Գրիգորը ստանձնում է Հայոց եկեղեցու հովվապետությունը (301-325): Վերադարձին Ս. Գրիգոր Լուսավորիչը կանգ է առնում Աշտիշատում, որտեղ հնուց կար եպիսկոպոսական աթոռ: Այստեղ նա հիմնում է **Ս. Երրորդություն** անունը կրող եկեղեցի, կանգնեցնում սուրբ սեղան և մկրտության ավազան: Այստեղից ոչ հեռու Ս. Գրիգոր Լուսավորիչը ամփոփում է Կեսարիայից իր հետ բերած սրբերի նշխարները (Ս. Հովհաննես Մկրտչի և Աթանազիոսի*) և նրանց վրա վկայարաններ կառուցում: **Տարրուն** եկեղեցիներ հիմնադրելուց և քահանաներ ծեռնադրելուց հետո Լուսավորիչը ուղևորվում է **Բագրևանդ**: Այստեղ ևս քրիստոնեական եկեղեցիներ ու վկայարաններ են հիմնադրվում:

Քաղաքից հեռու գյուղաքաղաքում Տրդատ III-ը, Աշխեն քաղաքից, Խոսրովի դուստրը մեծ շքախմբի ուղեկցությամբ ընդառաջ են գնում վերադարձող հայրապետին և ցնծությամբ դիմավորում նրան: **303 թ. հունվարի 6-ին** Նպատ լեռան մոտ՝ Արածանի գետում, Ս. Գրիգոր Լուսավորիչը մկրտում է քաղաքի և գյուղերի ղեկավարներին և ավազանու անդամներին, զորականների և բազմահազար նորադարձ քրիստոնյաների:



Մայր տաճարի կառուցումը

303 թ. սկզբին Ս. Գրիգոր Լուսավորիչը թագավորի հետ վերադառնում է մայրաքաղաք Վաղարշապատ: Վերադառնալուց հետո նա անմիջապես ձեռնամուխ է լինում **Մայր տաճարի՝ Կաթողիկե եկեղեցու** կառուցմանը:

Ըստ պատմիչ Ագաթանգեղոսի՝ մի գիշեր, երբ Ս. Գրիգոր Լուսավորիչն առանձնացել և աղոթում էր, հանկարծ տեսիլք է երևում: Հրեշտակներով շրջապատված Հիսուս Քրիստոս իջնում է երկնքից և ոսկե մուրճով հարվածելով գետնին՝ ցույց է տալիս այն վայրը, որտեղ պետք է կառուցվեր եկեղեցին:

Լուսավորիչն այս տեսիլքի մասին պատմում է Տրդատ արքային, և նրանք ձեռնամուխ են լինում Մայր տաճարի շինարարությանը: **303 թ. օգոստոսի 15-ին՝ Ս. Աստվածածնի տոնի օրը**, նորակառույց տաճարն օծվում և անվանվում է Ս. Աստվածածին, իսկ ավելի ուշ՝ նաև **Ս. Էջմիածին**: Այն դարձավ հայոց կաթողիկոսների աթոռամիստը: Հայոց եկեղեցին ամեն տարի տոնում է Մայր տաճար Ս. Էջմիածնի տոնը:



Ս. Էջմիածնի Մայր տաճարը

Քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը

Քրիստոնեությունը շրջադարձային նշանակություն ունեցավ հայ ժողովրդի քաղաքական, կրոնական և մշակութային կյանքում:

Հայոց պետականության համար ստեղծվեց գաղափարական նոր հենարան, որը այդ և հետագա բոլոր դարերում հայերի համար դարձավ համախմբող ուժ և վահան՝ արտաքին կրոնական և գաղափարաքաղաքական հարձակումների դեմ:

Բացի այդ, քրիստոնեությունը բնույթով շատ ավելի առաջադիմական էր և հոգևոր, մշակութային զարգացման նոր հնարավորություններ էր տալիս: Քրիստոնեությունը ընդունելուց հետո ձևավորվեց **Հայ առաքելական եկե-**



Ս.Գրիգոր Լուսավորիչ
և Ս. Տրդատ III

ղեցու նվիրապետությունը, որի շուրջ համախմբվեցին շինականն ու արհեստավորը, իշխանն ու զինվորը: Հայոց եկեղեցին իր գործունեությամբ նպաստել է կենտրոնացված ուժեղ պետության ստեղծմանը: Պետականության բացակայության տարիներին նա հաճախ համդես է եկել որպես ազատագրական պայքարի կազմակերպիչ և ոգեշնչող:

Հայոց եկեղեցին միշտ եղել է իր ժողովրդի հետ, նրան զերծ պահել ձուլման վտանգից, կատարել ազգապահպան դեր: Իր գոյության ողջ ընթացքում նա աշխարհասփյուռ հայությանը միավորող կամուրջ է հանդիսացել:

Քրիստոնեության ընդունումը նպաստեց **հայոց գրերի** ստեղծմանը: **Հայոց այբուբենը** դարձավ հայ ժողովրդի գոյատևման հենասյուներից մեկը: Վանքերին կից բացվեցին բազմաթիվ դպրոցներ, համալսարաններ, և հայ հոգևոր գործիչներն անգնահատելի դեր խաղացին հայ մշակույթի զարգացման գործում: Նրանք ընդօրինակեցին* բազմաթիվ ձեռագրեր, ստեղծեցին գրականության և արվեստի արժեքավոր գործեր:

Տրդատը և Գրիգոր Լուսավորիչը պահպանեցին **նախաքրիստոնեական մշակութային** արժեքները, որոնք ստեղծվել էին ժողովրդի կողմից:

Քրիստոնեության ընդունումից հետո մեծ զարգացում ապրեց **ճարտարապետությունը**, ստեղծվեցին

արվեստի հրաշալի կոթողներ:

Եվ վերջապես, քրիստոնեությունը դարձավ հայ ժողովրդի **ազգային նկարագրի անբաժանելի մասը**:





Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ո՞ր քաղաքում Գրիգոր Լուսավորիչը ձեռնադրվեց եպիսկոպոս:
2. Ո՞ր վայրերում Գրիգոր Լուսավորիչը հիմնեց եկեղեցիներ:
3. Որտե՞ղ արքայական շքախումբը դիմավորեց Գրիգոր Լուսավորչին:
4. Ե՞րբ և որտե՞ղ Գրիգոր Լուսավորիչը մկրտեց Տրդատ թագավորին:
5. Ի՞նչ տեսիլք երևաց Գրիգոր Լուսավորչին:
6. Ե՞րբ տեղի ունեցավ Մայր տաճարի նավակատիքը:
7. Ի՞նչ նշանակություն ունեցավ քրիստոնեության պետական կրոն ընդունելը հայ ժողովրդի համար:

բ) Քննարկենք

Ինչո՞ւ Գրիգոր Լուսավորիչը եպիսկոպոս ձեռնադրվեց Կեսարիայում, իսկ գահակալության արարողությունը տեղի ունեցավ Աշտիշատում:

գ) Հարստացնենք մեր բառապաշարը

Կաթողիկե եկեղեցի
Տեսիլք
Սուրբ սեղան

Բառարան

Աթանագինես եպիսկոպոս – նահատակված առաջին քրիստոնյաներից:
Ընդօրինակել – այստեղ՝ արտագրել, կրկնօրինակել, կրկնօրինակը պատրաստել:





Լրացուցիչ նյութ

Հայոց ազգի մկրտությունը

Երբ լրացավ պատկառելի տրված ժամկետը, երանելի Գրիգորը առավ աշխարհաբանակ զորքը և իրեն՝ թագավորին, նրա տիկին Աշխենին, մեծ օրհորդ Խոսրովիդուխտին, ամենայն մեծամեծներին և բանակի բոլոր մարդկանց, առավոտյան այգը լուսանալուն պես, Եփրատ գետի ափը տարավ և այնտեղ մկրտեց ամենքին՝ հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու:

Երբ բոլոր մարդիկ ու թագավորը իջնում էին այնտեղ՝ Եփրատ գետի ջրերի մեջ մկրտվելու, Աստծուց սքանչելի հրաշք երևաց, քանզի գետի ջրերը կանգնելով ետ դարձան: Սաստիկ լույս երևաց լուսավոր սյան նման և կանգնեց ջրերի վրա, ու նրա վրա՝ Տերունական Խաչի պատկերը: Լույսն այնքան պայծառ էր, որ մինչև անգամ արգելում և նվազեցնում էր արեգակի ճառագայթները: Օծության յուղը, որ Գրիգորը թափում էր մարդկանց վրա, գետի մեջ շրջան կատարելով, պտտվում էր մկրտվողների շուրջը: Բոլորը զարմացած օրհնում ու փառք էին տալիս Աստծուն: Օրվա երեկոյան հրաշքը աներևույթ եղավ: Նրանք, որ այն օրը մկրտվեցին, ավելի քան տասնհինգ բյուր էին, արքունական զորքից:

Ազաթանգեղոս, Պատմություն Հայոց



Ըստ ավանդության՝ մկրտության ժամանակ Ս. Գրիգոր Լուսավորիչը Տրդատ արքային վերանվանել է Հովհաննես՝ ի պատիվ Ս. Հովհաննես Մկրտչի: Արքայի մկրտության վայրում պահպանվել է մի քար, որը կոչվում է «Տրդատի արձան»:



9. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՁԵՎԱԿՈՐՈՒՄԸ

Քրիստոնեական առաջին դպրոցները

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակվելուց հետո Ս. Գրիգոր Լուսավորիչը Տրդատ Մեծի աջակցությամբ երկրի տարբեր գավառներում կառուցում է բազմաթիվ եկեղեցիներ, ձեռնադրում քահանաներ և եպիսկոպոսներ:

Սակայն Հայաստանում քրիստոնեությունն անրապնդելու համար անհրաժեշտ էին առավել մեծ թվով հոգևորականներ:

Ս. Տրդատ III Մեծը և Ս. Գրիգոր Լուսավորիչը Հայաստանի բոլոր շրջաններում բացում են դպրոցներ: Այս դպրոցներում ուսանում էին թե՛ պատանիներ, թե՛ մեծահասակ մարդիկ: Աշակերտներ ընտրվում էին հասարակության տարբեր խավերից՝ արքայական և նախարարական տոհմերից, նախկին քրմերի զավակներից, հասարակ ժողովրդից:



Նորաբաց դպրոցներում քրիստոնեական ուսուցումից բացի դասավանդվում էին նաև հունարեն և ասորերեն, որովհետև Հայաստանում Աստվածաշունչը և ծիսական մյուս գրականությունն ընթերցվում էին այդ լեզուներով, իսկ կրթված հոգևորականները Աստվածաշնչի անհրաժեշտ հատվածները բերանացի թարգմանում էին հայերեն:

Հայոց եկեղեցու ձևավորման և կազմակերպման շրջանում այս դպրոցները չափազանց մեծ նշանակություն ունեցան:



Ս. Գրիգոր Լուսավորչի աջը

Չայոց եկեղեցու նվիրապետության ձևավորումը

Չայոց պատմության դասընթացից արդեն գիտենք, որ IV դ. Չայաստանում տիրապետում էին ավատատիրական կարգերը: Երկրի գլուխ կանգնած էր թագավորը: Թագավորից վասալական կախվածության մեջ էին գտնվում նախարարները, ուլքեր առանձին նահանգների կամ գավառների սեփականատերեր էին: Նրանք իրենց տարածքներում իշխում էին ժառանգաբար, ունեին զորք և ըստ հզորության արքունիքում զբաղեցնում էին համապատասխան գահեր: Ս. Տրդատ III Մեծը Ս. Գրիգոր Լուսավորչին հանձնում է երկրի երկրորդ գահը:

Կաթողիկոսը արքայի հովանավորությամբ ձեռնամուխ է լինում Չայոց եկեղեցու նվիրապետության կազմակերպմանը:

Այն ձևավորվում է Չայաստանի պետական-վարչական կառուցվածքին համապատասխան: Բոլոր խոշոր նախարարություններում նշանակվում են մեկական եպիսկոպոսներ: Այս եպիսկոպոսները ենթարկվում էին **Չայոց եպիսկոպոսապետին (Չայոց հայրապետ)**: Գյուղերի և քաղաքների նորաբաց եկեղեցիներում նշանակվում են քահանաներ, որոնք ենթարկվում էին տվյալ նահանգի կամ գավառի եպիսկոպոսին: Պատմիչ **Ստեփանոս Օրբելյանի** վկայությամբ՝ Գրիգոր Լուսավորիչը Մեծ Չայքում հաստատում է **36 եպիսկոպոսական աթոռներ**:



Այսպիսով՝ Չայոց եկեղեցու նվիրապետությունը կազմավորվեց ինքնուրույն ճանապարհով:



Նվիրապետության տնտեսական դիրքերը ամրապնդելու նպատակով Տրդատ III Մեծի հրամանով պետական հողատարածքներից գյուղերի եկեղեցիներին հատկացվում են համապատասխան հողատարածքներ: Թագավորի կարգադրությամբ նորակառույց եկեղեցիներին են հանձնվում նաև մեհենական ունեցվածքն ու հողատարածքները:

Սկզբնական շրջանում եկեղեցական կառույցի մեջ դեռևս պահպանվում էր ժառանգականության սովորույթը: Գրիգոր Լուսավորչի տոհմը **Հայոց կաթողիկոսության աթոռին նստում էր ժառանգաբար:**

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո հռոմեական Մաքսիմիանոս Դայա կայսրը, ցանկանալով

Հայաստանում վերստին հաստատել հեթանոսությունը, 312 թ. պատերազմ է հայտարարում Հայաստանին: Եվ, ինչպես վկայում են աղբյուրները, «աստվածատյաց կայսրը արմենների դեմ պատերազմելիս ջախջախվեց»: Դա հանուն քրիստոնեական հավատի աշխարհում տեղի ունեցած առաջին պատերազմն էր:

Հռոմի նոր կայսր Կոստանդիանոս Մեծը, գահ բարձրանալով, ազատություն շնորհեց քրիստոնյաներին: 313 թ. նա Միլանի հրովարտակով ամբողջ Հռոմեական կայսրությունում քրիստոնեությունը հռչակեց թույլատրված կրոն:





Ս. Գրիգոր Լուսավորչի հետագա գործունեությունը

Ս. Գրիգոր Լուսավորչի գործունեության շնորհիվ քրիստոնեությունը տարածվեց նաև **Վրաստանում, Աղվանքում և Ատրպատականում**: Իր ձեռնարած եպիսկոպոսներից շատերին նա ուղարկեց Վրաստան, Աղվանից աշխարհ, Ատրպատական: Այնուհետև դարեր շարունակ այդ եկեղեցիները կապված էին Հայոց եկեղեցու հետ և իրենց կաթողիկոսների ձեռնադրությունն ու մյուռոնը ստանում էին Հայոց կաթողիկոսից:

Կյանքի վերջին տարիներին Ս. Գրիգոր Լուսավորիչն առանձնացել էր **Սեպուհ լեռան** վրա գտնվող **Մանյա այրում** և ճգնավորական կյանք էր վարում: Մահից հետո նա թաղվում է իր տոհմական կալվածք **Թորդան գյուղում**:

Գրիգոր Լուսավորիչը Հայոց եկեղեցու **մեծագույն հայրապետն ու** Հայոց եկեղեցու մեծագույն սրբերից է: Մեր եկեղեցին տարվա մեջ երեք անգամ տոնում է նրա հիշատակը: Գրիգոր Լուսավորիչը սրբերի շարքն է դասվել նաև քրիստոնեական մյուս եկեղեցիների կողմից:



Համաձայն Հայ եկեղեցու Սրբազան Ավանդության, հովիվները հայտնաբերում են Ս. Գրիգոր Լուսավորչի անապական մարմինը Մանեի քարանձավում, ուր նա մահացել էր:



Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ի՞նչ գործեր ձեռնարկեց Ս. Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեության տարածման և ամրապնդման համար:
2. Ո՞րն էր դպրոցների ստեղծման նպատակը:
3. Ովքե՞ր էին դասավանդում նորաբաց դպրոցներում:
4. Ի՞նչ առարկաներ էին դասավանդվում նորաստեղծ դպրոցներում:
5. Ինչպե՞ս ձևավորվեց Հայոց եկեղեցու նվիրապետական կարգը:
6. Տրդատ Մեծը երկրի ո՞ր գահը տվեց Ս. Գրիգոր Լուսավորչին:
7. Հռոմեական ո՞ր կայսրն էր ուզում Հայաստանում վերստին հաստատել հեթանոսությունը:
8. Ե՞րբ ընդունվեց և ի՞նչ էր հռչակում Միլանի հրովարտակը:
9. Ո՞րն էր Միլանի հրովարտակի նշանակությունը:
10. Ս. Գրիգոր Լուսավորչի գործունեության շնորհիվ ո՞ր երկրներում տարածվեց քրիստոնեությունը:
11. Որտե՞ղ անցկացրեց կյանքի վերջին տարիները Ս. Գրիգոր Լուսավորիչը:

բ) Քննարկենք

1. Ինչո՞ւ Ս. Գրիգոր Լուսավորիչը եկեղեցու նվիրապետությունը ձևավորեց երկրի պետական-վարչական կառուցվածքին համապատասխան:

գ) Հարստացնենք մեր բառապաշարը

Բերանացի թարգմանություն
 Եպիսկոպոսապետ
 Հայրապետ





Լրացուցիչ նյութ

Պատմում են, որ մի գիշեր, երբ Ս. Գրիգոր Լուսավորիչն աղոթում էր Արագած լեռան կատարին, նրան լուսավորում է երկնքից առանց պարան կախված մի մշտավառ կանթեղ:

Ասում են, թե այդ կանթեղն այժմ էլ կա և տեսանելի է միայն արժանավոր-ներից:



Լուսավորչի կանթեղը


Կես գիշերին կանթեղը վառ կախ է ընկած երկրնքից,
Լուսավորչի կանթեղն անմար Հայոց մըթնած երկրնքից:
Կախ է ընկած առանց պարան Արագածի կատարին,
Ու սեղանից հըսկայական լույս է տալիս աշխարհին:
Լույս է տալիս երկա՛ր դարեր ու վառվում են միշտ անշեջ
Սուրբի մաքուր արցունքները յուղի տեղակ նըրա մեջ:
Ոչ մարդկային ձեռ կըհասնի էն ահավոր բարձունքին.
Եվ ոչ քամին կըհանգցընի՝ վիշապ-քամին ահագին:
Երբ պատում է մութ խավարը չընաշխարհիկ մեր երկրին,
Երբ տիրում է ահն ու վախը թույլ, կասկածոտ սըրտերին,
Ով անմեղ է լիքը սիրով ու հավատով անասան,
Ով նայում է վառ հույսերով դեպի Հայոց ապագան, –
Նա կըտեսնի էն մըշտավառ ջահը կախված երկրնքից,
Ասեն՝ Աստծո աչքը պայծառ հըսկում է ցած երկրնքից:



Հովհ. Թումանյան



10. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻ ՀԱԶՈՐԴՆԵՐԻ ՕՐՈՔ



Ս. Տրդատ III Մեծի և Ս. Գրիգոր Լուսավորչի ժամանակաշրջանը հայ ժողովրդի պատմության մեջ մնաց որպես **մեծ ձեռնարկումների, համերաշխության և խաղաղության շրջան**: Իրավիճակը փոխվում է Խոսրով III Կոտակի (330-338) և Տիրան թագավորի (338-350) կառավարման տարիներին: Նորից պատերազմ է սկսվում Հռոմի և Պարսկաստանի միջև: Մի քանի նախարարական տներ պարսիկների դրոմամբ պայքար են սկսում Արշակունի թագավորների դեմ: Վիճակն էլ ավելի է բարդանում արքունիքի և եկեղեցու միջև սկիզբ առած տարածայնությունների հետևանքով:

Ս. Արիստակես, Ս. Վրթանես և Ս. Հուսիկ կաթողիկոսներ

Ս. Գրիգոր Լուսավորչին ուներ երկու որդի՝ **Վրթանես** և **Արիստակես** անուններով: Որոշ ժամանակ անց նա Արիստակեսին ձեռնադրում է արքունի եպիսկոպոս, իսկ Վրթանեսը դառնում է գինվորական:

Հայոց հայրապետական գահին Ս. Գրիգոր Լուսավորչին հաջորդում է Ս. **Արիստակեսը** (325-333): Լուսավորչի հաջորդների առջև բարդ և ծանր խնդիր էր դրված: Քրիստոնեությունը նոր էր հռչակվել պետական կրոն և բազմաթիվ հակառակորդներ ուներ:

Արիստակեսը հաճախ էր շրջում երկրում և ժողովրդին կոչ անում լինել ազնիվ ու բարի քրիստոնյաներ: Նա հանդիմանում էր այն նախարարներին, որոնք ապրում էին քրիստոնյային ոչ վայել կյանքով: Սրի նման հատու և վճռական խոսքերի համար նրան **«Հոգևոր սուր»** էին անվանում:

Օճփքում երիտասարդ հայրապետը հեթանոսական վարքուբարքի համար կշտամբում է տեղի Արքեղայոս իշխանին: Իշխանը հրամայում է սպանել Ս. Արիստակեսին: Աշակերտները նրան թաղում են Լուսավորչի տոհմին պատկանող **Թիլ** ավանում:



Ս. Արիստակես



Ս. Վրթանես

Ս. Արիստակեսին հաջորդում է նրա եղբայր **Վրթանեսը**, որը, թողնելով գինվորական գործը, օժվում է կաթողիկոս: Մինչև հոգևորական ձեռնադրվելը նա ամուսնացել էր և ուներ երկու որդի՝ Գրիգորիս և Յուսիկ անուններով:

Ս. Վրթանեսը (333-341) Խոսրով III Կոտակի աջակցությամբ հետևողականորեն շարունակում է քրիստոնեությունն ամրապնդելու գործը: Ժողովրդի մեջ և անգամ արքունիքում դեռևս պահպանվել էին հեթանոսական որոշ սովորույթներ:

Հայոց եկեղեցին շահագրգռված էր և օժանդակում էր միասնական ու կենտրոնացված պետության ամրապնդմանը: Ս. Վրթանես հայրապետը բազմիցս հանդես է գալիս միմյանց դեմ պայքարող նախարարական տներին հաշտեցնելու առաքելությամբ: Հայաստանի համար ստեղծված

ծանր իրավիճակում, երբ որոշ նախարարներ ապստամբել էին Խոսրով Կոտակի դեմ և անցել պարսիկների կողմը, կաթողիկոսը զորավիզ է լինում հայոց թագավորին: Նա օգնություն է խնդրում Հռոմի կայսրից: Խոսրով Կոտակի մահից հետո կաթողիկոսն ուղեկցում է թագաժառանգ Տիրանին Կ.Պոլիս, որից հետո Տիրանը հռչակվում է Հայոց թագավոր:

Ս. Վրթանեսը մահացել է 341 թ. և թաղվել **Թորդան** ավանում: Փալատոս Բուզանդը Խոսրով Կոտակի թագավորության և Ս. Վրթանես հայրապետի հովվապետության տարիների մասին գրել է. «Երկրում աճել ու բազմացել էին խաղաղությունը, պտղաբերությունը, առատությունը և գործի հաջողությունը և աստվածային մեծ պաշտամունքը...»:

Ս. Վրթանես կաթողիկոսին հաջորդում է որդին՝ Յուսիկը: **Ս. Յուսիկ Ա կաթողիկոսի (341-347)** գլխավորությամբ Հայոց եկեղեցին շարունակում է համառ պայքար մղել հեթանոսական բարքերի դեմ: Տիրան թագավորը ոչ միայն չի աջակցում կաթողիկոսին, այլև անտարբեր էր հեթանոսության աշխուժացման նկատմամբ: Այս



Չեռնադրություն



պատճառով Ս. Զուսիկ կաթողիկոսը եկեղեցական արարողություններից մեկի ժամանակ արգելում է արքային մտնել եկեղեցի:

Ձայրացած թագավորը հրամայում է բրածեծ* անել կաթողիկոսին: Ս. Զուսիկը սպանվում է և թաղվում **Թորդան** ավանի տոհմական գերեզմանոցում:

Թեև արքունիքի և եկեղեցու միջև ժամանակ առ ժամանակ առաջանում էին լարված փոխհարաբերություններ, Արշակունիները շարունակում էին աջակցել և հովանավորել Զայոց եկեղեցուն:

Քրիստոնեության տարածումը Աղվանքում

Մեծ է Զայոց եկեղեցու դերը քրիստոնեությունը հարևան ժողովուրդների մեջ տարածելու գործում:

IV դարի սկզբին Ս. Գրիգոր Լուսավորչի և Ս. Տրդատ Մեծի ջանքերով Աղվանքի թագավորն ընդունում է քրիստոնեություն: Հետագայում Աղվանքի եպիսկոպոս Ս. Գրիգորիսը՝ Ս. Վրթամես կաթողիկոսի որդին, քարոզում է քրիստոնեությունը Վրաստանում և Աղվանքում: Սկզբում նրա քարոզները ջերմ ընդունելություն են գտնում: Բայց որոշ ժամանակ անց մազքութների Սանեսան թագավորին դուր չեն գալիս առաքինի ապրելակերպի, թալանով ու ավարառությամբ չզբաղվելու, չսպանելու վերաբերյալ նրա հորդորները: Թագավորի հրամանով Ս. Գրիգորիսին տանջամահ են անում:

Այսպիսով՝ դժվարությամբ, բայց համարձակ և նվիրյալ գործիչների շնորհիվ քրիստոնեությունը տարածվում է նաև հարևան ժողովուրդների մեջ:



Զիսուս Քրիստոսի «կենդանագիր պատկերը» (դաստառակ) ժողովրդի մեջ



Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Քանի՞ որդի ունեւր Ս. Գրիգոր Լուսավորիչը:
2. Ո՞վ հաջորդեց Ս. Գրիգոր Լուսավորչին կաթողիկոսական գահին:
3. Ինչպե՞ս էին անվանում Ս. Արիստակեսին:
4. Ինչո՞ւ և ինչպե՞ս սպանվեցին Ս. Արիստակես և Ս. Հուսիկ կաթողիկոսները:
5. Ի՞նչ գործով էր զբաղվում Ս. Վրթանեսը կաթողիկոս օծվելուց առաջ:
6. Ինչպիսի՞ն էին եկեղեցի–պետություն հարաբերությունները Ս. Վրթանես կաթողիկոսի օրոք:
7. Ինչպե՞ս է բնութագրում Փավստոս Բուզանդը Ս. Վրթանեսի գահակալության տարիները:
8. Ո՞վ էր Ս. Հուսիկը:
9. Ս. Գրիգոր Լուսավորչի և նրա հաջորդների շնորհիվ ո՞ր երկրներում տարածվեց քրիստոնեությունը:
10. Ո՞վ էր Աղվանքի եպիսկոպոսը IV դարի կեսերին:
11. Ինչո՞ւ մազբուխների թագավորը հրամայեց սպանել Ս. Գրիգորիսին:

բ) Քննարկենք

Ինչո՞ւ հակասություններ առաջացան Ս. Հուսիկ կաթողիկոսի և Տիրան թագավորի միջև:

գ) Հարստացնենք մեր բառապաշարը

Աշխարհիկ կյանք
Հոգևոր սուր
Ձորավիզ լինել

Բառարան

Բրածնծ անել – մահակներով ծեծել, գանահարել:



11. Ս. ՆԵՐՍԵՍ ՄԵԾ: ԱՇՏԻՇԱՏԻ ԺՈՂՈՎԸ

IV դարի կեսերին Հայաստանի անկախությունը պահպանելու համար Արշակունի թագավորները ստիպված էին պայքարել երկու հզոր հարևանների՝ Պարսկաստանի և Հռոմի դեմ:

Արտաքին վտանգը դիմագրավելու համար անհրաժեշտ էր ամրապնդել կենտրոնական իշխանությունը և միավորել երկրի ներքին ուժերը:

Գահ բարձրացած Արշակ II-ին (350-368) սկզբնական շրջանում հաջողվում է վերականգնել երկրի միասնականությունը: Այդ գործում նրան սատարում է Հայոց եկեղեցին:

Ս. Ներսես Մեծի գահակալության սկիզբը

Հուսիկի մահից հետո նրա երկու որդիներն էլ հրաժարվում են հոգևորական ձեռնադրվելուց և մերժում կաթողիկոս դառնալու առաջարկը: Այդ պատճառով կաթողիկոս է ընտրվում Ս. Գրիգոր Լուսավորչի տոհմին չպատկանող Փառեն անունով մի երեց, որը գահակալում է չորս տարի:

Արշակ II-ը մեծ կարևորություն էր տալիս կաթողիկոսի ընտրությանը: Արքան կաթողիկոսի ամենահարմար թեկնածու է համարում **Ներսեսին՝ Հուսիկ կաթողիկոսի թոռանը:**

Այդ նպատակով Արշակ II-ը **353 թ.** հրավիրում է ժողով, որին մասնակցում էին երկրի ազդեցիկ նախարարներն ու հոգևորականները: Ժողովում որոշում են կաթողիկոս ընտրել Ներսեսին: Նա ձեռնադրվում է հոգևորական և մի խումբ նախարարների ու եպիսկոպոսների ուղեկցությամբ ուղևորվում Կեսարիա: Այնտեղ նա օծվում է **Մեծ Հայքի կաթողիկոս (353-373)** և վերադառնում հայրենիք: Արշակ թագավորը և ժողովուրդը նրան մեծ շուքով դիմավորում են երկրի արևմտյան սահմանագլխին:



Ս. Ներսես Ա Մեծ



Աշտիշատի ժողովը

Կաթողիկոս օծվելուց հետո Ներսե- սը որոշում է նորոգել իր նախնիների հաստատած եկեղեցական կարգերը և որոշ բարեփոխումներ անցկացնել: Այդ նպատակով մեկ տարի անց՝ 354 թվա- կանին, Աշտիշատում նրա նախածեռ- նությամբ գումարվում է Հայոց առա- ջին ազգային-եկեղեցական ժողովը: Ժողովում ընդունված որոշումները վերաբերում էին եկեղեցական, դա- վանական, սոցիալական, կազմա- կերպչական և այլ խնդիրների:

Չնայած քրիստոնեությունը Հայաս- տանում ավելի քան կես դար պետական կրոն էր, սակայն պահպանվել էին բազ- մաթիվ հեթանոսական սովորույթներ: Եկեղեցին փորձեց արմատախիլ անել դրանք: Մասնավորապես՝ արգելվեց մահացածների վրա հանդերձները պատ- ռելով և անվայելուչ այլ ձևերով լացուկոծ անելը: Արգելվեց բազմակնություն- նը, անչափահասների ամուսնությունը, ինչպես նաև ամուսնությունը մերձա-

վոր արյունակիցների միջև:

Քանի որ եկեղեցուն էր տրված դատավարու- թյան իրավունքը, ժողովում հատուկ պատիժներ սահմանվեցին հարբեցողության, գողության, սպանության և այլ հանցանքների համար:

Քրիստոնեական ուսմունքի կարևոր պատգամ- ներից մեկը գթասրտությունն է: Հետևելով դրան՝ ժողովը թագավորին, նախարարներին և առհասարակ իշխանություն և կարողություն ունեցողներին պատվիրեց գթասիրտ լինել իրենց ծառաների, են- թակաների, աշակերտների և նույնիսկ գերիների նկատմամբ, սիրել նրանց իբրև հարազատների և ծանր հարկերով չմեղել նրանց:

Միաժամանակ ծառաներից և հպատակներից պահանջվում էր հավատարիմ ու հնազանդ լինել տերերին:



Ս. Ներսես Մեծը պատարագ մատուցելիս






Ժողովը որոշում է նաև Հայաստանի տարբեր վայրերում հիմնել **հիվանդանոցներ, որբանոցներ, աշխատանոցներ, ուրկանոցներ***, իսկ ճանապարհորդների և օտարականների համար՝ իջևանատներ ու օբևաններ:

Վաղուց Ասորիքից Հայաստան մուտք էր գործել ճգնավորական կամ անպատական շարժումը: Աշտիշատի ժողովը որոշում է հովանավորել շարժումը, ճգնավորների համար հիմնել վանքեր ու կուսանոցներ:

Եկեղեցին կրթված հոգևորականներով համալրելու համար որոշվեց եկեղեցիներին և վանքերին կից բացել դպրոցներ:

Ժողովից հետո Ներսես կաթողիկոսը ձեռնամուխ է լինում այս վերափոխումների իրագործմանը: Նրան զգալի աջակցություն է ցույց տալիս Արշակ քազավորը: Այսպես, բարեգործական հաստատությունների նյութական ծախսերի հիմնական մասը հոգում էր արքունիքը:

Ժողովի որոշումները կանոնակարգում էին ոչ միայն կրոնական, եկեղեցական խնդիրները, այլև սոցիալական հարաբերությունները: **Աշտիշատի ժողովը մեծ նշանակություն ունեցավ Հայաստանում քրիստոնեության վերջնական անրապնդման և հայ ժողովրդի հոգևոր կյանքի վերափոխման գործում:**





Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ի՞նչ խնդիրների բախվեց Արշակ II-ը գահակալության առաջին տարիներին:
2. Ո՞վ հաջորդեց Յուսիկ կաթողիկոսին:
3. Լուսավորչի գահին ինչպիսի՞ կաթողիկոս էր ուզում տեսնել Արշակ թագավորը:
4. Ե՞րբ կաթողիկոս ձեռնադրվեց Ներսես Մեծը:
5. Ե՞րբ և որտե՞ղ հրավիրվեց Հայոց առաջին ազգային-եկեղեցական ժողովը:
6. Ի՞նչ որոշում կայացրեց ժողովը հեթանոսական սովորույթների հետ կապված:
7. Ինչպիսի՞ հանցագործությունների համար պատիժներ սահմանվեցին:
8. Ի՞նչ պատվիրեց ժողովը թագավորին, նախարարներին և ընդհանրապես իշխանություն ունեցողներին:
9. Ինչպիսի՞ բարեգործական հաստատություններ հիմնվեցին Աշտիշատի ժողովից հետո:
10. Ժողովը ի՞նչ շարժում որոշեց հովանավորել:
11. Ո՞րն էր Աշտիշատի ժողովի նշանակությունը:

բ) Քննարկենք

1. Ինչո՞ւ էր Արշակ II-ը ձգտում կաթողիկոսական գահին բարձրացնել իրեն հավատարիմ և վստահելի անձնավորության:
2. Ինչո՞ւ էր Հայոց եկեղեցին մեծ ուշադրություն հատկացնում սոցիալական խնդիրներին:

գ) Հարստացնենք մեր բառապաշարը

Ազգային-եկեղեցական ժողով
ճգնավորական կամ անապատական շարժում

Բառարան

Ուրկանոց – ապաստարան բորոտների համար:



Լրացուցիչ նյութ

Սուրբ Ներսեսի և նրա մուծած քարեկարգությունների մասին

Արշակի թագավորության երրորդ տարում Հայոց եպիսկոպոսապետ դարձավ մեծն Ներսես...: Բյուզանդիայից Կեսարիա վերադառնալով՝ նա եկավ Հայաստան և իր հայրենի բոլոր ուղղության կարգերը նորոգեց...: Նա եպիսկոպոսների և աշխարհականների ժողով գումարեց..., հաստատեց ողորմածությունը...:

Իսկ նա հրամայեց, որ ամեն մի գավառում շինեն աղքատանոցներ...: Նույնպես սահմանում է, որ բոլոր գյուղերում իջեվաններ շինվեն օտարականների համար, սնունդի տեղեր, որբերի և ծերերի համար և խնամք չքավորների համար: Շինում է նաև անապատ և անմարդաբնակ տեղերում եղբայրանոցներ և մենաստաններ...:

... Եվ նախարարական ցեղերի միջից վերացնում է այս երկու բանը.-առաջին՝ խնամությունը մերձավոր ազգականների միջև..., և երկրորդ՝ որ մեռածների վրա ոճիրներ էին գործում հեթանոսական սովորությամբ...:

Սովսես Խորենացի. Հայոց պատմություն





12. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ – ԵԿԵՂԵՑԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ IV ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ



Ս. Ներսես
Գործ՝ Յ. Հովնաթանյանի

Արշակ II-ի կառավարման վերջին տարիներին դարձյալ սրվում է երկրի ներքաղաքական վիճակը: Մի խումբ նախարարներ ապստամբում և անցնում են պարսիկների կողմը: Նախարարների մի մասն էլ չեզոք դիրք է գրավում և փորձում հեռու մնալ տեղի ունեցող իրադարձություններից:

Այս ընթացքում Հռոմի **Հուլիանոս Ուրացող կայսրը** Պարսկաստանի դեմ պատերազմ է սկսում, որին ստիպված մասնակցում է նաև Արշակ II-ը: Սակայն պատերազմի ժամանակ Հուլիանոսը սպանվում է, իսկ նրան փոխարինած կայսրը՝ 363 թ. պարսիկների հետ կնքում է «**Ամոթալի հաշտության**» պայմանագիր, ըստ որի՝ պարտավորվում է այլևս չօգնել Հայաստանին:

Արշակ II-ը իրեն հավատարիմ սակավաթիվ ուժերով ստիպված էր անհավասար պայքար մղել մի քանի անգամ գերազանցող պարսկական բանակի դեմ:

Պետություն – եկեղեցի հարաբերությունները

Սկզբնական շրջանում, ինչպես տեսանք, Ս. Ներսես Մեծի և Արշակ II-ի հարաբերությունները բավականին ջերմ էին, որոնք շուտով վատանում են:

Ընդհարման առիթը Արշակավան քաղաքի կառուցման հետևանքով տեղի ունեցած իրադարձություններն էին: Ս. Ներսես Մեծը լավ էր հասկանում, որ այդ քաղաքի կառուցման պատճառով է նախարարների մեծ մասը դուրս եկել թագավորի դեմ: Նա փորձում է կանխել ընդհարումը և թագավորին հորդորում հետ կանգնել քաղաքը կառուցելու մտադրությունից: Սակայն Արշակ թագավորը ոչ միայն չի հետևում նրա խորհրդին, այլև սկսում է կաթողիկոսին վերաբերվել որպես իր հակառակորդի:

Ի վերջո, 359 թ. Ս. Ներսես Մեծը թողնում է կաթողիկոսական վարչական պարտականությունները և զբաղվում միայն ժողովրդի հոգևոր հոգսերով:



Շապուհ II-ը որսի ժամանակ

Սակայն լարված քաղաքական իրավիճակի պատճառով շուտով Արշակ II-ը խնդրում է Ներսեսին վերստին ստանձնել կաթողիկոսական գործերը: Սկսվել էին պարսկական արշավանքները:

Պարսկական բանակի նոր հարձակումից հետո, այլ ելք չունենալով, Արշակ II-ը բանակցություններ վարելու համար մեկնում է Տիգրն: Այստեղ նա ձերբակալվում է Շապուհ II-ի կողմից և ցմահ բանտարկվում Անհուշ բերդում:

Ս. Ներսեսի գահակալության վերջին շրջանը

Արշակ II-ի ձերբակալությունից հետո Ներսեսը և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը դիմում են հռոմեական կայսրին՝ խնդրելով աջակցել Արշակ II-ի որդի Պապին՝ հաստատվելու հոր գահին: Կայսրը որոշում է օգնել հայերին և Պապին ճանաչում է հայոց թագավոր:

371 թ. Չիրավի ճակատամարտի ժամանակ Ս. Ներսես Մեծը Պապ թագավորի և հայոց զորքի հետ էր, քաջալերում ու ոգեշնչում էր նրանց:

Սակայն Ներսես կաթողիկոսի և Պապ թագավորի համագործակցությունը նույնպես երկար չի շարունակվում: Պապը ցանկանում էր ստեղծել ուժեղ պետություն, երկիրը դուրս բերել պարսկական արշավանքների հետևանքով առաջացած ծանր վիճակից և անցկացնել բարեփոխումներ:

Բնակչության խիստ նվազման հանգամանքը հաշվի առնելով՝ Պապ թագավորը փակում է կուսանոցները և կարգադրում կույսերին ընտանիք կազմել: Նա կրճատում է վանականների թիվը, սահմանափակում միաբանությունները և տղամարդ հոգևորականներին պետական ու զինվորական ծառայության վերցնում: Թագավորի հրամանով փակվում են նաև Ներսես Մեծի հիմնած որոշ բարեգործական հաստատություններ: Թագավորը կրճատում է եկեղեցական հողատարածքները:

Երիտասարդ արքան չէր ցանկանում գծտվել կաթողիկոսի հետ և նրան հրավիրում է իր ամառանոց՝ փորձելով հաշտության եզրեր գտնել: Հյուրասիրությունից վերադառնալուց քիչ անց Ներսես Մեծը վախճանվում է: Սա



Աղջոց վանքի Ս. Պողոս -Պետրոս եկեղեցու ճակատային մասը

առիթ է տվել պատմիչներին առաջ քաշել մի վարկած, թե, իբր, կաթողիկոսը թունավորվել է հյուրասիրության ժամանակ:

Ներսես կաթողիկոսը մահացել է 373 թ. և թաղվել Լուսավորչի տան տոհմական դամբարանում, որը գտնվում էր **Թիլ** վականում:

Սուրբ Ներսես Մեծի մահից հետո Հայոց բոլոր կաթողիկոսները ձեռնադրվել են Հայաստանում:

Պապ թագավորը կաթողիկոսական աթոռ է բարձրացնում Աղբիանոսյան տոհմից Շահակին (Հուսիկին): Նորընտիր թեկնածուն Պապ թագավորի կարգադրությամբ ձեռնադրվելու համար այլևս **Կեսարիա չի մեկնում և կաթողիկոս է ձեռնադրվում Վաղարշապատում:**

Ս. Ներսես Մեծի գործունեության նշանակությունը

Ս. Ներսես Մեծը Հայոց եկեղեցու ամենամշանավոր կաթողիկոսներից է: Շնորհիվ նրա եկեղեցական և կրթական բարեփոխումների՝ հայ ժողովուրդը հոգևոր և մշակութային վերելք ապրեց: Իր հայրենամներ, բեղմնավոր գործունեության և եկեղեցու պատմության մեջ ունեցած անգնահատելի դերի համար նա արժանացել է **Մեծ** կոչմանը: Բացի այդ տիտղոսից, նրան անվանել են նաև «**Հայոց հայր**» և «**Սրտերի լուսավորիչ**»: Փավստոս Բուզանդը Ս. Ներսես Մեծի մասին գրել է. «Ներսեսը աստվածավախ, Աստծու պատվիրանների հանդեպ ավանդապահ, մարդասեր, սուրբ, սթափ հայրապետ էր ... նրա նման ուրիշ մեկը երբեք չեղավ Հայոց աշխարհում»:

Հայոց եկեղեցին ամեն տարի հատուկ տոնակատարությամբ պատվում է Ս. Ներսես Մեծի հիշատակը:



Հարցեր և առաջադրանքներ



ա) Հիշենք

1. Ինչո՞ւ սրվեց ներքաղաքական վիճակը Հայաստանում:
2. Որո՞նք էին Արշակ II - ի և Ներսես Մեծի փոխհարաբերությունների վատթարացման պատճառները:
3. Ի՞նչ է անում Ներսես կաթողիկոսը 359 թվականին:
4. Ինչո՞ւ է Արշակ II-ը խնդրում Ներսեսին վերստին ստանձնել կաթողիկոսական գործերը:
5. Ո՞վ է հաջորդում Արշակ II-ին հայոց գահին:
6. Ի՞նչ կարևոր ճակատամարտ տեղի ունեցավ հայերի և պարսիկների միջև: Ո՞ր թվականին:
7. Ինչպիսի՞ քայլեր ձեռնարկեց Պապ թագավորը:
8. Ինչպե՞ս է գնահատվում Ներսես Մեծի գործունեությունը:
9. Ո՞վ է գահ բարձրանում Ներսես Մեծից հետո:

գ) Հարստացնենք մեր բառապաշարը


Հուլիանոս Ուրացոյ
«Ամոթալի» հաշտություն
Անիուշ բերդ





13. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ: Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐՔԵԿ ԵՎ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Ս. Սահակ Պարթևի գահակալությունը



Ս. Սահակ Պարթև

Հայաստանի բաժանումից հետո արևելյան մասում թագավորում է **Խոսրով IV-ը**: Նրա առաջարկությամբ, առանց պարսից արքունիքի համաձայնության, 387 թ. Հայոց կաթողիկոս է դառնում **Ս. Ներսես Մեծի որդի Սահակ Պարթևը (387- 439)**:

Ս. Սահակ Պարթևը Լուսավորչի տոհմից վերջին կաթողիկոսն է: Նա ծնվել է 348 թ. Կապադովկիայի Կեսարիա քաղաքում: Մանուկ հասակում կորցնելով մորը՝ մեծացել ու դաստիարակվել է պապի՝ Տարոնի իշխան Վարդան Մամիկոնյանի ընտանիքում:

Ս. Սահակ Պարթևը ուսանել էր իր ժամանակի նշանավոր դպրոցներում, տիրապետում էր հունարենին, ասորերենին, պարսկերենին: Կաթողիկոս ձեռնադրվելուց հետո նա

իր շուրջն է հավաքում նվիրյալ և բարեպաշտ աշակերտների: Նրանք միասին շրջում են Հայաստանի տարբեր բնակավայրերով և իրենց քարոզներով նպաստում քրիստոնեական հավատքի ամրապնդմանը:

Սահակ Պարթևը ամեն կերպ աջակցում և օժանդակում է Խոսրով IV թագավորի՝ երկրի միասնականության վերականգնման ջանքերին:

Հայոց արքայի այս ձեռնարկումները դուր չեն գալիս պարսից արքունիքին: Խոսրովը IV-ը կանչվում է Տիզբոն և բանտարկվում Անհուշ բերդում, իսկ կաթողիկոսն ու որոշ նախարարներ զրկվում են իրենց իրավունքներից: Բայց հանդիպելով նախարարների և ժողովրդի դիմադրությանը՝ պարսիկները ստիպված են լինում միառժամանակ հրաժարվել իրենց մտադրությունից: Պարսից արքունիքը Մեծ Հայքի թագավոր է ճանաչում **Խոսրովի եղբայր Վռամշապուհին** (Վաղարշին):

Վերջինիս ջանքերով Սահակ Պարթևը վերահաստատվում է Հայոց կաթողիկոսական աթոռին:



Մեսրոպ Մաշտոցը և գրերի գյուտը

387 թ. Հայաստանի առաջին բաժանումից հետո, կորցնելով պետական ամբողջականությունը, հայ ժողովուրդը հայտնվեց ծանր վիճակում:

Հռոմեական և պարսկական տերությունները Հայաստանը միմյանց միջև բաժանելուց հետո սկսեցին վարել կրոնական և գաղափարական ծուլման քաղաքականություն:

Դրան նպաստում էր նաև այն, որ Աստվածաշնչի ընթերցումները, քրիստոնեության տարածումը, կրթությունը, ժամերգությունները կատարվում էին ժողովրդին խորթ լեզուներով՝ հունարեն և ասորերեն: Շուտով հռոմեացիներն իրենց բաժնում հայերին պարտադրեցին օգտագործել միայն հունարենը, իսկ պարսիկները՝ միայն ասորերենը:



Մեսրոպ Մաշտոց և Կորյուն

Փաստորեն վտանգված էր նաև հայ ժողովրդի հոգևոր-մշակութային միասնությունը:

Հայոց հոգևոր և աշխարհիկ առաջնորդները՝ Սահակ Պարթև կաթողիկոսը և Վռամշապուհ արքան, խորապես գիտակցում էին սպառնացող վտանգը և հայոց գրերի ստեղծման անհրաժեշտությունը: Ազգային գրերի ստեղծումը հնարավորություն կտար ամրապնդելու քրիստոնեությունը և վարելու ինքնուրույն ազգային-եկեղեցական քաղաքականություն:

Ահա այս ժամանակ էր, որ հայոց արքային և կաթողիկոսին գրերի ստեղծման առաջարկով դիմում է **Մեսրոպ Մաշտոցը:**

Երբեմնի հմուտ զինվորականը, ով դարձել էր քրիստոնեության եռանդուն քարոզիչ, Գողթն գավառից շտապում է Վաղարշապատ՝ Հայոց հայրապետի մոտ:

Հայաստանի տարբեր գավառներում Ավետարանն ուսուցանելու ընթացքում Ս. Մեսրոպ Մաշտոցը հանդգնել էր, թե որքան կարևոր է հայերեն գիր և գրականություն ունենալը, **Աստվածաշունչը հայերեն թարգմանելը:** Գրերի ստեղծման իր ծրագրի մասին նա հայտնում է Ս. Սահակ Պարթևին և



Վռանշապուհ արքային: Ե՛վ արքան, և՛ կաթողիկոսը հավանություն են տալիս ու պատրաստականություն հայտնում ամեն կերպ աջակցելու այս համագ-գային ծրագրի իրագործմանը: Սկսվում են երկարատև, տքնաջան որոնումներն ու աշխատանքները: Ի վերջո, **405 թ. Եղեսիա քաղաքում Մեսրոպ Մաշտոցը ստեղծում է հայոց գրերը:**

Մաշտոցն իր աշակերտների հետ միասին սկսում է Աստվածաշնչից թարգմանություններ կատարել: Հայերեն թարգմանված առաջին նախադասությունը Աստվածաշնչի Առակաց գրքից է.

«Ճանաչել զհմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

Գրերի գյուտից հետո հիմնվում են ազգային դպրոցներ, սկսվում է թարգմանական և ինքնուրույն գրականության ստեղծման գործընթացը:

Անհրաժեշտ էր Հայաստանի բյուզանդական բաժնում ևս տարածել և ուսուցանել նորաստեղծ գրերը: Այդ նպատակով Մաշտոցն աշակերտների հետ մեկնում է այնտեղ:

419-422 թթ. Սահակ Պարթևը տեղափոխվում է Հայաստանի արևմտյան հատվածը: Նա բյուզանդական կայսեր մոտ է ուղարկում **Մեսրոպ Մաշտոցին** և իր թոռ **Վարդան Մամիկոնյանին**՝ բյուզանդական բաժնում հայկական դպրոցներ բացելու թույլտվության խնդրանքով: Ցանկանալով Հայաստանում ուժեղացնել իր ազդեցությունը՝ կայսրը բոլոր հարցերում ընդառաջում է կաթողիկոսին:

Արտաքին ուղնձգությունների դեմ պայքարի միասնական ճակատը ընդլայնելու նպատակով Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը ձեռնամուխ են լինում **վրաց** և **աղվանից** ժողովուրդների համար գրեր ստեղծելու գործին: Դրան նպաստում է այն հանգամանքը, որ այս ժողովուրդների եկեղեցիները սերտորեն կապված էին Հայոց եկեղեցու հետ և



գտնվում էին նույն սպառնալիքի դեմ հանդիման: Շուտով պարսից արքունիքը թագավոր է ճանաչում Վռամշապուհի որդուն՝ **Արտաշես III-ին (422-428):**

Արտաշեսը (Արտաշիր) կառավարում է 6 տարի: Պարսից արքունիքը, կաշառելով մի խումբ հայ նախարարների, հորդորում է նրանց հանդես գալ Չայոց թագավորի դեմ: Փորձ է արվում դավադրության մեջ ներքաշել նաև կաթողիկոսին: Իմաստուն հայրապետը փորձում է փոխել դավադիր նախարարների որոշումը: Ս. Մովսես Խորենացին գրում է, որ կաթողիկոսը խրատում է նրանց՝ ասելով. «Եվ ինչպե՞ս կարելի է այդ իմ հիվանդ ոչխարը փոխել առողջ գազանի հետ, որի հենց առողջությունը մեզ համար պատուհաս է»:



Ցավոք, հայ նախարարները չեն լսում հայրենասեր կաթողիկոսին: Սահակ Պարթևը և թագավորը հրավիրվում են Տիգրան և ձերբակալվում: Վռամ արքան Արտաշեսին գահընկեց անելուց հետո Չայաստանի կառավարիչ է նշանակում պարսիկ մարզպանի, իսկ Ս. Սահակ Պարթևին զրկում է կաթողիկոսությունից և աքսորում:

Ի վերջո, պարսից արքան, տեղի տալով հայ նախարարների միջնորդություններին և ճնշումներին, **432 թ. Սահակ կաթողիկոսին ազատում է աքսորից** և թույլ է տալիս վերադառնալ Չայաստան:

Այդ ընթացքում Սահակ կաթողիկոսի նստավայրը գտնվում էր **Բագրևանդ գավառի Բագավան** բնակավայրում: Մինչև իր մահը Ս. Սահակ Պարթևը կարողացավ Ս. Մաշտոցի հետ միասին ավարտին հասցնել Աստվածաշնչի թարգմանությունը: Այդ դժվարին գործում Սահակին ու Մաշտոցին աջակցում էին նրանց աշակերտները՝ Եզնիկ Կողբացին, Կորյունը, Ղևոնդը, Եղիշեն և ուրիշներ:

Ս. Սահակ Պարթև կաթողիկոսը վախճանվել է **439 թ. սեպտեմբերի 7-ին** և թաղվել **Տարոնի Աշտիշատ գյուղում**:

Ս. Մեսրոպ Մաշտոցը մահացել է **440 թ. փետրվարի 17-ին** և թաղվել Օշականում:



Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ վարդապետի գրական, մշակութային ժառանգությունը



Ս. Մեսրոպ Մաշտոց և Ս. Սահակ Պարթև.
բանդակագործ՝ Ա. Սարգսյան

Ս. Սահակ Պարթևը թողել է գրական հարուստ ժառանգություն: Նա կարգավորել է Հայոց եկեղեցու ծիսակարգը, գրել բազմաթիվ կանոններ, որոնք կարգավորում էին աշխարհիկ և եկեղեցական դասերի փոխհարաբերությունները, ընտանեկան իրավունքի նորմերը: Ս. Սահակ Պարթևը մեծ դեր է խաղացել նաև Հայոց եկեղեցու հոգևոր երգերի հայացման գործում:

Նա համարվում է հայ հոգևոր երգերի հիմնադիրը: Սահակ կաթողիկոսը հեղինակել է շարականներ: Նա մեծ ավանդ ունի **հայոց գրերի ստեղծման, Աստվածաշունչ մատյանի թարգմանության և հայկական**

դպրոցների բացման գործում:

Հայոց եկեղեցին տարվա մեջ երկու անգամ նշում է նրա հիշատակը:

Գրերի գյուտից հետո Ս. Մեսրոպ Մաշտոցը, Ս. Սահակ Պարթևը և մի խումբ վարդապետներ ձեռնամուխ եղան Աստվածաշնչի թարգմանության կարևորագույն գործին: Մաշտոցը ասորական բնագրից Աստվածաշնչի թարգմանությունը սկսել էր դեռևս Սամոսատում: Նրանք իրենց աշակերտների հետ միասին ավարտին հասցրին ասորական բնագրից մի փութանակի* թարգմանություն: Բարձրորակ թարգմանություն կատարելու համար մի խումբ թարգմանիչ վարդապետներ մեկնեցին Կ. Պոլիս: Ստացած կրթության արդյունքում նրանք փայլուն տիրապետեցին հունարենին:

Վերադառնալով հայրենիք՝ նրանք Ս. Մեսրոպ Մաշտոցի և Ս. Սահակ Պարթևի հսկողության ներքո ձեռնամուխ եղան Աստվածաշնչի երկրորդ թարգմանությանը, որն իր կատարելության համար արժանացավ **«Թարգմանությունների թագուհի»** անվանմանը:

Թարգմանական գրականությանը զուգահեռ ստեղծվում էր նաև նոր՝ **ինքնուրույն գրականություն**: Հայ հեղինակների կողմից գրվեցին բազմաթիվ ստեղծագործություններ՝ պատմական, փիլիսոփայական, բժշկական, աստվածաբանական և այլ ժանրերով:



Հայոց եկեղեցին Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Պարթևին և նրանց աշակերտներին սրբացրել է և, որպես **Սուրբ Թարգմանչաց** տոն, նրանց հիշատակը նշում է ամեն տարի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Հայոց գրերի ստեղծումը վիթխարի նշանակություն ունեցավ հայ ժողովրդի կյանքում:

Ազգային լեզվով գրականության ստեղծումը թուլացրեց օտար մշակույթների ազդեցությունը, նպաստեց հայ ժողովրդի ազգային մշակույթի զարգացմանն ու ինքնագիտակցության ամրապնդմանը:



Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ինչպիսի՞ն էր Հայաստանի քաղաքական վիճակը IV դարի վերջերին:
2. Ո՞ր թվականին կաթողիկոս ընտրվեց Ս. Սահակ Պարթևը: Ի՞նչ կրթություն էր նա ստացել:
3. Ինչպե՞ս վարվեց պարսից Վռամ IV արքան հայոց խոսրով թագավորի և Սահակ Պարթև կաթողիկոսի հետ:
4. Ինչո՞ւ է պարսից արքան Ս. Սահակ Պարթևին զրկում կաթողիկոսությունից և աքսորում:
5. Ե՞րբ վախճանվեց Ս. Սահակ Պարթև կաթողիկոսը, որտե՞ղ թաղվեց նա: Ի՞նչ գրական ժառանգություն է նա թողել:
6. Ի՞նչը կարող էր չեզոքացնել հունական և ասորական եկեղեցիների ազդեցությունը:
7. Ե՞րբ և որտե՞ղ է Մաշտոցը ստեղծել հայոց գրերը:
8. Ո՞րն է հայերեն թարգմանված առաջին նախադասությունը:
9. Ի՞նչ ձեռնարկվեց գրերի գյուտից հետո:
10. Ի՞նչ նպատակով թարգմանիչ վարդապետները մեկնեցին Կ. Պոլիս:
11. Ինչպե՞ս կոչվեց Աստվածաշնչի երկրորդ թարգմանությունը:
12. Աստվածաշնչից բացի ուրիշ ի՞նչ թարգմանություններ կատարվեցին:
13. Ի՞նչ նշանակություն ունեցավ հայոց գրերի գյուտը: Ե՞րբ է տոնվում Սուրբ Թարգմանչաց տոնը:



բ) Քննարկենք

1. Ինչո՞ւ հայ նախարարները չցանկացան այլևս ենթարկվել Արտաշես Թափափորին: Ինչպիսի՞ն էր, ձեր կարծիքով, Սահակ կաթողիկոսի պահվածքը այդ իրավիճակում:
2. Գնահատե՛ք Ս. Սահակ Պարթևի գործունեությունը:
3. Համեմատե՛ք Տրդատ Մեծ – Գրիգոր Լուսավորիչ և Վռամշապուհ – Սահակ Պարթև համագործակցությունը:
4. Ինչո՞ւ հռոմեացիներն իրենց մասում հայերին պարտադրեցին օգտագործելու միայն հունարեն, իսկ պարսիկները՝ միայն ասորերեն գրերը:
5. Ինչո՞ւ էր Ս. Սահակ Պարթևին և Ս. Մեսրոպ Մաշտոցին մտահոգում արվան և վրաց ժողովուրդների գիր ունենալու հարցը:

գ) Հարստացնենք մեր բառապաշարը

Մարգպան

Ազգային ինքնագիտակցություն

Բառարան

Սամոսատ – հնագույն քաղաք Կոնստանդնուպոլիսում:

Փուրբանակի – հապճեպ



Վայոց ձորի Մարտիրոս գյուղի Ս. Հակոբ եկեղեցական համալիրը



Լրացուցիչ նյութ

Հայոց գրերի գյուտը

Մեսրոպը... ապավինում է աղոթքի:

Եվ տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է այժմեքի թաթ՝ քարի վրա գրելիս, այնպես, որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ծյունի վրա: Եվ ոչ միայն երևաց, այլև բոլոր (գրերի) հանգամանքները նրա մտքում հավաքվեցին ինչպես մի ամանում: Եվ աղոթքից վեր կենալով՝ ստեղծեց մեր նշանագրերը...

Մովսես Խորենացի. Հայոց պատմություն





Արշակունիների անկունը և Հայոց եկեղեցին

Արտաշեսը երիտասարդ էր և թագավորությունը վարում էր շատ անառակություններով: Իսկ Հայոց նախարարները, չկարողանալով հանդուրժել Արտաշես թագավորի այս զեխ ու մոլեկան վարքը, միահամուռ հավաքվեցին Հայոց մեծ քահանայապետ Սուրբ Սահակի մոտ, որ Պարթևաց տոհմից էր, որդին Սուրբ Ներսեսի, և նրան ասացին. «Մենք այդ վիճակից ոչ մի ելք կամ հնար չենք կարող գտնել, բացի Պարսից թագավորին բողոքելուց, որպեսզի նրան հեռացնի թագավորությունից, որը ժառանգելու արժանի չեղավ ինքը: Դրանից բացի, ուրիշ ոչինչ ո՛չ իմանալ կարող ենք, ո՛չ կատարել: Բայց խնդրում ենք քեզ՝ այս խորհրդի մեջ միաբան լինել մեզ հետ»:

Իսկ Հայոց սուրբ հոգևոր կաթողիկոս Սահակը, երբ այս բոլորը լսեց Հայոց նախարարներից և ստույգ իմացավ, որ նույն մտքի ու խորհրդի մեջ հաստատ են բովանդակ աշխարհի ավագները, խորասուզվեց մեծ տրտմության ու անմխիթար սգի մեջ:

Իսկ շատ օրեր անց Հայոց աշխարհի բոլոր ազատները, միահամուռ հավաքվելով նրա մոտ և նույն խոսքը կրկնելով Հայոց սուրբ կաթողիկոսի առաջ, խնդրեցին ու ստիպեցին, որ նա էլ միաբանի իրենց հետ: Սուրբը տեսնում էր, որ նրանք ոչ մի կերպ չեն հրաժարվել իրենց նախորդ առաջարկից ու վճռից, բարձրաձայն ողբալով այսպես դիմեց բոլորին.

– Լավ է՝ ես մեռնեմ, քան թե անարժան գործի համար հավատացյալներին մատնեմ անօրենների ձեռքը: Քանի որ [թագավորը] իր անձի վրա Քրիստոսի հոտի կնիքն է կրում: Անառակացել է մարմնով, բայց անհավատ ու հեթանոս չէ: Շվայտ կյանք է վարում, բայց կրակապաշտ չէ: Մեկ ախտով հիվանդացել է, բայց վարակված չէ ամեն տեսակ ախտով, ինչպես ամբարիշտը: Եվ ինչպե՞ս սակավ մեղք ունեցողին մատնենք ամենամբարիշտներին, որ տանեն-սպանեն: Քավ լիցի, որդի՞ք, մի՛ ունեցեք այդպիսի դիտավորություն և ձեր նախնիներից ոմանց պես մի՛ ջանացեք կորցնել բնիկ ձեր տերերին:

Եվ նրանք բոլորը միաբան պատասխան տվին սուրբ քահանայապետին, ասացին. «Դու չլսեցիր մեր խոսքը և մեր միաբանությունից քո անձը հեռացրիր: Իմացած եղիր, ինչպես մեր մտքներում դրել ենք, որ սա այլևս թագավոր չլինի մեզ վրա, խոստանում ենք, որ դու էլ այդպես երկար քահանայապետ չես մնա մեր աշխարհի վրա»:

Եվ այնուհետև միաբանված գնացին Պարսից արքունիքը, այնտեղ ներկայացան Վռամ արքային: Նրանց հետ էր նաև Սուրմակ անունով մի երեց Բզնունյաց գավառի Արծկե կոչվող գյուղից, գավառի քահանաների տոհմից: Նա էլ, միաբանելով Հայոց նախարարների հետ, բաժանվել էր սուրբ հայրա-



պետ Սահակի խրատից և Հայոց թագավոր Արտաշեսի մասին Պարսից ավագանու առաջ խոսում էր առավել անխելք ու աղտեղի բաներ, քան Հայոց բոլոր նախարարները: Եվ նա նախարարներին այդ ծառայությունը մատուցում էր, որովհետև ավագներից ոմանք նրան Հայոց աշխարհի կաթողիկոսության աթոռն էին խոստացել:

Եվ Պարսից արքան էլ, ազատներից այդպիսի բողոք լսելով, շտապ դեսպան ուղարկելով Հայոց Արտաշես թագավորի մոտ, նրան հրամայեց ճեպով ներկայանալ իրեն: Գրել էր, որ նրա հետ գա նաև Հայոց մեծ քահանայապետ Սահակը: Եվ նրանք ներկայացան արքունի դուռը, Պարսից արքան նախ առանձին հարցրեց Հայոց Արտաշես թագավորին, թե «Այդ ի՞նչ գործեր են, որոնց պատճառով քեզ ամբաստանում են Հայոց նախարարները»: Եվ նա, պատասխան տալով, ասաց. «Ամենակին չգիտեմ, թե՛ դրանք ինչ են ասում ու չարախոսում իմ դեմ, բայց ինչպես հնուց սովոր են թշնամաբար վարվել իրենց տերերի դեմ, այդպես էլ այժմ կամենում են կատարել իրենց չարամիտ նպատակը: Նրանք միշտ փոխել են իրենց իշխաններին և եղել են տիրատյացներ»:

Ղազար Փարպեցի. Հայոց պատմություն



Աղցք. Հայ Արշակունիների դամբարանը



14. ՏԻԵՋԵՐՎԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

IV դարի սկզբներին մի շարք պետությունների կողմից քրիստոնեությունը ճանաչվեց որպես պետական կրոն:

Սակայն ժամանակի ընթացքում Աստվածաշնչի այս կամ այն հատվածի վերաբերյալ առաջ քաշվեցին կարծիքներ, որոնք տարբերվում էին եկեղեցու հավատքից և պաշտոնական տեսակետից: Քրիստոնեական եկեղեցու պաշտոնապես ընդունված ուսմունքին (վարդապետությամբ) հակառակ քարոզվող մտքերը, գաղափարները կոչվեցին **հերետիկոսություն**, իսկ դրանց կողմնակիցներն ու տարածողները՝ աղանդավորներ և հերետիկոսներ: Այդ գաղափարները վտանգի տակ էին դնում քրիստոնեական ուսմունքն ու եկեղեցու միասնությունը: Դրանք քննարկելու համար այս կամ այն քաղաքի, նահանգի կամ երկրի հոգևորականները հրավիրում էին եկեղեցական ժողովներ: Առանձնապես կարևոր դեպքերում գումարվում էին քրիստոնեական բոլոր եկեղեցիների ներկայացուցիչների ընդհանուր ժողովներ, որոնք անվանում էին **տիեզերական ժողովներ**:



Նիկիայի ժողովը

Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում բնակվող **Արիոս** երեցի* սխալ քարոզների պատճառով IV դարում խախտվեց եկեղեցու խաղաղությունը: Արիոսը մերժում էր Սուրբ Երրորդության մեջ Որդու աստվածությունը: Արիոսի դեմ դուրս եկավ Ալեքսանդրիա քաղաքի **Ալեքսանդր** արքեպիսկոպոսը: Վերջինս այդ առթիվ հրավիրեց եկեղեցական ժողով, որը դատապարտեց Արիոսի ուսմունքը:

Տեսնելով, որ խռովությունը քրիստոնեական եկեղեցում մեծ թափ է ստանում, Հռոմի **Կոստանդիանոս Մեծ** կայսրը **325 թ.** մայիսի 20-ին Նիկիա քաղաքում հրավիրեց **Առաջին տիեզերական ժողովը**: Այն դատապարտեց Արիոսի ուսմունքը և նրան հեռացրեց



եկեղեցուց: Միաժամանակ ժողովի մասնակիցները ի մի բերեցին քրիստոնեական հավատքի գլխավոր կետերը, որոնք յուրաքանչյուր քրիստոնյա պետք է անգիր սովորեր և իմանար: Այն կոչվեց **Նիկիական կամ Զավատո հանգանակ**, որը մինչև օրս էլ բարձրաձայն ընթերցվում է եկեղեցում, հատկապես պատարագի ընթացքում: Նիկիայի տիեզերական ժողովը սահմանեց եկեղեցական կյանքը կարգավորող **20 կանոններ**:

Նիկիայի տիեզերական ժողովին մասնակցելու հրավեր ստացավ նաև Ս. Գրիգոր Լուսավորիչը: Նա, սակայն, իր փոխարեն ժողովին մասնակցելու ուղարկեց որդուն՝ **Արիստակես** եպիսկոպոսին: Արիստակեսը, մասնակցելով ժողովին, իր հետ Զայաստան բերեց Զավատո հանգանակն ու ժողովի ընդունած կանոնները: Դրանք ընդունվեցին Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից:



Անդրեյ Ռուբլյով. «Սուրբ Երրորդություն»

Երկրորդ տիեզերական ժողովը

Շուտով եկեղեցու ներքին վիճաբանություններում գլխավորը դարձավ մեկ այլ հարց՝ Սուրբ Զոգին Աստված է, թե՞ ոչ: Կոստանդնուպոլսի պատրիարք Մակեդոնը սկսեց քարոզել, որ Սուրբ Զոգին Աստված չէ: Այս նոր տեսությունը քննելու համար թեոդոսիոս I Մեծ կայսեր հրամանով **381 թ. Կոստանդնուպոլսում** հրավիրվեց **Երկրորդ տիեզերական ժողովը**: Կոստանդնուպոլսի տիեզերաժողովը դատապարտեց Մակեդոնի ուսմունքը և սահմանեց, որ **Սուրբ Զոգին ճշմարիտ Աստված է**, Զոր և Որդու հետ միասին, իբրև միասնական և անբաժանելի Սուրբ Երրորդություն: Երկրորդ տիեզերաժողովը վերահաստատեց Զավատո հանգանակը և լրացրեց այն՝ Սուրբ Զոգու մասին հատվածով: Ժողովը Սուրբ Երրորդության համար սահմանեց **«Մի աստվածություն, երեք անձինք»** բանաձևը:

Զայոց եկեղեցին ընդունում է Կոստանդնուպոլսի երկրորդ տիեզերական ժողովի բանաձևը և կանոնները:



Սարգիս Պիճակ.
«Սուրբ Երրորդություն»

Երրորդ տիեզերական ժողովը

V դարում քրիստոնեական եկեղեցուն շարունակվում էին բուռն բանավեճերը:

Կոստանդնուպոլսի պատրիարք Նեստորը առաջ քաշեց այն տեսությունը, որ Մարիամից ծնվել է Հիսուս մարդը և հետո միայն՝ մկրտության ժամանակ, աստվածային էությունը Սուրբ Հոգու միջոցով իջել է Քրիստոսի վրա:

431 թ. Եփեսոսում գումարված **Երրորդ տիեզերական ժողովը** դատապարտեց Նեստորի հայացքները:

Հայոց եկեղեցին Եփեսոսի տիեզերա-ժողովում ներկայացնում էին այդ ժամանակ Կ. Պոլսում գտնվող Ս. Սահակ Պարթևի և

Ս. Մեսրոպ Մաշտոցի աշակերտները:

Հայոց եկեղեցին ընդունում է միայն **առաջին երեք տիեզերական ժողովների որոշումներն ու կանոնները**, քանի որ դրանցում ամբողջացան Հավատո հանգանակի, այսինքն՝ քրիստոնեական դավանանքի (հավատքի) հիմնական դրույթները:

Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ո՞վ էր Արիոսը, և ի՞նչ էր քարոզում նա:
2. Ե՞րբ, որտե՞ղ և ո՞ւմ նախաձեռնությամբ հրավիրվեց I տիեզերական ժողովը: Ի՞նչ վճիռ ընդունեց ժողովը Արիոսի նկատմամբ:
3. Ո՞վ էր ներկայացնում Հայոց եկեղեցին I տիեզերաժողովում:
4. Ո՞րն էր II տիեզերաժողովը հրավիրելու պատճառը:
5. Որտե՞ղ և ե՞րբ այն հրավիրվեց:
6. Ինչպիսի՞ բանաձև ընդունեց II տիեզերաժողովը Սուրբ Երրորդության վերաբերյալ:
7. Ի՞նչ տեսություն առաջ քաշեց Նեստորը:



8. Ո՞ր տիեզերածողովը անդրադարձավ դրան: Ե՞րբ և ո՞ր քաղաքում գումարվեց այն:
9. Ինչպիսի՞ որոշում ընդունեց ժողովը:
10. Որտե՞ղ ամփոփվեցին առաջին երեք տիեզերածողովների որոշումները և ինչպե՞ս ենք անվանում այն:
11. Ովքե՞ր էին ներկայացնում Հայոց եկեղեցին Եփեսոսի տիեզերածողովում:

բ) Քննարկենք

Ինչո՞ւ տեղի ունեցան առաջին երեք տիեզերածողովները:

գ) Հարստացնենք մեր բառապաշարը

Տիեզերական ժողով
 Նիկիական հանգանակ
 Հավատո հանգանակ
 Աղանդ, աղանդավորություն, հերետիկոսություն
 Աղանդավոր, հերետիկոս

Բառարան

Երեց – քահանա:





Լրացուցիչ նյութ

Հայաստանյայց առաքելական սուրբ Եկեղեցու Հավատո հանգանակը

Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ,
 Յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից:
 Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ,
 Ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն յեութենէ Հօր:
 Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ,
 Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ արարած:
 Նոյն ինքն ի բնութենէ Հօր,
 Որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի,
 Երևելիք և աներևոյթք:
 Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝
 Մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս
 Ի Մարիամայ Սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով:
 Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ.
 Եւ զամենայն, որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք:
 Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ,
 Ելեալ ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր:
 Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր՝
 Ի դատել զկենդանիս և զմեռեալս,
 Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:
 Հաւատամք և ի Սուրբ Հոգին՝ յանեղն և ի կատարեալն,
 Որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յԱւետարանս:
 Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալսն և բնակեցաւ ի սուրբսն:
 Հաւատամք և ի մի միայն, յընդհանրական և յառաքելական Սուրբ Եկեղեցի,
 Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց,
 Ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց,
 Յարքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս:





15. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՎԱՏԻ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆ

Շահապիվանի ժողովը: Հովսեփ Հողոցմեցի (Վայոցձորեցի)



Ս. Վարդան Մամիկոնյան

428 թ. Մեծ Հայքի թագավորությունը վերածվեց պարսից պետության մահաճիճ մարզպանության: Այն կառավարում էր Սասանյան արքայի կողմից նշանակվող մարզպանը:

437 թ. հայոց նախարարների և հոգևորականների հավանությամբ կաթողիկոսական գահ է բարձրանում **Հովսեփ Ա Հողոցմեցին** կամ **Վայոցձորեցին (437-452)**: Սակայն նրա կաթողիկոսությունն այդպես էլ պաշտոնապես չհաստատվեց պարսից արքունիքի կողմից:

Եկեղեցին բարեկարգելու նպատակով Հովսեփ կաթողիկոսը **443 թ.** հրավիրեց **Շահապիվանի** եկեղեցական ժողովը: Ժողովին մասնակցում էին նաև մարզպան

Վասակ Սյունին, սպարապետ Վարդան Մամիկոնյանը և ուրիշ նախարարներ: Ժողովը խիստ պատիժներ սահմանեց աղանդների հետևորդների դեմ: Շահապիվանի ազգային-եկեղեցական ժողովում ընդունվեցին 20 կանոններ եկեղեցու բարեկարգության, աղանդավորության, ամուսնությունների ու ամուսնալուծությունների, աշխարհիկ ու հոգևոր պաշտոնների և այլ հարցերի վերաբերյալ:



Արտաշատի ժողովը: «Եղծ աղանդոց»



Եզնիկ Կողբացի

449 թ., պարսից հազարապետ Սիհրներսեհի ստորագրությամբ մի գրություն է ուղարկվում Յայաստան, որով քրիստոնեությունը հայտարարվում էր մոլորություն: Յայերին առաջարկվում էր թողնել քրիստոնեությունը և ընդունել զրադաշտական կրոնը:

Սիհրներսեհի նամակին պատասխանելու համար Յովսեփ կաթողիկոսը 450 թ. սկզբներին **Արտաշատում** ժողով հրավիրեց: Ժողովին մասնակցում էին մարզպան Վասակ Սյունին, սպարապետ Վարդան Մամիկոնյանը, եպիսկոպոսներ, ուրիշ նշանավոր նախարարներ ու հոգևորականներ: Ժողովում ընդունված պատասխան նամակում քննադատվում էր զրադաշտականությունը՝ որպես մտացածին և հակասականություններից կազմված մի կրոն: Ժողովականները կտրականապես մերժում են օտար կրոնը և երդվում հավատարիմ մնալ իրենց եկեղեցուն ու քրիստոնեությանը:

Արտաշատի ժողովի մասնակիցներից էր նաև **«Եղծ աղանդոց»** աշխատության հեղինակ **Եզնիկ Կողբացին**: Եզնիկ Կողբացին Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից էր: «Եղծ աղանդոց» («Աղանդների հերքում») գրքում հեղինակը վերլուծում և քննադատում է զրադաշտականությունը և քրիստոնեական մի շարք աղանդներ: Եզնիկը միաժամանակ մեկնաբանում է քրիստոնեության հիմնական դրույթները: Եզնիկ Կողբացու աշխատությունը մի կողմից պաշտպանում էր քրիստոնեական ուսմունքը, մյուս կողմից ազատագրական շարժման համար գաղափարական հիմք էր դառնում:



Առաջին քրիստոնեական մեծ պատերազմը

Ինչպես նշվեց, 449 թ. **Յազար II արքան** առաջ քաշեց կրոնափոխության պահանջ: Նա այն կարծիքին էր, որ Սասանյան տերության միասնությունն ապահովելու համար հպատակ բոլոր ժողովուրդները պետք է միևնույն կրոնի հետևորդներ լինեն: Այդ նպատակին հասնելու համար պարսից պետության սահմաններում ապրող քրիստոնյա ժողովուրդները պետք է կրոնափոխ լինեին, այսինքն՝ հրաժարվեին քրիստոնեությունից և ընդունեին զրադաշտականությունը: Եվ քանի որ Սասանյան Պարսկաստանի գերիշխանության տակ գտնվող երկրների մեջ առավել ծանրակշիռ էր Հայոց երկրի տեղը, հարվածն ուղղվում էր **հայերի**, առաջին հերթին՝ **Հայոց եկեղեցու** դեմ: Ամեն ինչ արվում էր, որպեսզի, Եղիշեի խոսքերով ասած, «**եկեղեցու փառքը նստնացնեն**»:

Արտաշատի ժողովից հետո Յազար II-ի պահանջով Տիգրան գնացին նշանավոր նախարարներ ոչ միայն Հայաստանից, այլև Վրաստանից և Աղվանքից: Վասակ Սյունին, Վարդան Մամիկոնյանը, Վահան Ամատունին և մյուս նախարարները պարսից արքունիքում ստիպված էին առերես ընդունել զրադաշտականությունը:

Նախարարների ուրացության լուրը զայրույթ և դիմադրություն առաջ բերեց երկրում: Դիմադրական այդ շարժման գլուխ կանգնեց Հայոց եկեղեցին՝ Ռովսեփ կաթողիկոսի ղեկավարությամբ: 450 թ. **Ղևոնդ Երեցի** ու նրան հա-



մախտի հոգևորականների գլխավորությամբ ժողովուրդը **Անգղ** ավանում հարձակվում է մոզերի վրա, երբ վերջիններս փորձում էին քանդել տեղի եկեղեցին և այն ատրուշան դարձնել: Ջարեհավանում ևս ապստամբ հայ բնակչությունը կոտորում է մոզերին: Անգղի դեպքերով երկրում սկիզբ է առնվում ժողովրդական շարժում պարսիկների դեմ:

Հայրենիք վերադարձած նախարարները շուտով հրաժարվում են կեղծ ուրացությունից և կանգնում ապստամբական շարժման գլուխ:



Հայոց պատերազմը

450-451 թթ. մեծ ապստամբությունը Սասանյանների դեմ Եղիշե պատմիչն անվանել է «**Հայոց պատերազմ**»: Յովսեփ կաթողիկոսը, Ղևոնդ Երեցը, Սահակի ու Մաշտոցի մյուս աշակերտները, հայոց հոգևոր դասը զինվորների կողքին էին: Իրենց ամենօրյա խոսքով նրանք բարձրացնում էին զորքի մարտական ոգին:

Հազկերտ II-ը մեծ բանակ ուղարկեց Հայաստան՝ ապստամբությունը ճնշելու համար: Հակառակորդ բանակները հանդիպեցին Արտազ գավառի **Ավարայրի** դաշտում՝ **Տղմուտ** գետի ափին:

Ավարայրի ճակատամարտը սկսվեց **451 թ. մայիսի 26-ին** և տևեց մի ամբողջ օր: Հայոց բանակից այդ օրը զոհվեց **1036** հոգի, այդ թվում՝ ինը նախարար: Պարսից կողմի կորուստները եռապատիկ ավելի էին:

Ավարայրը ընդմիշտ դրոշմված է հայ ժողովրդի հավաքական հիշողության մեջ: Ճակատամարտում զոհված Վարդան Մամիկոնյանն ու նրա զինակիցները դասվեցին Հայոց եկեղեցու սրբերի կարգում՝ **Վարդանանք** անունով: Նրանց հիշատակը եկեղեցին ամեն տարի տոնում է Բուն Բարեկենդանին նախորդող հինգշաբթի օրը:



Ճակատամարտին հաջորդող դեպքերը

Ավարայրը հարկադրեց Սասանյան արքունիքին հրաժարվել կրոնափոխության քաղաքականությունից: Հայաստանից հետ կանչվեց պատժիչ բանակը, բռնությամբ կրոնափոխ եղած հայերին թուլատրվեց նորից քրիստոնեություն ընդունել: Սակայն պատժվեցին ապստամբությանը մասնակից շատ նախարարներ ու հոգևորականներ: Ինը եկեղեցականներ, այդ թվում Հովսեփ Վայոցձորեցին ու Ղևոնդ Երեցը մահապատժի ենթարկվեցին Պարսկաստանում: Հայոց եկեղեցին նրանց հիշատակը տոնում է **«Ղևոնդյանց քահանայից»** անունով:

460-ական թթ. Սասանյան արքունիքը դարձյալ վերադառնում է կրոնափոխության քաղաքականությանը: Որոշ հայ նախարարներ հարկադրված ուրանում են քրիստոնեությունը: Դրան հակառակ՝ երկրի հայրենասեր ուժերը միավորվում են կաթողիկոս **Գյուտ Արաիեզացու (461-478)** շուրջը:

Գյուտ կաթողիկոսը Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից էր: 461 թ. նա կաթողիկոս էր ընտրվել առանց պարսից Պերոզ արքայի համաձայնության: Նա ամեն կերպ աջակցում էր քրիստոնեական հավատի պաշտպանության համար Սասանյանների դեմ ապստամբած Աղվանից Վաչե թագավորին:

Հայոց հայրապետի հայրենասիրական գործունեությունն առաջ է բերում ուրացողների զայրույթն ու ատելությունը: Նրանք բազմիցս զրպարտում են կաթողիկոսին պարսից արքունիքում: Հալածանքներ են սկսվում նաև կաթողիկոսի կողմնակիցների, հատկապես Մովսես Խորենացու դեմ: 471 թ. կաթողիկոսը կանչվում է Տիգրան և հեռացվում գահից: Շուտով՝ 478 թ., Գյուտ կաթողիկոսը վախճանվում է: Նոր կաթողիկոս է ընտրվում **Հովհաննես Սանդակունին (478-490)**:



Ս. Մովսես Խորենացի



Վահանանց շարժումը և հանուն հավատի մղված պայքարի հաղթանակը

481 թ. վրաց թագավոր Վախթանգ Գորգասարը սպանում է Գուգարքի բղեշխ՝ ուրացող Վազգենին: Ջրադաշտականություն ընդունելով՝ նա կրակապաշտ էր դարձրել իր զավակներին, նույնը պարտադրելով նաև կնոջը՝ **Շուշանիկին (Վարդենի)**, որը Վարդան Մամիկոնյանի դուստրն էր: Շուշանիկը հրաժարվում է և ծանր տանջանքներից հետո նահատակվում (հետագայում հայ և վրաց եկեղեցիների կողմից դասվում է սրբերի կարգին): Վազգենի սպանությունը փաստորեն նշանակում էր ապստամբության սկիզբ Սասանյան պետության դեմ: Հայ նախարարները որոշում են միանալ ապստամբությանը: Հայոց այրուծին ապստամբության ղեկավար է ընտրում **Վահան Մամիկոնյանին**՝ Վարդան Մամիկոնյանի եղբորորդուն:

481-484 թթ. հայոց զորքը Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ հաղթական կռիվներ է մղում պարսիկների դեմ: Ազատագրական մարտերին մասնակցում էր նաև կաթողիկոս Հովհաննես Մանդակունին: Մարտերից մեկում նա նույնիսկ վիրավորվում է: Ծերունագարդ կաթողիկոսի ներկայությունը ոգևորում էր հայ ռազմիկներին:

484 թ. Միջին Ասիայում պարսից զորքի ծանր պարտությունից և Պերոզի սպանությունից հետո գահ բարձրացած Վաղարշ թագավորը բանակցություններ է սկսում հայ ապստամբների հետ: Նվարսակ գյուղաքաղաքում կնքված հաշտության համաձայն՝ հայ նախարարներն իրավունք են ստանում ինքնուրույն տնօրինել երկրի ներքին գործերը, իսկ հայ ժողովուրդը ազատորեն քրիստոնեությունը դավանելու իրավունք է ձեռք բերում:

Պարսից արքունիքը ստիպված էր ընդունել այդ պայմանները: 485 թ. աշնանը Վաղարշը Վահան Մամիկոնյանին հանձնեց երկրի մարզպանի պաշտոնը: Այսպիսով՝ 450-451 և 481-484 թվականների ազատագրական պայքարի շնորհիվ հայ ժողովուրդը պաշտպանեց իր ազատությունն ու հոգևոր ինքնուրույնությունը: **Քրիստոնեությունը Սասանյան արքունիքի կողմից մեկընդմիշտ ճանաչվեց որպես Հայաստանի պաշտոնական կրոն:**



Ս. Շուշանիկ



Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ի՞նչ կարգավիճակ ստացավ Մեծ Հայքը Արշակունյաց թագավորության անկումից հետո:
2. Ե՞րբ և ո՞ւմ հրավերով գումարվեց Շահապիվանի եկեղեցական ժողովը: Ովքե՞ր էին մասնակցում ժողովին:
3. Ինչպիսի՞ հարցեր քննարկվեցին Շահապիվանի եկեղեցաժողովում:
4. Ի՞նչ էր առաջարկվում հայերին Սիհրներսեհի նամակում:
5. Ովքե՞ր էին մասնակցում Արտաշատի ժողովին: Ինչպիսի՞ որոշում ընդունեց ժողովը:
6. Ի՞նչ պահանջեց Հազկերտ II-ը Արտաշատի ժողովի պատասխան նամակը ստանալուց հետո:
7. Ի՞նչ որոշում ընդունեցին հայ նախարարները պարսից արքունիքում:
8. Ի՞նչ դեր ունեւ եկեղեցին երկրում սկիզբ առած դիմադրական շարժման մեջ:
10. Ո՞վ փոխարինեց Գյուտ Արահեզացուն կաթողիկոսական աթոռին:
11. Ո՞ր իրադարձությամբ սկսվեց 481-484 թթ. ազատագրական շարժումը: Ո՞վ ղեկավարեց ապստամբությունը:
13. Ինչպիսի՞ մասնակցություն ունեցավ ազատագրական պայքարին Հայոց կաթողիկոսը:
- 14 Որտե՞ղ սկսվեցին հայ-պարսկական բանակցությունները: Դրանք ի՞նչ արդյունքներ ունեցան:

բ) Քննարկենք

1. Հայոց եկեղեցու կյանքում ի՞նչ կարևոր իրադարձություններ եղան 443 թ.:
1. Ո՞րն էր, ձեր կարծիքով, Հազկերտ II-ի օրոք տարվող կրոնափոխության քաղաքականության գլխավոր նպատակը: Հայերն ինչո՞ւ չընդունեցին այդ առաջարկը: Փորձե՛ք հիմնավորել պատասխանը:
3. Եզնիկ Կողբացու աշխատությունը գաղափարական հիմք դարձավ ազատագրական շարժման համար: Հիմնավորե՛ք այս միտքը՝ օգտագործելով նաև լրացուցիչ նյութը:
4. Ինչպե՞ս եք գնահատում նախարարների ուրացությունը պարսից արքունիքում: Ծի՞շտ էր, ձեր կարծիքով, նրանց որոշումը, թե՞ ոչ:
5. Փորձե՛ք գնահատել 450-451 և 481-484 թվականների հայ ազատագրական պայքարի արդյունքները:



գ) Հարստացնեք մեր բառապաշարը

Վարդանանք

Բառարան

Պատիվ – այդպես էին անվանում նախարարների ժառանգաբար փոխանցվող պաշտոնները:

Սնոտիապաշտ – սնոտի՝ դատարկ բաներ պաշտող, սնահավատ:

Ճակատագրապաշտ – ճակատագրին հավատացող մարդ:

Լրացուցիչ նյութ

Ճակատագիր եւ կամքի ազատություն

... Պարզ է, որ աստղը չէ պատճառը ինչպես թագավորության, այնպես էլ հզորության կամ հարստության, մանավանդ որ տեսնում ենք հարուստներին աղքատացած և աղքատներին՝ հարստացած: Մի՞թե այն էլ կարող են ասել, որ միևնույն աստղը կարող է և՛ հարստության ու աղքատության, և՛ զորեղության ու անզորության պատճառ լինել. քանի որ հզորներին ևս տեսնում ենք հաճախ անզորացած ու անզորներին՝ զորեղացած, ինչպես և չարերին՝ խելոքացած, խելոքներին՝ չարացած: Եվ որտե՞ղ է մնում այն, որ ասում են, թե ինչ որ ճակատագրով գրված է, անհնար է, որ վրիպի, այլ «փառավոր» գրվածը փառավոր է, իսկ «թշվառ»-ը՝ թշվառ: Եվ ճակատագրով որտեղ կամ ուն ձեռքով (մեռնելը) վճռված է, ըստ այնմ էլ (մարդիկ) մեռնում են. հնարավոր չէ սահմանված ճակատագրից շեղվել:

... Եվ կամ՝ երբ ավազակախումբը արշավում է երկիրը՝ մարդկանց կողոպտելու և կոտորելու համար, թող զորք չհավաքեն ու իրար ետևից գնդեր չկազմեն՝ երկրից ավազակներին դուրս քշելու համար, այլ թող պատճառաբանեն, թե՛ «երկրի ճակատագիրն է ավազակից կոտորվել, մենք ինչո՞ւ պիտի դեմ գնանք ճակատագրին»: Բայց զորքեր գումարելով և երկրից թշնամուն դուրս վռնդելով՝ ցույց են տալիս, որ կոտորածները ճակատագրի ինչ-որ սահմանումով չեն տեղի ունենում, այլ ավազակի բռնությամբ, որը գալով անհազաբար կոտորում է ժողովրդին, զրկում ունեցվածքից:


Եզնիկ Կողբացի. Եղծ աղանդոց





16. ՔԱՂԿԵՂՈՆԻ ԺՈՂՈՎԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԵՎԵՆՑԻՆ

451 թվականը Հայոց պատմության համար բախտորոշ տարի էր: Նույն թվականի հոկտեմբերին Կոստանդնուպոլսին մերձակա Քաղկեդոն բնակավայրում տեղի ունեցավ մի իրադարձություն, որն իր հետագա նշանակությամբ ճակատագրական դարձավ քրիստոնեական աշխարհի համար: Քաղկեդոնի ժողովը սկիզբ դրեց այն վեճերին ու տարաձայնություններին, որոնց արդյունքում քրիստոնեական եկեղեցին ի վերջո պառակտվեց՝ Արևելյան (հակաքաղկեդոնական) և Արևմտյան (քաղկեդոնական) եկեղեցիների: Հետագայում Արևմտյան եկեղեցին բաժանվեց օրթոդոքս և կաթոլիկ եկեղեցիների: Այսպիսով՝ հայոց, ասորական, ղպտի, եթովպական, հնդկ-մալաբար (մալանկարա) եկեղեցիները առանձնացան և կազմեցին առանձին ընտանիք, որը չընդունեց Քաղկեդոնի ժողովի որոշումները:



Քաղկեդոնի ժողովը

Քաղկեդոնի ժողովը

Եփեսոսի տիեզերաժողովն ընդունեց, որ Քրիստոսի անձի մեջ անբաժանելիորեն միացած են թե՛ մարդկային և թե՛ աստվածային բնությունները:

Շուտով, սակայն, նեստորականության դեմ պայքարում ծնունդ առավ մի նոր տեսություն, ըստ որի՝ Քրիստոսի մեջ մարդկային բնությունը լուծված է աստվածային բնության մեջ, ինչպես մի կաթիլ մեղրն օվկիանոսի մեջ: Այս նոր տեսության հեղինակը Եվտիմես անունով մի վարդապետ էր, որ Կ. Պոլսի



վանքերից մեկի վանահայրն էր: Եվտիքեսի ուսմունքը, որը հայտնի է միաբնակություն (միաբնակ – հունարեն՝ մոնոֆիզիտ) անունով, ժամանակին մեծ խառնաշփոթություն առաջ բերեց: 451 թ. կայսրը եկեղեցական ժողով հրավիրեց, որը գումարվեց **Քաղկեդոնում**:

Ժողովը դատապարտեց Եվտիքեսի ուսմունքը և ընդունեց Հիսուսի երկու բնությունների բանաձևը: Քաղկեդոնի ժողովի ընդունած երկաբնակ դավանաբանական բանաձևը քրիստոնեական եկեղեցու մեջ խա-

ղաղություն հաստատելու փոխարեն ավելի մեծ խռովությունների ու գժտությունների պատճառ դարձավ: Արևելյան եկեղեցիների կողմից այն ընկալվեց որպես նեստորականության վերածնունդ:

Ինչպես նեստորականությունը, այնպես էլ ծայրահեղ միաբնակության վերաբերյալ Եվտիքեսի ուսմունքը մերժվեց Հայոց եկեղեցու կողմից:

Հայոց եկեղեցու դիրքորոշումը

Հայոց եկեղեցու որևէ ներկայացուցիչ Քաղկեդոնի ժողովին չէր մասնակցում, քանի որ երկիրը գտնվում էր պատերազմական վիճակում: Հայոց եկեղեցին, հավատարիմ մնալով առաջին երեք տիեզերաժողովների որոշումներին, շարունակեց դավանել Քրիստոսի մեջ մարդկային և աստվածային բնությունների անբաժանելի միությունը: Մինչև V դարի վերջը Հայոց եկեղեցին չեզոքություն էր պահպանում՝ հեռու մնալով Բյուզանդիայում ընթացող դավանաբանական վեճերից ու կրոնական հակամարտությունից:



Ավարայրի ճակատամարտը. Շարակնոց, 1482 թ.



ԴՎԻՆԻ առաջին և երկրորդ ժողովները

V դարի երկրորդ կեսին բյուզանդական կայսրերը ստիպված էին միջամտել Քաղկեդոնի խնդրին՝ փորձելով հաշտեցնել դավանաբանական տարբեր ուղղությունների կողմնակիցներին: Այսպես՝ **482 թ.** բյուզանդական կայսեր օրոք ընդունված հրովարտակը փաստորեն դատապարտում էր Քաղկեդոնի ընդունած երկաբնակ վարդապետությունը և պաշտպանում **միավորյալ մեկ բնություն** բանաձևը:



Խոյակ Դվինից

Քաղկեդոնի որոշումների այսպիսի մեկնաբանությունը միանգամայն ընդունելի էր հայերի համար, ինչը և իր արտահայտությունն է գտնում Դվինի առաջին եկեղեցական ժողովի որոշումներում: **506 թ. Բաբկեն Ա** կաթողիկոսը (**490-516**) Դվինում հրավիրում է եկեղեցական ժողով, որին մասնակցում էին նաև վրաց և աղվանից եկեղեցիները, հայոց մարզպան Վարդ Մամիկոնյանը և այլ նախարարներ:

Ժողովի մասնակիցները քննարկում են նեստորականության խնդիրը, քանի որ պարսից պետության հովանավորության շնորհիվ այն մեծ տարածում էր ստացել Պարսկաստանում և սկսել էր թափանցել նաև Հայաստան: Ժողովը դատապարտում է նեստորական ուսմունքը:

Այսպիսով՝ Հայոց եկեղեցին առաջին անգամ հստակորեն արտահայտում է իր դիրքորոշումը՝ **մերժելով** նեստորականությամբ քողարկված Քաղկեդոնի ժողովի ուսմունքը:

VI դ. Բյուզանդական կայսրության քաղաքականության մեջ գերակշռող դեր է սկսում խաղալ կրոնական գործառույթը: Բյուզանդական կայսրերը



ավելի մեծ ուշադրություն են սկսում դարձնել Քաղկեդոնի ժողովի պատճառով բաժանված ընդհանրական եկեղեցու խնդիրներին: V դ. վերջին բյուզանդական մի քանի կայսրեր հատուկ հրովարտակներով փորձում էին մեղմել կայսրության մեջ առաջացած քաղկեդոնական և հակաքաղկեդոնական ճամբարների մրցակցությունը:



Դվինի Ս. Գրիգոր եկեղեցու ավերակները

VI դ. երկրորդ տասնամյակից սկսած բյուզանդական կայսրերը որդեգրում են այլ քաղաքականություն. այժմ նրանց հիմնական նպատակն էր բռնի ուժով Քաղկեդոնի ժողովի որոշումներն ընդունելի դարձնել Արևելյան եկեղեցիների կյանքում:

Եթե մինչև VI դ. կեսերը Հայոց եկեղեցին մերժում էր նեստորականությունն ու քաղկեդոնականությունը՝ իբրև սխալ և Հայաստանում:

տանից դուրս գտնվող վարդապետություններ, ապա դրանից հետո ստիպված էր պայքարել նեստորականության դեմ՝ իբրև Հայաստան ներթափանցած հերետիկոսության:

547 թ. առևտրականների անվան տակ մի խումբ նեստորականներ Պարսկաստանից գալիս են Հայաստան և հաստատվում Դվինի մոտ գտնվող Մանաճիհրի վանքում: Նեստորականները եռանդուն գործունեություն են ծավալում՝ իրենց շարքերն ընդգրկելով շատ տեղացիների:

Ներսես Բ կաթողիկոսը (548-557) 554 թ. գումարում է **Դվինի երկրորդ եկեղեցական ժողովը**, որը, այլ հարցերի թվում, քննարկում է նաև նեստորականների հարցը: Ժողովի որոշմամբ Մանաճիհրի վանքը քանդվում է, իսկ նեստորականները վտարվում են Հայաստանից:

Դվինի երկրորդ ժողովը մեկ անգամ ևս քննարկում է քաղկեդոնականության հարցը և դատապարտում այն:

Դվինի երկրորդ ժողովի որոշումներով հայությունը վերջնականապես հաստատում էր իր ազգային-եկեղեցական ինքնորոշումը՝ Հայոց եկեղեցու դավանանքը լավագույնս արտահայտելով նույն ժողովի Հավատո հանգանակում:





Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ո՞վ էր Եվտիքեսը և ի՞նչ էր քարոզում:
2. Ե՞րբ և ո՞ւմ կողմից հրավիրվեց Քաղկեդոնի եկեղեցական ժողովը:
3. Հայոց եկեղեցին մասնակցե՞ց ժողովին: Ինչո՞ւ:
4. Ե՞րբ հրավիրվեց Դվինի I եկեղեցաժողովը: Ո՞վ էր Հայոց կաթողիկոսն այդ ժամանակ: Հայ հոգևորականներից բացի, ովքե՞ր էին մասնակցում ժողովին:
5. Կրոնական ո՞ր ուղղության հարցն է քննարկվել Դվինի I ժողովում:
6. Ի՞նչ փոփոխություն տեղի ունեցավ Բյուզանդիայի քաղաքականության մեջ:
7. Որտե՞ղ էին հիմնավորվել նեստորականները Հայաստանում:
8. Ե՞րբ հրավիրվեց Դվինի երկրորդ ժողովը: Ո՞ւմ կողմից: Ի՞նչ որոշումներ ընդունեց ժողովը:

բ) Քննարկենք

1. Կայսերական արքունիքն ինչո՞ւ էր հաճախ խառնվում կրոնական-դավանաբանական վեճերին: Ինչպիսի՞ն էր բյուզանդական կայսրերի դիրքորոշումը Քաղկեդոնի ընդունած երկաթնակ վարդապետության նկատմամբ V դարի երկրորդ կեսին:
2. Ինչպիսի՞ն էր քաղկեդոնականության նկատմամբ Հայոց եկեղեցու վերաբերմունքը V դարի երկրորդ կեսին և VI դարի սկզբներին:
3. Ինչպիսի՞ կարևոր դեր ունեցավ Դվինի երկրորդ ժողովը:

գ) Հարստացնենք մեր բառապաշարը

Միաբնակություն
Երկաթնակություն
Միաբնակ-ուղղափառ

Բառարան

Ղպտի – Եգիպտոսի բնիկ ժողովուրդը:





Լրացուցիչ նյութ

Քաղկեդոնի ժողովը

Քաղկեդոնի ժողովը չէր միացնում, այլ մեծ ճեղքվածքներ էր բացում քրիստոնեության մեջ: Ժողովի վերջին նիստում արդեն նկատվում էր ապագա մեծ հակառակությունը Հռոմի և Կ.Պոլսի միջև: Պապի լիազորների բացակայությամբ ընդունվել էր 28-րդ կանոնը, որի մեջ ասված էր, թե քանի որ Կ.Պոլիսը կայսերական մայրաքաղաք է, իբրև եկեղեցական աթոռ պիտի վայելի այն պատիվն ու իրավունքները, որոնք հատկացված են Հռոմի աթոռին: Լևոն Ա պապի լիազորները բողոքում էին այդ կանոնի դեմ: Բայց նրանց բողոքը նշանակություն չունեցավ: Փաստն այն էր, որ Կ.Պոլսի տիրապետական ձգտումները կատարյալ բավարարություն էին ստանում, իսկ ապագայում բյուզանդական եկեղեցին Հռոմից բաժանվելու և իր կատարյալ անկախությունը հաստատելու համար հենց այս քաղկեդոնական կանոնի վրա պիտի հենվեր:

Բայց ավելի մեծ էր այն բացասական դերը, որ կատարեց Քաղկեդոնի ժողովը Արևելքի քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ: Նրա ընդունած երկաթնակ աստվածաբանական որոշումը մեծ խառնակություններ առաջացրեց Երուսաղեմում, Ալեքսանդրիայում և Անտիոքում: Երուսաղեմում ծագեց ապստամբություն, որի ղեկավարները պնդում էին, թե Քաղկեդոնի ժողովը նեստորականության վարդապետությունն է ընդունել:

Ալեքսանդրիայի անկարգություններն ավելի մեծ չափեր ընդունեցին: Կայսերական կառավարությունը կարողացավ ճնշել դրանք միայն զինված ուժի միջոցով: Քաղկեդոնով սկիզբ առած խլրտումներն ու հուզումները շարունակվեցին մոտ 200 տարի և: Աֆրիկյան և սիրիական ժողովուրդները օտարանում էին Բյուզանդիայից: Դա նշանակում էր, որ կայսրությունը զրկվում է ուժեղ ստեղծագործող տարրերից: Սա անդրադառնում էր նաև Բյուզանդիայի՝ իբրև պետության, ճակատագրի վրա: Լևոն Ա պապը, Պուլքերիա կայսրուհին և Մարկիանոս կայսրը Քաղկեդոնի ժողովով հող էին նախապատրաստում իսլամի հաղթական արշավանքների համար: Երբ իսլամը դուրս եկավ Արաբիայի անապատներից, բյուզանդականությունն այնքան էր զգվեցրել աֆրիկյան և այլ ժողովուրդների, որ նրանք հոժարությամբ ընդունեցին այդ նոր կրոնը:

Լեոն. Հայոց պատմություն



17. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՑ ԵՎ ԱՂՎԱՆԻՑ ԵԿԵՂԵՑԻՆՆԵՐԻ ՀԵՏ V - VII դարերում

Վրաց եկեղեցու առանձնացումը

591թ. Կ. Պոլսում Մորիկ կայսեր հրամանով գումարվում է եկեղեցական **ժողով**: Ժողովին մասնակցելու համար հրավիրվում են ոչ միայն Հայաստանի բյուզանդական, այլև պարսկական բաժնի բոլոր եպիսկոպոսները: Հայոց կաթողիկոս **Մովսես Բ Եղիվարդեցին (574-604)** պատվիրակներ է ուղարկում ժողովին մասնակցելու: Բյուզանդական կողմը Մովսես Բ-ին առաջարկում է ընդունել քաղկեդոնականություն և կաթողիկոսական աթոռը Դվինից փոխադրել բյուզանդական մաս: Հայոց եկեղեցին մերժում է այդ առաջարկը և շարունակում պայքարն ընդդեմ քաղկեդոնականության: Այս պայքարի մեջ Հայոց եկեղեցու կողքին էին նաև Վրաց և Աղվանից եկեղեցիները, որոնք III-IV դարերում քրիստոնեությունն ընդունել էին շնորհիվ Հայոց եկեղեցու քարոզիչների:



Ս. Գևորգ.
Բյուզանդական փղոսկրե
գարդաքանդակ

Մինչև VII դարի սկիզբը Հայոց և վրաց եկեղեցիները միասնական էին և չունեին դավանաբանական տարբերություններ: Վրաց կաթողիկոսին ձեռնադրում էր Հայոց կաթողիկոսը:

VII դարի սկզբներին քաղաքական նկատառումներով վրաց իշխանները և եկեղեցին ընդունում են քաղկեդոնականություն: Վրաց Կյուրիոն կաթողիկոսը, որը ձեռնադրվել էր Մովսես Բ-ի կողմից, վերջինիս մահից հետո հարում է քաղկեդոնականությանը: Վրաց կաթողիկոսն անտեսում է Հայոց եկեղեցու ջանքերն ու հորդորները: Ի վերջո, Աբրահամ Ա կաթողիկոսը մի շրջաբերական նամակով Վրաց եկեղեցին անջատում է Հայոց եկեղեցուց (605-608 թթ.):

Այս անջատման մեջ հատկապես իր դերն ունեցավ հայերին, վրացիներին և աղվաններին քաղկեդոնական դարձնելու բյուզանդական քաղաքականությունը: Այսպիսով՝ **608 թ. վրաց եկեղեցին բաժանվում է Արևելյան եկեղեցական ընտանիքից** և միանում բյուզանդական եկեղեցուն: Այս բաժանման պատճառով վրաց եկեղեցին մաս կազմեց օրթոդոքս եկեղեցուն՝ ընդունելով



Ամարասի Ս. Գրիգոր եկեղեցին

Կ. Պոլսի տիեզերական պատրիարքի առաջնայնությունը, հունական եկեղեցու ծեսերն ու արարողությունները:

Աղվանից եկեղեցու կազմավորումը

Քրիստոնեությունը Աղվանք է մուտք գործել Հայաստանից: 301 թ. Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակվելուց հետո Ս. Գրիգոր Լուսավորիչն իր թռռանը՝ Գրիգորիսին, ձեռնադրեց Աղվանից եպիսկոպոս և ուղարկեց Աղվանք՝ տեղի եկեղեցին կազմակերպելու: Հայտնի է նաև, որ Ս. Մեսրոպ Մաշտոցը հայոց և վրաց գրերի ստեղծումից հետո ստեղծեց նաև աղվանից գիրը:

Վաչագան Բարեպաշտ թագավորը

V դարում Հայոց արևելից կողմերում և բուն Աղվանքում իշխում էր Առանշահիկների թագավորական ընտանիքը: Առանշահիկների հարստության ամենանշանավոր ներկայացուցիչը **Վաչագան III Բարեպաշտն էր (487-510)**: Վաչագան թագավորը գահ բարձրացավ տասնամյակներ շարունակված անիշխանությունից ու քայքայումից հետո: Դառնալով թագավոր՝ նա հրաժարվեց մինչ այդ բռնությամբ պարտադրված կրակապաշտությունից, կրկին ընդունեց իր պապերի քրիստոնեական հավատը, դարձավ նրա պաշտպանն ու եռանդուն տարածողը, իր երկրի լուսավորիչն ու շինարարը: Այս մեծ ծառայությունների ու բարձր արժանիքների համար էլ ժողովուրդը նրան կոչեց Վաչագան Բարեպաշտ:

Իր հայրենասիրական գործունեությունը Վաչագանը սկսեց եկեղեցու շենացումից ու դպրության տարածումից: «Աղվանից աշխարհի պատմությունը» գրքի հեղինակ Մովսես Կաղանկատվացին վկայում է, որ Վաչագան թագավորը կառուցել է տարվա օրերի թվով եկեղեցիներ: Նրա հանձնարարությամբ Հայաստանից Ամարաս են բերվում Ս. Գրիգոր Լուսավորչի և Ս. Զոհիսիմն ու Ս. Գայանե կույսերի մասունքների մի մասը:



Աղվենի ժողովը

Երկրի կյանքը կարգավորելու համար անհրաժեշտ էին կայուն օրենքներ: Այդ նպատակով երկարատև նախապատրաստությունից հետո Վաչագան Բարեպաշտի հրամանով **Արցախի Աղվեն** թագավորական ամառանոցում գումարվեց ժողով: Ժողովին մասնակցում էին Արցախի, Ուտիքի, ինչպես նաև բուն Աղվանքի ազնվականները և եպիսկոպոսները: Ժողովում ընդունված կանոններն արգելում էին մերձավոր ազգականների միջև ամուսնությունը, մահացածների վրա անպարկեշտ լացուկոծ անելը, կախարհությունը և այլն: Սահմանվում էր եկեղեցի հաճախելու կարգը: Ժողովի կանոնները պաշտպանում էին ոչ միայն ազնվատոհմիկների, այլև ժողովրդի բոլոր խավերի շահերը:

Վաչագան Բարեպաշտը կարողացավ բարձրացնել իր երկրի ազգային ոգին ու քրիստոնեական հավատը: Հայրենասեր արքայի գործունեության շնորհիվ քրիստոնեությունը վերջնականապես հաստատվեց Աղվանքում և Հայոց Արևելից կողմերում:

Աղվանից կաթողիկոսությունը VI դարում

VI դարի կեսերին Աղվանքի մարզպանությունը ստեղծեց իր կաթողիկոսությունը: Առաջին կաթողիկոս դարձավ **Աբաս եպիսկոպոսը (551-595)**: Չնայած այդ հանգամանքին՝ Աղվանից կաթողիկոսությունը մնաց իբրև Հայոց եկեղեցու անբաժան մասը: Աղվանից կաթողիկոսական աթոռի հիմնադիրը սահմանեց կարգ, որով իր հաջորդները պետք է ձեռնադրվեին Ամենայն Հայոց հայրապետի կողմից:

Աղվանից (հետագայում՝ Գանձասարի) կաթողիկոսությունը գոյություն ունեցավ մինչև XIX դարի սկզբները և վերացվեց ցարական կառավարության հրամանով:





Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Ովքե՞ր էին հրավիրված մասնակցելու 591 թ. Կ.Պոլսի եկեղեցաժողովին:
2. Ի՞նչ առաջարկներ արեց կայսրությունը Մովսես Բ կաթողիկոսին: Ինչպիսի՞ պատասխան տվեց դրան Հայոց հայրապետը:
3. Ե՞րբ և ինչո՞ւ վրաց եկեղեցին առանձնացավ Հայոց եկեղեցուց:
4. Ո՞վ էր Աղվանից առաջին եպիսկոպոսը:
5. Ո՞ր հարստությունն էր իշխում Աղվանքում V դարում: Ո՞վ էր այդ հարստության ամենանշանավոր ներկայացուցիչը:
6. Ինչի՞ց սկսեց իր գործունեությունը Վաչագան Բարեպաշտը:
7. Որքա՞ն եկեղեցիներ կառուցվեցին Վաչագանի օրոք: Որտեղի՞ց է մեզ հայտնի այդ թիվը:
8. Ինչպիսի՞ որոշումներ ընդունեց Աղվենի ժողովը:
9. Ո՞վ էր Աղվանից կաթողիկոսության առաջին կաթողիկոսը, և ե՞րբ է նա պաշտոնավարել: Ի՞նչ կարևոր կարգ սահմանվեց նրա օրոք:
10. Մինչև ե՞րբ գոյություն ունեցավ Աղվանից կաթողիկոսությունը: Ուրիշ ի՞նչ անունով էր այն հայտնի:

բ) Քննարկենք

1. Փորձե՛ք գնահատել Վաչագան Բարեպաշտի գործունեությունը:
2. Ո՞րն էր, ձեր կարծիքով, Աղվենի ժողովի ընդունած կանոնների հիմնական նպատակը:
3. Հասնենա՞տե՛ք Աղվենի ժողովի որոշումները Աշտիշատի և Շահապիվանի ժողովների որոշումների հետ: Գտե՛ք ընդհանրությունները:





Լրացուցիչ նյութ

Վրաց եկեղեցու առանձնանալու գործում իր բացասական դերն ունեցավ նաև բյուզանդական եկեղեցու կողմից բարձրացված ինը աստիճանների խնդիրը (խոսքը վերաբերում է հոգևոր նվիրապետական աստիճաններին): Բյուզանդական եկեղեցին պնդում էր, որ քանի որ Հայոց եկեղեցու հովվապետի՝ կաթողիկոսի աստիճանը հաջորդում է անմիջապես եպիսկոպոսին, ուրեմն իր կարգավիճակով այն հավասար է արքեպիսկոպոսի կամ մետրոպոլիտի աստիճանին: Հայոց եկեղեցուն առաջարկվում էր կան լրացնել դրանք, այսինքն՝ սահմանել նոր աստիճաններ, կան ընդունել պատրիարքական աթոռներից մեկի գերագահությունը: Այն, որ հարցն արհեստականորեն էր բարձրացված, երևում է թեկուզ այն բանից, որ Հռոմի պապին հաճախ անվանում են նաև Հռոմի եպիսկոպոս, բայց ոչ ոք կասկածի չի առնում նրա՝ կաթողիկ եկեղեցու ղեկավար լինելը: Փաստորեն, ինը աստիճանների հարցը պատրվակ էր Հայոց եկեղեցու անկախության նկատմամբ ունեցած գոյություններ կատարելու համար: Մյուս կողմից այն լարվածությունն առաջ բերեց վրաց և աղվանից եկեղեցիների միջև, քանի որ նրանց մեջ մրցակցություն սկսվեց Հայոց եկեղեցուց հետո երկրորդ աթոռը կոչվելու պատվի համար:

*Մ. Օրմանյան. Ազգապատում,
հատ. Ա*





Լրացուցիչ նյութ

Աղվանից աշխարհի Ջվանշիր իշխանը

VI դարում աղվանական նախարարների մեջ գերակշռող դիրք ստացավ մի տոհմ, որ կոչվում էր Միհրանյան, և որի մասին ավանդություն կար, թե նա սերված է Միհրան անունով մեկից, որ պարսկական ծագում ուներ և Սասանյան թագավորների ազգակիցն էր:

Մի շարք հանգամանքներ հավանական են դարձնում, որ այդ գաղթականությունը ոչ թե բուն Պարսկաստանից դուրս եկավ, այլ այն նահանգից, ուր գտնվում է Չողական ճորա դուռը (Դերբենտի լեռնանցքը): Այդ ամբողջ նահանգը, ինչպես գիտենք, կոչվում է Շիրվան: Հռչակավոր դռների պահպանության համար պարսից կառավարությունը մշտական զորք էր պահում, որի շուրջն էլ ժամանակի ընթացքում, հավանորեն կազմվել էր պարսիկ ազգաբնակչություն: Դրա մի մասը մնում է Շիրվանում և հիմնում մի փոքրիկ թագավորություն, որը երկար ժամանակ գոյություն պահպանեց: Նրա թագավորները կոչվում էին Շիրվանշահեր: Իսկ մյուս հատվածը գնաց դեպի արևմուտք, կանգ առավ Կուրի հովտի այն մասում, ուր Պարտավ քաղաքն էր գտնվում, բայց այդ երկրում տեղ չգտնելով իր համար, շարունակեց իր շարժումը Կուրի հովտով և վերջնականապես կանգ առավ Գարդման լեռնագավառի ստորոտում:

Գարդմանի հայ ազնվական տոհմիկ տերերը՝ Առանշահիկները, դուրս են մղվում դեպի հարևան լեռնային գավառներ: Երկու տոհմերի միջև հաստատվեց հին աշխարհի նվիրագործած արյան վրիժառությունը: Այդ մի դարավոր արյունահեղ պայքար էր, որն իր վերջնական լուծումն ստացավ 9-րդ դարում՝ Առանշահիկների հաղթությամբ:

Միհրանյան տոհմի փառքը զագաթնակետին հասցնողը քրիստոնեություն ընդունած Վարազ Գրիգոր իշխանի երկրորդ որդին էր՝ Ջվանշիրը:

Դառնալով Աղվանքի բանակի հրամանատար, նա միաժամանակ, դեռ հոր կենդանության օրոք, իր ձեռքն առավ ամբողջ երկրի կառավարությունը: Իր այդ գործերի համար երիտասարդ իշխանը ժողովրդական հերոս դարձավ:

Մովսես Կաղանկատվացին «Արևելքի իշխան» վեհ տիտղոսով է պսակում նրան՝ անվանելով իր տեր, թագավորների հավասար և թագավորի պատիվների արժանի:



Ջվանշիր իշխանը, չնայած իր ամբողջ մեծության, արաբական իշխանության հանդեպ իրեն այնպես է պահում, ինչպես Թեոդորոս Ռշտունին: Երբ Ջվանշիրի համար էլ աներկբայելի դարձավ, որ Բյուզանդական կայսրությունը շարունակ գնում է դեպի թուլացում, նա էլ, Թեոդորոս Ռշտունու նման, գնաց Դամասկոս՝ անձամբ տեսակցելու արաբ ամիրապետի հետ: Մուավիա խալիֆը «Արևելքի իշխանին» հանձնեց բոլոր արաբական հողերի կառավարումը մինչև Կովկասի մեծ լեռնաշղթան և մանավանդ հոն–խազարների հետ բարեկամական հարաբերությունների մշակումն ու պահպանումը:

Ողբերգական էր Ջվանշիր իշխանի վախճանը: Նա սպանվեց մի կազմակերպված խմբի ձեռքով: Երկիրը, Կաղանկատվացու պատմելով, մեծ սուգ արեց: Դավթակ անունով բանաստեղծը գրեց մի ողբ, որ նույնպես մնացել է Աղվանից աշխարհի պատմության մեջ:

Լեո. Հայոց պատմություն, հատ. Բ





18. ԻՍԼԱՄ

Իսլամի ծագումը



Գարրիել հրեշտակը և Աբրահամը
(պարսկական մանրանկար)

Իսլամը ծնունդ է առել Արաբական թերակղզում VII դարում: Արաբները սեմական ժողովուրդ են, ինչպես հրեաներն ու ասորիները: Աստվածաշնչում ասվում է, որ արաբների նախահայր Իսմայելը Աբրահամի և նրա աղախին Հագարի որդին էր: Աբրահամը իր կնոջ՝ Սառայի պահանջով վտարեց Հագարին և Իսմայելին: Նրանք մոլորվեցին անապատում, և միայն Աստծու հրեշտակը փրկեց նրանց՝ ցույց տալով աղբյուրի տեղը: Հետագայում, ըստ ավանդության, այդ նույն տեղում հիմնադրվեց Մեքքան՝ արաբների նշանավոր կրոնական կենտրոնը:

Իսլամի հիմնադիրը Մուհամմադն էր: Նա ծնվել է 570 թվականին Մեքքայում: Վաղ հասակում որբացած Մուհամմադը մեծանում է իր ազգականների մոտ, իսկ ավելի ուշ ստիպված էր չնչին վարձավճարով ուղտապահ և քարավանների ուղեկից լինել: Քսանհինգ տարեկանում Մուհամմադը ամուսնանում է Խադիջա անունով մի հարուստ կնոջ հետ: Ծանոթանալով Աստվածաշնչին, ինչպես նաև հրեական ու քրիստոնեական կրոններին՝ Մուհամմադն իրեն հռչակում է մարգարե և իր հասկացած ձևով 610 թվականից սկսում քարոզչությամբ զբաղվել՝ ստեղծելով մի նոր կրոն:

Մեքքայի մեծահարուստները զայրույթով ընդունեցին հեթանոսությունից հրաժարվելու և միասնական Աստծուն պաշտելու մասին Մուհամմադի քարոզչությունը: Հալածանքներ սկսվեցին ոչ միայն մարգարեի, այլև նրա տոհմակիցների դեմ: Մահացու վտանգն ստիպեց Մուհամմադին 622 թ. փախչել քաղաք: Այդ տարեթիվը համարվում է մուսուլմանական թվականության սկիզբը:



Աշտարակի մեծ ժամացույցը
փրի վրա
(արաբական ձեռագիր)



Իսլամի տարածումը և դավանանքը

Յասրիբ քաղաքում Մուհամմադը վերացրեց միջցեղային ընդհարումները և արյան վրեժի սովորույթը: Համայնքի կյանքը կարգավորվում էր գրեթե զինվորական կարգապահությամբ և հոգևոր առաջնորդին հնազանդվելով: Այստեղից էլ՝ «իսլամ» բառը, որը թարգմանաբար նշանակում է «հնազանդություն, ենթակայություն»: Մուհամմադի իսկական հետևորդ կամ «հավատարիմ» (մուսլիմ) կարող էին համարվել միայն նրանք, ովքեր պատրաստ էին հանուն նոր կրոնի հրաժարվել իրենց ցեղային պատկանելիությունից: Մուսուլմանությունը (մահմեդականությունը) դառնում էր այն միավորիչ ուժը, որի հիման վրա ձևավորվելու էր միասնական արաբ ժողովուրդը:



Մուհամմադի հեղինակությունը շուտով այնքան բարձրացավ, որ Յասրիբը վերանվանեցին «Մարգարեի քաղաք» կամ պարզապես «Քաղաք», արաբերեն՝ Մեդինա: Համատեղ աղոթելու համար այստեղ կառուցվեց առաջին մզկիթը:

630 թ. Մուհամմադին հպատակվեց նաև իր հայրենի քաղաքը՝ Մեքքան: Այստեղ նա կուռքերից մաքրեց Մեքքայի գլխավոր սրբավայրը՝ Կաաբան (արաբերեն՝ խորանարդ): Իբրև երկրպագության առարկա Կաաբայում պահպանվեց





Մուհամմադի համբարձումը

սև քարը, որը, համաձայն մահմեդականների պատկերացումների, Աստված է պարզել Ադամին: Սկզբուն իբրև թե այն մաքուր սպիտակ է եղել, իսկ հետո մարդկանց մեղքերի պատճառով սևացել է:

Մուհամմադի հաջորդները դուրս եկան Արաբական թերակղզուց և հսկայական տարածքներ նվաճեցին Չնդկաստանից մինչև Իսպանիա՝ ստեղծելով նոր աշխարհակալ պետություն՝ Արաբական խալիֆայությունը:

Մուհամմադի մահվանից (632 թ.) հետո նրա հետևորդները մարգարեի քարոզները հավաքեցին մի ժողովածուի մեջ, որը դարձավ մուսուլմանների սուրբ գիրքը՝ Ղուրանը (բառացի նշանակում է «բարձրաձայն ընթերցանություն»):

Իսլամի դավանանքի համաձայն՝ յուրաքանչյուր մուսուլման պետք է հավատա, որ Ալլահից բացի չկա ուրիշ աստված, և Մուհամմադը նրա մարգարեն է: Իսլամն ընդունում է, որ եղել են նաև ուրիշ մարգարեներ, ինչպես, օրինակ, Մովսեսը (Մուսա) և Հիսուսը (Իսա), բայց Մուհամմադը վերջինն է: Ըստ իսլամի՝ գոյություն ունեն նաև հրեշտակներ և ոգիներ: Աշխարհի վերջին օրը բոլորը՝ ողջերը և մեռածները, կստանան իրենց արժանի հատուցումը. բարեպաշտ մուսուլմանները կվայելեն դրախտի բարիքները, իսկ մեղավորներն ու անհավատները կտառապեն դժոխքում:

Պարզ ու հասկանալի են նաև իսլամի սովորութային պահանջները: Դրանք են՝ պարտադիր աղոթքներ, աղքատների օգտին կատարվող նվիրատվություններ, ամենամյա ուխտագնացություն Մեքքա, ինչն ամեն մի ուղղահավատ մահմեդական պետք է կատարի կյանքում առնվազն մեկ անգամ և այլն:



Խարանի վաճառականները և Ալին (պարսկական ձեռագիր)



Իսլամի հիմնական ուղղությունները

VII դարի սկզբներին Մուհամմադի մահից հետո իսլամը բաժանվեց երկու խոշոր ուղղությունների՝ **սուննիների** և **շիաների**:

Սուննի արաբներեն նշանակում է գործելակերպ, սովորություն: Սուննիները Ղուրանից բացի ընդունում են և Սուննան, որը Մուհամմադի գործունեության մասին բանավոր ավանդությունների ժողովածու է:

Ժամանակակից աշխարհում մուսուլմանների ճնշող մեծամասնությունը սուննիներ են: Սուննի են թուրքերը, արաբները և քրդերի մեծ մասը:

Շիա արաբներեն նշանակում է խումբ: Շիաների դավանանքը ձևավորվել է XII-XIII դարերում և մեծ տարածում գտել Պարսկաստանում:

Շիաները Ղուրանին ավելացրել են լրացուցիչ սուրահ:

Այս ուղղությունը ժամանակակից Իրանի Իսլամական Հանրապետության պետական կրոնն է: Շիաներ են նաև ադրբեջանցիները: Շիաները որոշ թիվ են կազմում նաև արաբների (Իրաք) ու Ռուսաստանի Դաշնությունում ապրող մուսուլմանների մեջ:





Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշենք

1. Որտե՞ղ և ե՞րբ է ծնունդ առել իսլամը:
2. Ո՞ր ժողովուրդներին են ազգակից արաբները:
3. Ի՞նչ ավանդություն գիտեք Մեքքայի հիմնադրման վերաբերյալ:
4. Ե՞րբ Մուհամմադը սկսեց նոր կրոնի քարոզչությունը, ո՞րն էր դրա հիմնական գաղափարը:
5. Ի՞նչը ստիպեց Մուհամմադին Մեքքայից փախչել Յասրիբ: Ի՞նչ է նշանավորում այդ փախուստի տարեթիվը: Ինչպե՞ս հետագայում վերանվանվեց Յասրիբը:
6. Ե՞րբ Մուհամմադը հպատակեցրեց Մեքքան: Ի՞նչ ձեռնարկեց նա առաջին հերթին դրանից հետո:
7. Ո՞ր գիրքն են անվանում Ղուրան: Ի՞նչ սկզբունքով է կազմված այն:
8. Ինչպիսի՞ սովորության պարտականություններ ունեն իսլամի հետևորդները:
9. Որո՞նք են իսլամի հիմնական ուղղությունները:

բ) Քննարկենք

1. Ինչո՞ւ, ձեր կարծիքով, Մեքքայի մեծահարուստները զայրույթով ընդունեցին Մուհամմադի կողմից նոր կրոնի քարոզչությունը:
2. Ո՞րն է, ձեր կարծիքով, իսլամի հիմնական գաղափարը:

գ) Հարստացնենք մեր բառապաշարը

Իսլամ
Մուսուլման, մահմեդական
Մեդինա
Կաաբա
Ղուրան



Լրացուցիչ նյութ

Մուսուլմանական տոներ

Մուսուլմանի համար ուրբաթը ամենշաբաթյա տոն է, որը սուրբ օր է համարվում: Մի շարք արաբական երկրներում այն պաշտոնապես կիրակի օր է: Ուրբաթ կեսօրին մզկիթներում մեծ ժամասացություն է լինում: Իսլամական ավանդությունը պատմում է, որ ուրբաթը մշտապես հաստատել է ինքը՝ Մուհամմադը: Համարվում է, որ նա և խալիֆ Ալիին ուրբաթ օրն են ծնվել և, վերջապես, այդ օրն է սկսվելու Ահեղ դատաստանը:

Իսլամում կան նաև Մուհամմադի և մյուս մարգարեների կյանքի հետ կապված այլ կրոնական տոնակատարություններ: Դրանցից ամենաընդունվածը «զոհաբերության տոնն» է (կուրբան-բայրամը): Կուրբան-բայրամը տոնվում է իբրև հանդիսավոր հիշատակություն, թե ինչպես Աստված պահանջեց Իբրահիմ (Աբրահամ) մարգարեին զոհաբերել իր որդուն՝ Իսմայելին: Ինչպես Աստվածաշնչում, այս մուսուլմանական ավանդության մեջ էլ Ալլահը խղճաց Իբրահիմին և Ջաբրահիլ հրեշտակի միջոցով Իսմայելի փոխարեն զոհաբերության գառնուկին ուղարկեց: Աստծու այդ ողորմածությունը նշվում է տոնակատարության սկզբում զոհ (կուրբան) մատուցելով: Սովորաբար դա լինում է գառ, կով կամ ուղտ: Ջոհաբերված կենդանու միսը բաժանվում է աղքատներին և օգտագործվում տոնական սեղանի համար: Կուրբան-բայրամի տոնը երեք օր է տևում: Տոնի օրերին բոլոր մզկիթներում հանդիսավոր ժամերգություն է լինում, մահմեդականները այցելում են մախմիների գերեզմաններ և միմյանց հյուր են գնում:





19. Ս. ՀՈՎՀԱՆ ՕԶՆԵՑԻՆ ԵՎ ՊԱՎԼԻԿՅԱՆ ԱՂԱՆԴԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Արաբական գերիշխանությունը և պավլիկյանները



Ս. Հովհաննես Գ Օձնեցի

Արաբական տիրապետությունը ծանր հարված հասցրեց Հայաստանի զարգացմանը: Երկրի հողը, ջուրն ու ընդերքը հայտարարվեցին խալիֆայության սեփականություն: Նախարարները զրկվեցին իրենց արտոնություններից: Ժողովրդի վրա ծանր հարկեր դրվեցին: Հարկատու դարձան բոլորը, նույնիսկ հոգևորականները, որոնք մինչ այդ հարկ չէին վճարում:

Ողջ հպատակ ժողովրդին արաբները բաժանել էին երկու խմբի՝ մահմեդականների և ոչ մահմեդականների՝ քրիստոնյաներ, հուդայականներ, զրադաշտականներ և այլն: Ոչ մահմեդականների հանդեպ կար ընդգծված ազգային-կրոնական խտրականություն, նրանք իրավունք չունեին մահմեդականների դեմ դատարանում վկայություն տալու, հասարակական վայրերում նրանց կողքին նստելու, մահմեդականի նման հագնվելու, ծի նստելու և այլն:

Արաբները հալածանքներ սկսեցին հայ հոգևորականության և եկեղեցու դեմ: Արգելվեցին մի շարք եկեղեցական արարողություններ, խաչերով ու սրբապատկերներով թափոռների երթը փողոցներով, եկեղեցում կոչնակներ հնչեցնելը, խաչեր կանգնեցնելը և այլն: Հետևողականորեն անցկացվում էր ժողովրդին

բռնությամբ հավատափոխ անելու քաղաքականություն: Արաբների հարկային ու կրոնական դաժան քաղաքականության և այլ անօրինականությունների հետևանքով VIII դարի սկզբներից սկսած հայությունը բազմիցս ապստամբել է խալիֆայության դեմ: Հայոց եկեղեցին այդ ընթացքում մշտապես նախարարների ու ժողովրդի կողքին է եղել:

Այս ծանր ժամանակաշրջանում հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու համար նոր մտահոգության առարկա է դառնում VII դարի կեսերին Հայաստանում որոշ տարածում գտած պավլիկյան աղանդավորական շարժումը: Այն առաջացել է ավելի վաղ Արևմտյան Հայաստանի Մանանադի գավառում և իր



անվանումը ստացել հիմնադրի՝ Պողոսի (Պաղոս) անունից: Հայերից բացի, շարժմանը մասնակցում էին նաև այլ ժողովուրդների ներկայացուցիչներ, հույներ, ասորիներ, հրեաներ և նույնիսկ արաբներ: Պավլիկյանների կենտրոնը Տևրիկ քաղաքն էր:

Պավլիկյաններն ունեին իրենց զինված ուժերը և շատ հաճախ դաշնակցում էին արաբների հետ: Արաբական իշխանությունները չէին հալածում պավլիկյաններին, ավելին՝ խրախուսում էին, քանզի այդ **շարժումը խարխուլում էր եկեղեցու և ազգի միասնության հիմքը**: Իսկ երբեմն էլ նրանց ուժերն օգտագործում էին Բյուզանդական կայսրության դեմ պայքարում:

Պավլիկյանները չէին ընդունում, որ Քրիստոս ծնվել է Մարիամ Աստվածածնից, այսինքն՝ ժխտում էին նրա մարդկային էությունը: Դրանով իսկ նրանք մերժում էին խաչի երկրպագությունը, Ս. Պատարագն ու եկեղեցական այլ արարողություններ: Այս աղանդը ժխտում էր Հին Կտակարանը, ինչպես նաև եկեղեցական աստիճաններն ու կոչումները:



Ս. Հովհաննես Գ Օձնեցի

Պավլիկյանների և նրանց ուսմունքի դեմ սկսում է պայքարել ժամանակի մեծագույն աստվածաբան և իմաստասեր, VII դարի ամենահայտնի կաթողիկոսներից մեկը՝ Ս. Հովհաննես Գ Օձնեցին (717-728):

719 թ. նրա նախածեռնությամբ Դվինում եկեղեցական ժողով է գումարվում, որտեղ հատուկ կանոն է ընդունվում պավլիկյանների դեմ: Ըստ այդ կանոնի՝ արգելվում էր պավլիկյաններին օթևան տալ, խոսել և ճանապարհ գնալ նրանց հետ: Ս. Հովհան Օձնեցին պավլիկյանների դեմ հանդես է գալիս նաև մի աստվածաբանական ճառով՝ հերքելով նրանց ուսմունքի հիմնական կետերը:

VIII դարի վերջերից սկսած՝ պավլիկյան շարժման դեմ պայքարը գլխավորում էին բյուզանդական կայսրերը: Այս պայքարում IX դարի կեսերին հատկապես աչքի է ընկնում թեոդորա Մամիկոնյան կայսրուհին: IX դարի երկրորդ կեսին պավլիկյաններին ամենամեծ հարվածն է հասցնում և կայսրության սահմաններից դուրս մղում հայազգի Բարսեղ I Մակեդոնացի կայսրը: Գրավվում և ավերվում է նրանց մայրաքաղաք Տևրիկը: Դրանից հետո բյուզանդական իշխանությունները պավլիկյաններին զաղթեցնում են Թրակիա (Բուլղարիա):



Հարցեր և առաջադրանքներ

ա) Հիշեճք

1. Ինչպիսի՞ քայլեր էին ձեռնարկում արաբներն իրենց տիրապետությունն ամրապնդելու համար:
3. Ի՞նչ խմբերի էր բաժանված խալիֆայության հպատակ ժողովուրդը:
4. Ինչպիսի՞ քաղաքականություն էին վարում արաբները հայ հոգևորականության և եկեղեցու նկատմամբ:
5. Ե՞րբ և որտե՞ղ է առաջացել պավլիկյան շարժումը: Ո՞րն էր նրանց կենտրոնը:
6. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Հայոց եկեղեցին պավլիկյանների դեմ Հովհաննես Գ Օձնեցի կաթողիկոսի օրոք:
8. Բյուզանդական ո՞ր կայսեր օրոք վճռական հարված հասցվեց պավլիկյաններին: Ո՞ւր բռնագաղթվեցին աղանդավորները դրանից հետո:

բ) Քննարկեճք

1. Համառոտ ներկայացրե՛ք պավլիկյանների գաղափարները: Ի՞նչն էին նրանք մերժում և ի՞նչ էին ընդունում:
2. Արաբական իշխանություններն ինչո՞ւ էին հաճախ խրախուսում պավլիկյաններին:





Լրացուցիչ նյութ

Ս.Յովհաննես Գ Օձնեցու այցելությունը

Հայոց Յովհաննես Գ Օձնեցի կաթողիկոսը շատ գեղեցիկ տեսք ուներ, մշտապես ոսկեհուռ զգեստներ էր հագնում և փառահեղ մորուքի վրա ոսկու փոշի էր շաղ տալիս: Արաբական Օմար խալիֆը, լսելով նրա գեղեցկության և իմաստության համբավը, նրան հրավիրում է իր մոտ՝ Դամասկոս: Տեսնելով հայոց կաթողիկոսի շքեղ տեսքը՝ արաբական խալիֆը զարմանում է և ասում. «Ձեր Տեր Հիսուս Քրիստոս աղքատների հետ էր ապրում և համեստ զգեստներ էր կրում, իսկ դու շքեղ հագուստներով ու ոսկեզօծ մորուքով ես ներկայացել»: Այդ ժամանակ Յովհաննես Օձնեցի հայրապետը խալիֆին խնդրում է դուրս հանել իր պալատականներին և երբ մնում են մեռակ, հանում է իր շքեղ զգեստներն ու ցույց տալիս դրանց տակից հագած վանական զգեստներն ու քուրճը: Տեսածից տպավորված խալիֆը մեծարում է հայոց կաթողիկոսին և արտոնություններ տալիս հայ ժողովրդին ու եկեղեցուն՝ ազատորեն քրիստոնեություն դավանելու և հարկերից ազատվելու:

*Յովհաննես Դրասխանակերտցի.
Պատմություն հայոց*





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

Գլուխ I

ՆԱՆԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐՈՆՆԵՐ

- 1. Հին ՀԱՅՈՑ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԸ 5
- 2. Հին ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՎ ԶՐԱԴԱՇՏԱԿԱՆ ԿՐՈՆՆԵՐԸ 10
- 3. ՀՈՒՆԱ-ՀՈՈՍԵԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆԸ ԵՎ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԿՐՈՆԸ 14

Գլուխ II

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ

- 4. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 19
- 5. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ: ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՄԱՎՈՐԻՉՆԵՐԸ. 23
- 6. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ I - III ԴԱՐԵՐՈՒՄ 27

Գլուխ III

ՀԱՅՈՑ ԴԱՐՉԸ

- 7. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀՈՉԱՎՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ 32
- 8. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՄԱՎՈՐԻՉԸ ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ՀԱՅՐԱՊԵՏ 38



Գլուխ IV

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՁԵՎԱԿՈՐՈՒՄՆ ՈՒ ԱՍՐԱՊՆԴՈՒՄԸ

9. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՅՑԻ ՁԵՎԱԿՈՐՈՒՄԸ43

10. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՄԱԿՈՐԶԻ ՀԱՋՈՐԴՆԵՐԻ ՕՐՈՔ 49

11. ՆԵՐՍԵՍ ՄԵԾ: ԱՇՏԻՇԱՏԻ ԺՈՂՈՎԸ53

12. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ - ԵԿԵՂԵՑԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ IV ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ. .58

13. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՍՐԱՊՆԴՈՒՄԸ: ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ ԵՎ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ 62

14. ՏԻԵՁԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ72

Գլուխ V

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ V-IX ԴԱՐԵՐՈՒՄ

15. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՎԱՏԻ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆ77

16. ՔԱՂԿԵՂՈՆԻ ԺՈՂՈՎԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ 85

17. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐԱՑ ԵՎ ԱՂՎԱՆԻՑ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ V-VII ԴԱՐԵՐՈՒՄ.91

18. ԻՍԼԱՄ98

19. Ս. ՀՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻՆ ԵՎ ՊԱՎԼԻԿՅԱՆ ԱՂԱՆԴԱԿՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ . . .104







Հայոց եկեղեցու պատմություն

Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի
դասագիրք

Լեզվական խմբագիր՝ Ա. Ոսկանյան
Սրբագրիչ՝ Ա. Պապյան
Գեղարվեստական և տեխնիկական խմբագիր՝
Մ. Պետրոսյան
Համակարգչային շարվածքը՝
Հ. Հովհաննիսյանի
Ա. Միրզաթունյանի

Չափսը՝ 70x100 ¹/₁₆
Ծավալը՝ 7 տպ. մանուկ
Պատվեր՝ 1366: Տպաքանակը՝ 37500:

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ տպարանում